



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 99 2017

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մելքոնյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Գևորգ Բաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Միեր Հակոբյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Վահրամ Շահինյան** Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրոյթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152  
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 12.06.2017թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 5 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հանդիպում ՀՀ զինվորական դատախազությունում.....	3
ՀՀ զինվորական դատախազն աշխատանքային այցով եղել է Երևանի, Շիրակի, Լոռու, Սևանի կայազորների զինվորական դատախազություններում.....	3

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ներսես Զեյնալյան Մեղքի ձևերի սահմանազատում.....	5
Նորայր Սիմոնյան Պրոբացիայի ծառայության ներդրման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում ....	10
Վարդգես Սարգսյան Անձի անվտանգության ապահովումը որպես քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առաջնահերթություն.....	15

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անուշ Մարգարյան Անձի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության համատեքստում.....	20
Արման Ստեփանյան Սահմանադրականության հաստատման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում.....	29
Արթուր Սիմոնյան Քաղաքական կոալիցիաների առանձնահատկությունները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում.....	35
Արտաշես Խալաթյան Հայաստանի կուսակցական համակարգի կայացման հիմնախնդիրը նոր սահմանադրական իրականության պայմաններում.....	39
Լուսինե Բարսեղյան Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկությունները և պետության սահմանադրական կառուցմանը ներկայացվող հատուկ պահանջները.....	46
Նարեկ Հակոբյան Իրավունքում բացերի լրացման, հաղթահարման և վերացման հասկացությունը.....	53
Մհեր Վասիլյան Պետությունների տիպաբանության ժամանակակից հայեցակարգերը.....	58

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նարեկ Աբգարյան Մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի և վարձկանների իրավական կարգավիճակների հարաբերակցությունը Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում.....	63
Լիանա Մալխասյան Իրավունքի սկզբունքների դասակարգման դասական և արդիական մոտեցումների համեմատական վերլուծություն.....	66

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts.....	69
--	----

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	80
---	----

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 11-ին ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանն ընդունել է Եվրոպայի



խորհրդի գրասենյակի ներկայացուցիչներին և փորձագիտական խմբին:

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները ՀՀ զինվորական դատախազին են ներկայացրել Զինված ուժերում մարդու իրավունքերի՝ Եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդման ուղղությամբ և մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրության կատարելագործմանն ուղղված զեկույցի նախագիծը:

Կողմերը քննարկել են զեկույցում մատնանշված խնդիրները, կարևորել դրանց վերաբերյալ պարբերական քննարկումները:

Հանդիպմանը քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր ևս:

## ՀՀ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՎ ԵՂԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ, ՇԻՐԱԿԻ, ԼՈՌՈՒ, ՍԵՎԱՆԻ ԿԱՅԱՉՈՐՆԵՐԻ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը խորհրդակցություններ է անցկացրել Երևանի, Շիրակի, Լոռու, Սևանի կայազորների զինվորական դատախազություններում: Խորհրդակցությանը ներկա են եղել վերոնշյալ մարզերի իրավապահ մյուս համակարգերի պատասխանատուները:

Խորհրդակցությունների ընթացքում կայազորների զինվորական դատախազները զեկույցել են հանցավորության վիճակի, շարժընթացի, ինչպես նաև հանցագործությունների բացահայտման վերաբերյալ տվյալների մասին, ներկայացրել դրանց բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքը:

ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը, անդրադառնալով պետության սեփականության դեմ ուղղված հանցատեսակների բացահայտման ցուցանիշներին, հանձնարարել է առավել հետևողական լինել դրանց կանխման ուղղությամբ կատարվող միջոցառումների, հատկապես՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերա-

բերյալ քրեական գործերի քննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման նկատմամբ:



Զինդատախազի խոսքով՝ այդ հանցագործություններից չբացահայտվածներն առանձին դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կատարման հապաղումների, դրանք չալանա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

վորված և չհամակարգված իրականացնելու հետևանք են:

Անդրադառնալով հանցավորության կանխման խնդիրներին՝ Վահե Հարությունյանը կարևորել է յուրաքանչյուր դեպքում հանցագործության պատճառները և դրան նպաստող պայմանները քրեական գործի նախաքննությամբ պարզելու, դրանք վերացնելու ուղղությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Զինվորական դատախազը հանձնարարել է ակտիվացնել ջանքերը՝ քրեական վարույթի շրջանակներում մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու, դրանց անհիմն սահմանափակումները բացառելու ուղղությամբ՝ այդ նպատակով կիրառելով դատա-

խազական ներգործության բոլոր միջոցները՝ երաշխավորելով իրավական լուծումների միասնականությունն ու որոշակիությունը:

Կատարած աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ զինվորական դատախազը կարևորել է իրավապահ մարմինների աշխատանքի համակարգվածության, միասնականության, կանխատեսելիության և հրապարակայնության ապահովման անհրաժեշտությունը:

Ամփոփելով արդյունքները՝ ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը տվել է մի շարք հանձնարարականներ:

Խորհրդակցությունները կշարունակվեն ՀՀ զինվորական դատախազության բոլոր կայազորներում:



**ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի քրեաբանական ֆակուլտետի ուսանող

**ՄԵՂՔԻ ԶԵՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ**

Հանցակազմի բոլոր տարրերը՝ իրենց հատկանիշներով, գտնվում են օրգանական միասնության մեջ, և դրանց բոլորի ուսումնասիրությունն է թույլ տալիս հստակ պատկերացում կազմել հանցագործության մասին: Քանի որ գործող քրեաիրավական օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ քրեաիրավական կարգավորումների հիմքում էապես դրված է մեղքի նշանակությունը, այդ իսկ պատճառով հատկապես կարևոր է սուբյեկտիվ կողմի ճիշտ գնահատումը հանցագործությունը որակելիս: Ի վերջո՝ քրեաիրավական իմաստով մեղքը հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, որը դրսևորվում է դիտավորությամբ և անզգուշությամբ:

Մեղքի ձևերի սահմանազատման խնդրի լուծումը կարևոր նախապայման է հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերհանման համար: Հետևաբար՝ ըստ մեղքի հոգեբանական տեսության, որի վրա էլ հիմնված է ՀՀ քրեաիրավական օրենսդրությունը, լինելով անձի հոգեբանական վերաբերմունքը արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ, մեղքի ձևի դրսևորման ճիշտ որոշումը հանգեցնում է արարքին համապատասխան քրեաիրավական գնահատական տալուն՝ պայմանավորելով քրեաիրավական այլ ինստիտուտների աշխատանքը:

Տարբեր ժամանակաշրջաններում մեղքի ձևերը և դրանց սահմանազատումն ընկալվել է յուրովի, ինչն էլ թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ շրջանի իրավամտաձողության առանձնահատկությունների մասին:

Հռոմեական իրավունքը մեղքի ձևերը դիտարկում էր ըստ դիտավորության (dolus) և անփութության կամ անզգուշության (culpa): Դիտվում էր, որ առաջինի դեպքում մեղավորը կանխատեսում է վարքագծի հետևանքը և ցանկանում դրա վրա հասնելը: Երկրորդը տար-

բերակվում էր երկու աստիճանի՝ կոպիտ անզգուշություն (culpa lata) և մեղմ անփութություն (culpa levis): Սրանց սահմանազատման հիմքում ընկած էին ոչ թե վերաբերմունքն արարքի և հետևանքի նկատմամբ, այլ՝ այնպիսի վերացական չափանիշներ, ինչպիսին է, օրինակ՝ մարդու բնութագիրը: Հարկ է նաև նշել, որ հռոմեական քրեական իրավունքը պնդում էր, որ հանցագործությունը կարող է կատարվել միայն արարքի ակտիվ դրսևորմամբ՝ գործողությամբ:

Հռոմեական իրավունքը տարբերում էր նաև մեղքի երրորդ ձևը՝ կոնկրետացված մեղքը (culpa-in-concreto), որի դրսևորումը որոշվում էր, համեմատելով անձի վերաբերմունքն իր և ուրիշների վարքագծի նկատմամբ:<sup>1</sup>

Հռոմեական իրավական միտքը նախատեսում էր նաև կազուսների առկայությունը՝ առանց մեղքի վնաս պատճառելը, որի համար պատասխանատվություն վրա չէր հասնում:<sup>2</sup>

Ժամանակակից քրեական իրավունքում, մեղքի համապատասխան ձևի դրսևորումը նշելով, հնարավոր է դառնում այս կամ այն իրավիճակում պարզել որևէ հանցակազմի առկայությունը կամ հանցագործության կատարման ձևը, քանզի այս և այլ բազմաթիվ քրեաիրավական ինստիտուտներում մեղքի ձևն ունի առանցքային նշանակություն: Անխուսափելիորեն պետք է նշել, որ իրավական պրակտիկայում առկա են դեպքեր, երբ իրավիճակի բարդության և օբյեկտիվ կողմից նույնական լինելու պատճառով մեծ խնդիր է դառնում մեղքի տարբեր ձևերի սահմանազատումը: Վերջինիս միջոցով որոշակիություն է ներմուծվում քրեաիրավական այնպիսի կարևոր նշանակություն ունեցող ինստիտուտներում, ինչպիսիք են հանցագործությունից կամովին հրաժարումը կամ հանցակցությունը:

Մեղքի բովանդակությունը կազմող հիմնական տարրերն են գիտակցությունը և կամքը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>1</sup> Տե՛ս Новицкий И. Б.– Римское право, 7-е издание, Москва, 2002.  
<sup>2</sup> Տե՛ս Գ. Սաֆարյան, Ա. Եսայան.– Հռոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2012, էջ 52:

Այս երկու հասկացությունը դիտարկելով քրեաիրավական իմաստով՝ բացահայտում ենք մեղքի տարբեր դրսևորումները, որոնց բնութագրական են օրենքով սահմանված գիտակցական և կամային տարբեր գործընթացներ: Այսպիսով՝ դիտավորությամբ արտահայտված մեղքի ձևի դեպքում նշում ենք, որ անձը գիտակցում, նախատեսում է արարքի և դրա հետևանքների հանրային վտանգավորությունը, ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս հետևանքների առաջացումը, իսկ անզգուշության դեպքում՝ նախատեսում է, սակայն անհիմն համոզված է, որ հետևանքները կկանխվեն, կամ չի նախատեսում, սակայն պարտավոր էր անել դա: Վերը նշված նկարագրերը միասնական համեմատության մեջ դնելիս ակնհայտ են դառնում աննշան տարբերությունները, որոնք գործնական որակումներում կարող են տարբեր խնդիրներ առաջացնել: Հարկ է անդրադառնալ մեղքի ձևերի իրավական նշանակությանը և հետևյալ կետերով փաստել, որ մեղքի ձևերը՝

- սահմանազատում են հանցավոր վարքագիծը ոչ հանցավորից,
- նախանշում են հանցագործության որակումը,
- հանրային վտանգավորության աստիճանի հետ ընկած են հանցագործությունների տեսակավորման հիմքում (ծանր և առանձնապես ծանր են համարվում դիտավորությամբ կատարված հանցագործությունները)<sup>3</sup>,
- ուղենիշ են ազատագրկման ձևով պատժի կրման պայմանները որոշելիս,
- օրգանական կապի մեջ են այլ քրեաիրավական ինստիտուտների հետ, ինչպիսիք են հանցագործության փուլերը, հանցակցությունը, հանցագործությունների բազմակիությունը և արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները,
- դիտավորությամբ արտահայտված լի-

նելու դեպքում ուսումնասիրվում են նաև հանցագործության նպատակն ու շարժառիթները, մինչդեռ անզգուշության դեպքում նման պարտականություն դրված չէ:<sup>4</sup>

Գնահատելով բոլոր վերը նշվածների կարևորությունը, այդուհանդերձ՝ տվյալ թեմայի շրջանակներում առաջնային կարևորություն ունի կապն այլ քրեաիրավական ինստիտուտների հետ՝ ընդհանրապես սուբյեկտիվ կողմի վերհանման համատեքստում, ինչպես նաև կոնկրետ թիրախային է անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության որակման խնդիրը՝ դրանց բովանդակային տարանջատման որոշակի սահմանային բնույթի պատճառով:

### **Սուբյեկտիվ կողմի վերհանումը հանցափորձի ընթացքում ավարտված և չավարտված հանցափորձի համատեքստում**

Այս երկուսի տարբերությունը դրանց սուբյեկտիվ բովանդակության մեջ է: Հենց նույն մեղքի բովանդակությունը կազմող գիտակցական ու կամային ասպեկտների միջոցով են տարբերակվում ավարտված և չավարտված հանցափորձերը:

Ավարտված հանցափորձի դեպքում հանցավորը գիտակցում է, որ իրենից կախված ամեն ինչ արել է հանցագործությունն ավարտին հասցնելու համար, սակայն դա տեղի չի ունեցել իր կամքից անկախ: Օրինակ՝ հանցագործը կյանքից զրկելու դիտավորությամբ կրակում է անձի վրա, սակայն վրիպում է՝ չդիպչելով կենսական կարևորություն ունեցող օրգանի, ինչից հետո բռնվում է: Այստեղ հանցագործը գիտակցում է, որ իրենից կախված արարքների շրջանն իրականացրել է՝ եզրափակելով կրակոցով, սակայն, վրիպելով և բռնվելով, հանցանքն ավարտին չի հասցնում՝ իր կամքից անկախ հանգամանքների հետևանքով: Այսպիսով՝ եթե բացակայում է հանցավորի կող-

<sup>3</sup> Տե՛ս Քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որտեղ բացակայում է այն դրույթը, որով ներկայիս օրենսգիրքը հանցագործության տեսակները սահմանելիս առանձին նշում է նաև արտահայտված մեղքի ձևը, այդ թվում նաև այն, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կատարվում են միայն դիտավորությամբ: Չանդրադառնալով փոփոխության իրավաչափությանը՝ պետք է փաստել, որ Նախագծի համատեքստում տվյալ կետը կորցնում է իր նշանակությունը:

<sup>4</sup> Տե՛ս Н. И. Коржанский, В. Г. Павлов, А. И. Парог.– Энциклопедия Уголовного права. Том 4. Издание профессора Малинина – Санкт-Петербург, 2005, с. 648-650.



մից գիտակցումը՝ իրենից կախված ամեն ինչն անելու, կամ անձը հանցանքի կատարումն ավարտին չի հասցնում իր կամքով (հանցագործությունից կամովին հրաժարում), ապա այստեղ չի կարող խոսք լինել ավարտված հանցափորձի մասին:

Չավարտված հանցափորձի դեպքում ունենք մի, բայց հիմնական տարրերից մեկի բովանդակային փոփոխություն՝ այն է, որ հանցավորը պետք է գիտակցի, որ իրենից կախված ամեն ինչ չի արել հանցանքի կատարման համար, և կրկին կամային առումով կատարումն ընդհատվել է՝ իր կամքից անկախ: Օրինակ՝ հանցագործը կյանքից զրկելու դիտավորությամբ ցանկանում է կրակել անձի վրա, սակայն բռնվում է ձգանը քաշելու պահին: Տվյալ դեպքում նա չի էլ հասցնում եզրափակել անհրաժեշտ արարքների շրջանը՝ ձգանը քաշելիս բռնվելով և հանցանքն ավարտին չհասցնելով՝ իր կամքից անկախ հանգամանքների հետևանքով:

Սուբյեկտիվ կողմի և համապատասխան մեղքի ձևի դրսևորման որոշակիությունը պարզաբանելը կարևոր գործնական նշանակություն ունի նաև այն նպատակով, որ դրանով որոշվում է նաև հանցանքի հանրային վտանգավորությունը: Սա, իր հերթին, համակցությամբ արտահայտվում է մեղքի ձևերի իրավական նշանակության բովանդակության մեջ: Հենց սա էլ հաշվի առնելով՝ օրենսդիրը սահմանել է, որ՝ «չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել<sup>5</sup>»:

### Անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության սահմանազատումը

Տվյալ աշխատության շրջանակներում հիմնական շեշտադրումն արվում է անուղղակի դի-

տավորության և հանցավոր ինքնավստահության սահմանազատման վրա: Մեղքի այս երկու ձևով կատարված հանցագործությունները գործնականում որակվելիս առաջացնում են տարբեր խնդրահարույց իրավիճակներ:

«Հ քրեական օրենսգիրքը սահմանում է մեղքի դրսևորման ձևերը, մասնավորապես՝ նշելով. «... Հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախապես էլ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք...»<sup>6</sup>: Անուղղակի դիտավորության դեպքում վրա հասած հետևանքները կատարողի նպատակը չեն, եթե իրավիճակը համակողմանիորեն ուսումնասիրենք՝ դիտարկելով նաև սուբյեկտիվ կողմի ֆակտուալ հատկանիշը: Արարքի նպատակը կարող է լինել լրիվ այլ բնույթի, այդ թվում նաև՝ առանց որևէ հանրային վտանգավորության: Կատարողը գիտակցում է, որ իր նպատակին հասնելիս կարող են առաջանալ հանրորեն վտանգավոր հետևանքներ, և շարունակում է ձգտել դրան: Սրանով էլ արտահայտվում են անուղղակի դիտավորության գիտակցական և կամային բաղադրատարրերը, ինչով հստակ ուրվագծվում է ցանկության բացակայությունը, սակայն, միաժամանակ՝ հետևանքի վրա հասնելու թողտվությունը: Այնուամենայնիվ, օբյեկտիվորեն պետք է նշել, որ ցանկությունը բնութագրում է ոչ թե կամքը, այլ՝ արարքի դրդապատճառը<sup>7</sup>:

Քրեական իրավունքի տեսության մեջ, անուղղակի դիտավորության հասկացության հետ մեկտեղ, սահմանվում է նաև հստակ վերաբերմունքը հետևանքների առաջացման նկատմամբ՝ անտարբերությամբ արտահայտված: Այս դրույթն ամրագրված է տարբեր երկրների քրեական օրենքներում, ինչպես օրինակ՝ ՌԴ-ում, որտեղ նշում են, որ՝ «...անձը գիտակցաբար թույլ է տալիս հետևանքների առաջացումը կամ դրսևորում է անտարբերություն»<sup>8</sup>: Հայեցակարգային

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 65, մաս 1, ՀՕ-528-Ն, 2003թ.:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 29, մաս 3, ՀՕ-528-Ն, 2003թ.:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, 5.5 կետ, Երևան, 2014թ.:

<sup>8</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ, статья 25, часть 3, №63-ФЗ, 1996г.

դրույթների ազդեցությամբ քրեական նոր օրենսգրքի նախագծում անուղղակի դիտավորություն հասկացության սահմանումն արմատապես փոխված է: Այդտեղ ներառված է ինչպես վերը նշված դրույթը, այնպես էլ հաստատապես շեշտը դրված է նպատակի ասպեկտի վրա: Մասնավորապես՝ քրեական նոր օրենսգրքի նախագծի 27-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է անուղղակի դիտավորությունը, նշում է. «...*Հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը նրա նպատակը չէ, այնուամենայնիվ, կատարում է դա:...*»: Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «...*Եթե օրենքը հանցագործության ավարտը կապում է վրանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե հանցակազմի հատկանիշ համարվող հետևանքները անձի նպատակը չեն եղել, սակայն նա նախատեսել է այդ հետևանքների առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ դրանք կառաջանան, թե ոչ:...*»:<sup>9</sup>

«Հ քրեական օրենսգրքը, սահմանելով անզգուշության դրսևորում հանդիսացող հանցավոր ինքնավստահությունը, նշում է. «...*Հանցանքը համարվում է ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն...*»:<sup>10</sup> Դիտարկելով այս սահմանումը՝ կարելի է անդրադառնալ հետևյալ հանգամանքներին. առաջինը՝ գիտակցական տարրի առկայության ակնհայտ շեշտադրումը, երկրորդը՝ «հույս ունենալ»-ի նպատակահարմարությունը, և վերջապես՝ հետևանքների վրա հասնելը:

Գիտակցական տեսանկյունի մասին մանրամասն՝ հաջորդիվ, իսկ առաջ քաշված կետե-

րից երկրորդի վերաբերյալ պետք է պնդել, որ օգտագործված արտահայտությունը չի համապատասխանում հանցավոր ինքնավստահության բովանդակությանը և ամբողջապես չի արտահայտում դա, քանի որ գլխավոր հատկանիշներից է անձի *վստահ լինելը* հետևանքների կանխման մասին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նշված արտահայտության փոխարինումը համոզմունք և վստահություն արտահայտող մեկով: Այս մոտեցումն ամրագրվել է նաև քրեական նոր օրենսգրքի հայեցակարգով:<sup>11</sup>

Ներկայիս կարգավորման եզրափակիչ մասը, որտեղ նշվում է հետևանքների կանխման մասին, նույնպես ամբողջապես չի արտահայտում հանցավոր ինքնավստահության բովանդակությունը: Այդ ասելով, տառացի մեկնաբանման դեպքում, կարելի է հասկանալ, որ տեղի է ունենում նաև հետևանքի վրա չհասնելուն ուղղված գործողություն, և առկա է մի ակտիվ վիճակ, որն էլ հենց պետք է պայմանավորի հետևանքի վրա չհասնելը: Այդուհանդերձ՝ պետք է հաշվի առնել, որ հնարավոր է իրավիճակ, երբ հետևանքը կարող է վրա չհասնել առանց որևէ արտաքին միջամտության:

Ինչ վերաբերում է մեղքի դրսևորման այս երկու ձևում առկա բովանդակային տարրերի նույնականությանը՝ կարծում եմ, որ կարելի է փաստել հետևյալը: Երկու դեպքում էլ հանցավորը նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, միայն թե՛ այն տարբերությամբ, որ անուղղակի դիտավորության դեպքում նախատեսվում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման *իրական* հնարավորությունը կոնկրետ դեպքում և վնաս հասցնելը տվյալ արարքով, տվյալ հանգամանքների շրջանակներում, իսկ հանցավոր ինքնավստահության դրսևորման դեպքում մեղավորը նախատեսում է արարքի վտանգավորության *վերացական* հնարավորությունը:<sup>12</sup> Այլ կերպ ասած՝ հանցավորը գիտակցում է, որ մեկ այլ պայմաններում և այլ

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ հոդված 27, մաս 4 և 6 (նախագիծը 01.06.2015թ. դրությամբ):

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը, հոդված 30, մաս 2, ՀՕ-528-Ն, 2003թ.:

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, 5.6 կետ, Երևան, 2014թ.:

<sup>12</sup> Տե՛ս Волженкин Б. В. Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации, отв. ред. В. М. Лебедев (председатель Верховного суда РФ) – Верховный Суд Российской Федерации, издательство Юрайт, 7-е издание, Москва, 2007, с. 84.



անձի կողմից նույնական արարքի կատարումը կհանգեցնի հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացմանը, սակայն իր դեպքում նա հույս ունի խուսափել դրանցից: Այս մեկնաբանմամբ՝ հետևանքների առաջացումից խուսափելը պետք է տեղի ունենա որոշակի գործոնների ազդեցությամբ: Այսինքն՝ կատարողը հույս է ունենում խուսափելու ոչ թե հենց այնպես, պատահաբար, այլ հիմնվելով իր կողմից նկատի ունեցած տարբեր հանգամանքների վրա, որոնք, պետք է պարզվի՝ հիմնավոր չեն:

Հարկ է մանրամասն անդրադառնալ հանցավոր ինքնավստահության գիտակցական հատկանիշին: Քանի որ մեղքի այս ձևը սահմանելիս հիմնական շեշտադրումն արվում է հետևանքները նախատեսելու վրա, ուստի մի շարք քրեագետներ պնդում են, որ մեղքի այս ձևի դրսևորման դեպքում գիտակցական մասը բացակայում է, և անձը չի գիտակցում իր արարքի հանրային վտանգավորությունը: «Քանի որ անձը հույս է ունենում կանխելու իր արարքի հանրորեն վտանգավոր հետևանքները, արարքի վտանգավորության գիտակցումը չեզոքացվում է<sup>13</sup>»: Կարծում եմ՝ ակնհայտ է, որ հետևանքները կանխելու կամ դրանց վրա չհասնելու համոզմունքը բնավ չի վկայում, որ անձը կարող է չգիտակցել դրա հանրային վտանգավորությունը, հետևաբար՝ խոսք անգամ չի կարող լինել որևէ գործոնի կողմից գիտակցական տեսանկյունի չեզոքացման մասին: Այն հանգամանքը, որ անձը որևէ կերպ կարող է բացառել վտանգավոր հետևանքի առաջացումը, չի կարող նշանակել, որ նա չի գիտակցում թեկուզ վերացական, սակայն վրա հասնելու հնարավորությունը, ի վերջո՝ նաև հենց առաջացման բացառումն էլ հիմնված է դրա գիտակցման հանգամանքի վրա:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գաբուզյանն արդարացիորեն նշում է, որ ինքնավստահությունը կապված է հասարակական կյանքի տարբեր ոլորտների անվտանգության կանոնների խախտման հետ, ըստ այդմ՝ անձն առավելապես գիտակցում է իր արարքի բացասական նշանակությունը հա-

սարակության համար:<sup>14</sup> Կարծում եմ՝ ներկայացված փաստարկների համատեքստում ակնհայտ և անհերքելի է գիտակցական տեսանկյունի առկայությունը հանցավոր ինքնավստահության բովանդակությունը կազմող տարրերի շարքում: Այս հանգամանքն էլ ավելի է մոտեցնում դրա սահմաններն անուղղակի դիտավորության հետ:

Գիտակցական հատկանիշների նույնականությանը հակառակ՝ մեղքի այս երկու ձևում ունենք ակնհայտ տարբերություն կամային հատկանիշի տեսանկյունից: Սա էլ առավելապես հնարավորություն է տալիս դրանց արդյունավետ տարանջատման համար: Իսկ տարբերությունը հետևյալն է. եթե անուղղակի դիտավորության դեպքում անձը չի ցանկանում վտանգավոր հետևանքների առաջանալը, սակայն գիտակցաբար թույլ է տալիս դա, ապա մյուս դեպքում անձը ոչ միայն չի ցանկանում հետևանքի վրա հասնելը, այլ նաև հույս է ունենում, որ դա կկանխվի՝ չնայած օբյեկտիվորեն բավարար հիմքերի բացակայության:

Այսպիսով՝ դիտարկելով տեսակետների հակադրությունները գիտակցական տարրի առկայության շուրջ՝ հատկապես պետք է պնդել հանցավոր ինքնավստահության դրսևորման դեպքում դրա առկայությունը: Չնայած հակառակը նշելը թույլ կտա տեսական մակարդակում հստակ տարանջատում մտցնել անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության միջև, այնուամենայնիվ, դա կառուցված կլինի օբյեկտիվորեն սխալ հիմքերի վրա, ինչը նոր և էլ ավելի լուրջ խնդիրներ կառաջացնի գործնական կիրառելիության ժամանակ:

Ըստ այդմ՝ անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության որակման դեպքում անհրաժեշտ է շեշտադրումը դնել կամային հատկանիշի բովանդակային տարրերի վրա: Գիտակցական մասով անհրաժեշտ է դիտարկել դրա առկայությունը կոնկրետ դեպքի համատեքստում է՝ հետևանքի իրական հնարավորության նախատեսմամբ, թե՛ նման արարքների կատարման՝ հետևանքի վերացական հնարավորության նախատեսմամբ:

<sup>13</sup> Տե՛ս Тихонов К.Ф. К вопросу о разграничении форм виновности в советском уголовном праве. Правоведение, 1963г., N3, с. 87.

<sup>14</sup> Տե՛ս Գ. Ղազինյան, Ա. Գաբուզյան, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Դասագիրք բուհերի համար, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2012թ., էջ 203:

**ՆՈՐԱՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարան,  
իրավաբանական ֆակուլտետ, 3-րդ կուրս

**ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՊՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վերջին տարիներին իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում Հայաստանի Հանրապետության քրեական վերականգնողական արդարադատության համակարգում նախատեսվել և իրականացվել են էական փոփոխություններ, որոնք առնչվում են ազատագրված փոխարեն այլընտրանքային պատժատեսակների կիրառման այնպիսի համակարգի ամրապնդմանը, որի պայմաններում հանցագործություն կատարած անձը պատիժը կրում է առանց հասարակությունից մեկուսացվելու, ինչպես նաև իրավախախտում թույլ տված անձի վերասոցիալականացմանը ու հանցագործությունից տուժած անձանց վնասների վերականգնման համար արդյունավետ երաշխիքների ստեղծմանը:

Պրոբացիայի ինստիտուտի ներդրումը հնարավորություն է տալիս սահմանելու հանցանք կատարած անձանց համար այլընտրանքային պատիժների առավել մարդասիրական և առաջադիմական եղանակներ, ինչպես նաև՝ երաշխավորել պատժի անխուսափելիության սկզբունքի արդյունավետ իրացումը, որը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով:

Հարկ է նշել, որ 2012 թվականի հուլիսի 2-ին ՀՀ Նախագահի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրում և ծրագրից բխող միջոցառումներում» նախատեսվում է պրոբացիոն պետական ծառայության ստեղծումը: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 30-ի

թիվ 19 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել ՀՀ-ում պրոբացիոն ծառայության ներդրման հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև 2015թ. ապրիլի 30-ին կայացած նիստի N 19-9 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Պրոբացիայի մասին» օրենքի նախագիծը:

Ետագայում կատարվել են որոշակի փոփոխություններ նախագծում, և 2016 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունվել է պրոբացիայի մասին օրենքը: Վերջինս սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ներդրող պրոբացիոն ծառայության հայեցակարգը և այդ ծառայությունների գործունեության կարգը:

Պրոբացիա տերմինն առաջացել է անգլերեն «Probation» բառից, որը նշանակում է փորձ, փորձություն կամ փորձաշրջան<sup>1</sup>:

Պրոբացիա հասկացությունը բացահայտվում է մի շարք հեղինակների կողմից: Մասնավորապես՝ Նինել Կուզնեցովան պրոբացիան բնութագրում է որպես նշանակված պատժի պայմանական չկատարում կամ պատժի չնշանակում՝ պայմանով, որ հանցավորի նկատմամբ պետք է նշանակվի վերահսկողություն հատուկ մարմնի կողմից<sup>2</sup>:

Էդիթ Բուրլեյգը պրոբացիան բնորոշում է որպես ինստիտուտ, որն ուղղված է անձի սոցիալական վերահնտեգրմանը<sup>3</sup>: Նրա բնորոշմամբ՝ պրոբացիան մի գործիք է, որը պետք է ունենան բոլոր դատարանները՝ պատշաճ արդարադատություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձին ուղղելու համար:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 99 2017

<sup>1</sup> Random House Kernerman Webster's College Dictionary, ©2010 K Dictionaries Ltd.  
<sup>2</sup> Кузнецова Н.Ф., Тяжкова И.М. Курс Уголовного права. Том 2. Общая часть. Учение о наказании./ М.,Зерцало, 1990, с. 220.  
<sup>3</sup> Edith N. Burleigh, Probation and Parole, 12 J. Am. Inst. Crim. L. & Criminology 320.

Պրոբացիա հասկացությունը բացահայտված է նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի կողմից 2010 թվականին ընդունված «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ» թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականում<sup>4</sup>, որում սահմանված է. «Պրոբացիան ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն»

Փաստորեն, պրոբացիան համակարգ է, որի նպատակն է այլընտրանքային միջոցներով նպաստել քրեական պատժի և պատասխանատվության նպատակների իրականացմանը, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պրոբացիայի ինստիտուտի ներդրման հեռանկարները քննարկելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ինստիտուտի փորձը արտասահմանյան երկրներում: Ներկայումս գրեթե բոլոր եվրոպական երկրներում պրոբացիայի ծառայության վերաբերյալ օրենսդրական դրույթները նախատեսված են կամ քրեական օրենսգրքով (Բելգիա, Էստոնիա, Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա), կամ առանձին իրավական ակտերով (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա): Կան նաև երկրներ, որտեղ քրեական արդարադատության համակարգում պրոբացիայի ծառայության դերը նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքով<sup>5</sup>:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում պրոբացիայի ծառայության համակարգը ձևավոր-

վել է 1841 թվականին Ջոան Պետերսիլիայի ներկայացրած մոդելին համապատասխան: ԱՄՆ-ում առաջին անգամ պրոբացիայի համակարգն ընդունվել և ներդրվել է Մասաչուսեթս նահանգում 1878 թվականին<sup>6</sup>: ԱՄՆ-ում պրոբացիայի էությունն այն է, որ հանցագործը, ով գտնվում է պրոբացիոն ծառայության աշխատակիցների հսկողության ներքո, կատարում է դատարանի դատավճռով սահմանված պարտականությունները: Մասնավորապես՝ դատարանը դատավճիռ կայացնելիս կարող է հանցագործի վրա դնել այնպիսի պարտականություններ, ինչպիսիք են իր խնամակալության տակ գտնվող անձանց նյութապես ապահովելը, տույժերի վճարումը, սահմանված վայրեր չայցելելը, որոշակի մարդկանց հետ շփումից զերծ մնալը, ակոհոլի օգտագործումից հրաժարվելը և այլն<sup>7</sup>: Մինչդեռ պարտականությունների չկատարումը կարող է հանգեցնել անձի ազատազրկման: Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանցավորի նկատմամբ պրոբացիա նշանակվում է մինչև 5 տարի ժամկետով, սակայն դատարանն իրավասու է դադարեցնել այս գործընթացը, և հակառակը՝ երկարաձգել: 1989 թվականին ԱՄՆ-ում ներդրվեց «Ինտենսիվ հսկողությամբ պրոբացիոն համակարգը», որը հանցավորի և նրա նկատմամբ հսկողություն իրականացնող պրոբացիայի ծառայության աշխատակցի պարբերաբար հանդիպումներն էին: Բացի այդ՝ հատկանշական է նաև այն փաստը, որ հանցավորն իր միջոցներից է վճարում իր նկատմամբ իրականացվող հսկողության համար:

Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ պրոբացիա կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, ով դատապարտվել է ազատազրկման, ընդ որում՝ դա կախված չէ նշանակված ազատազրկման ժամկետներից: Պրոբացիան Ֆրանսիայում նախ և առաջ ներառում է պարտականություն անձի համար՝ ենթարկվել սահմանված պահանջներին և մասնակցել իր նկատմամբ իրականացնող վերասոցիալականացման

<sup>4</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

<sup>5</sup> European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>6</sup> <http://www.appa-net.org/PPP-Supervision-Week/files/Per-sp98pers30.pdf> (25.4.2016)

<sup>7</sup> Title 18 – CRIMES AND CRIMINAL PROCEDURE PART II – CRIMINAL PROCEDURE CHAPTER 227 – SENTENCES SUB-CHAPTER B – PROBATION Sec. 3563 – Conditions of probation

ծրագրին: Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ հանցագործություն կատարած անձի նկատմամբ պրոբացիա կարող է նշանակվել դատարանի որոշմամբ: Եթե անձը չի ենթարկվում դատարանի որոշմամբ իրեն ներկայացված պահանջներին, ապա դատարանի որոշմամբ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:

Կարևոր է Լատվիայի և Մոլդովայի հանրապետություններում գործող պրոբացիոն ծառայությունների համակողմանի ուսումնասիրությունը, քանի որ դրանց իրավական համակարգերը գրեթե նույնական են ՀՀ իրավական համակարգին: Բացի այդ՝ ՀՀ-ում ներդրված պրոբացիայի ծառայության համակարգը որոշակիորեն համընկնում է վերոնշյալ պետություններում գործող պրոբացիայի ծառայությունների հետ: Մասնավորապես՝ և Հայաստանի Հանրապետությունում, և Մոլդովայի Հանրապետությունում, Պրոբացիայի ծառայությունը գործում է արդարադատության նախարարության ստորադասությամբ: Անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ վերոնշյալ պետություններում պրոբացիա մեծ մասամբ իրականացվում է կամավոր անձանց կողմից, և միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում է, որ իրականացվում է պրոբացիոն ծառայության աշխատակցի կողմից, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում՝ ընդհակառակն, պրոբացիայի իրականացման նախապատվություն տրվում է պրոբացիայի ծառայողին: Որոշակի նմանություններ առկա են սկզբունքային դրույթներում, մասնավորապես՝ համագործակցության սկզբունքը, որը պրոբացիայի ծառայության գործունեություն է՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև այլ մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցության վրա հիմնված: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրված պրոբացիայի ծառայության համար առանցքային նշանակություն ունեն Մոլդովայի և Լատվիայի Հանրապետություններում գործող պրոբացիոն համակարգերը:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ արտասահմանյան երկրների փորձը վկայում է այն

մասին, որ արդարադատության իրականացումը, ինչպես նաև քրեական պատժի և պատասխանատվության կիրառումը ընթանում են դեպի ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների կիրառումը՝ շեշտը դնելով վերականգնողական արդարադատության համակարգի վրա: Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ բազմաթիվ երկրներ նախորդ դարի կեսերից ինտենսիվորեն վերանայեցին պատժի ողջ էությունը և դրա կիրառման արդյունավետությունը, ինչի շնորհիվ հիմնեցին պրոբացիոն ծառայություններ:

Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ներդրվել է պրոբացիոն ծառայություն, սակայն մինչև 2016 թվականը պրոբացիոն գործառույթ իրականացնում էին քրեակատարողական հիմնարկների հոգեբանական, սոցիալական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը:

Ճիշտ է՝ այս մարմինները կատարում էին պրոբացիոն ծառայության հիմնական գործառույթները, սակայն առկա էին մի քանի խնդիր, որոնք իրենց լուծումը չեն ստացել ժամանակի ընթացքում: Մասնավորապես՝ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների ստեղծման օրվանից սահմանված չեն եղել սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ: Այսինքն՝ տվյալ մարմիններն իրականացնում էին ոչ պրոֆեսիոնալ գործունեություն, ինչի պատճառով հնարավոր էր մի շարք խնդիրների առաջացում: Բացի այդ՝ հստակ իրավական կարգավորում չէին ստացել մի քանի խնդիր, օրինակ՝ ռո մարմինը պետք է նշանակի պրոբացիա հանցագործություն կատարած անձի նկատմամբ, ռո հանցագործությունների նկատմամբ կարող է նշանակվել պրոբացիա և այլն: Կարելի է փաստել, որ այս ոլորտը իրավական հստակ կարգավորումներ չի ստացել առանցքային հարցերի վերաբերյալ, ինչի պատճառով Հայաստանի Հանրապետությունում պրոբացիան կիրառելի չի եղել:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի մասնագիտացված ծառայության ստեղծման անհրաժեշտությունը

բխում է քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդրից: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները վկայում են, որ քրեական գործերի մեծ մասի դեպքում որպես պատիժ կիրառվում է ազատազրկումը, նման պայմաններում պրոբացիայի ծառայությունը կնպաստի քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածության նվազմանը:

Պետությունը, անձին զրկելով ազատությունից, պարտավոր է նյութական միջոցներ ծախսել հանցագործություն կատարած անձին քրեակատարողական հիմնարկում պահելու համար: Պրոբացիայի կիրառման պայմաններում պետության վրայից հանվում են անձին քրեակատարողական հիմնարկում պահելու ծախսերը:

Ըստ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարության և դրանից բխող միջոցառումների պահանջների՝ Հայաստանի Հանրապետությունում, քրեակատարողական ծառայությունից անկախ, պետք է ստեղծվի պրոբացիայի ծառայություն, որը պետք է գործի արդարադատության նախարարության ենթակայությամբ:

Պրոբացիայի մասին օրենքի համակողմանի ուսումնասիրությունից պարզ են դառնում պրոբացիայի ծառայության ներդրման նպատակները: Որպես այդպիսիք՝ պրոբացիայի ծառայության հիմնական նպատակներն են.

- հանցագործությունների թվաքանակի և հանցագործության ռեցիդիվի նվազում,
- հանցագործություն կատարած անձի վերասոցիալականացում,
- հանցագործություն կատարած անձի ուղղում,
- քրեակատարողական հիմնարկների բեռնաթափում:

Պրոբացիայի մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով տրված է պրոբացիա հասկացությունը. «Պրոբացիա՝ պրոբացիայի շահառուի սոցիալական վերաինտեգրման, ինչպես նաև հասարակության անվտանգության ապահովման նպատակով պրոբացիայի շահառուի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառված այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցներ

ի, պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հետևանքով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու, պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարում ու վերասոցիալականացման իրականացում հասարակությունում՝ անձի նկատմամբ հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով»:

Պրոբացիայի մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով տրված է պրոբացիայի ծառայության շահառու հասկացությունը. «Պրոբացիայի շահառու՝ անձ, որի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց, կամ նշանակվել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կամ անվտանգության միջոց, կամ նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում նշանակվել է փորձաշրջան, կամ նա պատիժը կրելուց ազատվել է, կամ նրա պատժի կրումը հետաձգվել է, կամ որը մասնակցում է հաշտարարության գործընթացի (բացառությամբ տուժողի և տուժողի իրավահաջորդի), կամ որի վերաբերյալ պետք է ներկայացվի խորհրդատվական զեկույց»:

Հարկ է անդրադառնալ նաև պրոբացիայի կիրառման հիմնախնդիրներին: Մասնավորապես՝ հստակ սահմանված չէ, թե՞ որ մարմինը պետք է նշանակի պրոբացիա հանցագործություն կատարած անձի նկատմամբ:

Պրոբացիայի մասին օրենքում նշում է պարունակվում պրոբացիայի տարածքային մարմինների վերաբերյալ, սակայն որևէ նշում չկա, թե որոնք են այդ մարմինները, կամ ինչպես են դրանք ձևավորվում:

Պրոբացիայի նպատակների և խնդիրների իրականացման հարցի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև պրոբացիայի ծառայության և քրեակատարողական ծառայության միջև փոխհարաբերություններին: Հարց է առաջանում, թե պրոբացիայի ծառայությունը, որը անմիջական հարկադրանք կիրառող մարմին չէ, արդյոք կարող է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատազրկման հետ չկապված պատիժներ (տուգանք, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել,

հանրային աշխատանքներ, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկել, գույքի բռնագրավում): Կարծում եմ՝ պրոբացիայի ծառայությանը անհրաժեշտ է ընձեռել բոլոր այլընտրանքային պատիժների կիրառման հնարավորություն՝ բացի գույքի բռնագրավումից և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուց: Պրոբացիայի ծառայությունն այն կառույցն է, որի ներդրմամբ հնարավոր կլինի հասնել այլընտրանքային պատիժների նպատակային կիրառմանը, միաժամանակ՝ պատժի նպատակների իրականացմանը:

Պրոբացիոն ծառայության ներդրման հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել պրոբացիայի ներդրման եղանակին: Միջազգային փորձը վկայում է, որ հնարավոր է պրոբացիոն համակարգի ներդրման երկու տարբերակ.

1. Պրոբացիայի ծառայությունը սահմանել արդեն գործող օրենքներով (օրենսգրքերով).
2. Ընդունել նոր օրենք պրոբացիայի մասին:

«Օրենսդիր մարմինն ընտրել է ներդրման երկրորդ տարբերակը, որն ակնհայտորեն բարենպաստ տարբերակ է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի պարագայում: Չնայած դրան՝ առաջին տարբերակը կարող էր ոչ պակաս նպատակահարմար լինել: Անհրաժեշտ է հստակ սահմանել պրոբացիայի մասին օրենքի և քրեական ու քրեական դատավարության օրենսգրքերի, ինչպես նաև քրեակատարողական օրենսգրքի միջև առաջացող փոխհարաբերությունները: Ակնհայտ օրինակ է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով սահմանվելիք մեղիացիայի ինստիտուտը:

Առանձնահատուկ ուշադրությամբ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես

պետք է նշանակվի և որ հանցագործությունների դեպքում պետք է կիրառվի պրոբացիան: Հարցի լուծում կարող է հանդիսանալ քրեական օրենսգրքի հատուկ մասով սահմանված հանցակազմերում պրոբացիայի կիրառման հնարավորության մասին նշում կատարելը կամ ընդհանուր կարգավորում ներմուծելը որոշակի խումբ հանցագործությունների դեպքում դրա կիրառելիության մասին:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ պրոբացիայի մասին օրենքի մեջ առկա են ակնհայտ իրավական բացեր, ինչն առաջացնում է իրավական լուրջ խնդիրներ: Խնդիրն այն է, որ պրոբացիայի մասին օրենքն առնչվում է մարդու իրավունքների սահմանափակմանը, ինչպես նաև մի շարք սահմանադրական իրավունքներին, իսկ այս պայմաններում օրենքի լրացումը ենթաօրենսդրական ակտերով անթույլատրելի է, մինչդեռ օրենքում փոփոխություններ կատարելու համար բավականին երկար ժամանակ է անհրաժեշտ:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների իրականացմանը հնարավոր է հասնել բացառապես իրավագիտակցության բարձր մակարդակի առկայության պայմաններում, որին հասնելու համար դեռևս անհրաժեշտ է որոշակի միջոցառումների իրականացում: Պատճառն այն է, որ խոսքն անձի նկատմամբ վերահսկողության իրականացման և նրա նկատմամբ պատժի չկիրառման մասին է, ուստի իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի պայմաններում հնարավոր է պրոբացիայի անհարկի օգտագործումը՝ պատժից ու պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Բացի այդ՝ պրոբացիայի ծառայության անհարկի կիրառումը կարող է հանցագործների շրջանակներում ձևավորել անպատժելիության մթնոլորտ, ինչն առկա իրավամտաճողության պայմաններում անթույլատրելի է:





**ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության դատախազ,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ  
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆ**

Գլոբալացումը դառնում է ժամանակակից աշխարհի կարևորագույն թեմաներից մեկը: Արդի դարաշրջանի իրավական գլոբալացումն իր հետ բերում է բազմաթիվ քրեականորեն նշանավոր հետևանքներ՝ ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային նշանակություն ունեցող: Ռուսաստանում, Հայաստանում և հետխորհրդային տարածության այլ երկրներում հանցավորությունն ունի դինամիկ ու անմխթար բնույթ:

Այս համայնապատկերում անձի, հասարակության ու պետության անվտանգությունն արդյունավետ կերպով և ժամանակին ապահովելը դառնում է համաշխարհային մասշտաբի հիմնարար հիմնախնդիր<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է. «Գիտական մոտեցումների հիման վրա քրեական քաղաքականության հայեցակարգային պարամետրերի մշակման պահանջը պայմանավորված է հասարակության, համաշխարհային ընկերակցության ու պետության այսօրվա իրավիճակով, իրավակարգի ու ազգային անվտանգության ապահովման համակարգի ձևավորմամբ ու գործառնությանը»<sup>2</sup>:

Անվտանգության հայեցակարգի ժամանակակից հասկացողական-կատեգորիալ ապարատը բավականաչափ հարուստ է: Կարելի է ներկայացնել անվտանգության հետևյալ սահ-

մանումը. «Անվտանգությունը հասարակության կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության զարգացման վիճակն ու միտումն է, դրա ներքին կառույցների պաշտպանումը ներքին ու արտաքին սպառնալիքներից»<sup>3</sup>:

Մարդու անվտանգության ապահովման խնդիրը լուծելու համար բացառիկ նշանակություն ունի ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը:

Տվյալ նորմատիվ ակտերում սահմանվում են անձի, հասարակության ու պետության՝ արտաքին ու ներքին սպառնալիքներից կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության ապահովման առավել ընդհանուր ճանապարհները: Հատուկ ուշադրության են արժանանում ազգային անվտանգության օբյեկտի բոլոր երեք բաղադրիչների իրավական ապահովման գաղափարները:

Մարդու, հասարակության ու պետության անվտանգության ապահովումը հարկավոր է դիտարկել իբրև քրեական քաղաքականության նոր ուղղություն: Քրեական քաղաքականության ժամանակակից տեսության, գործող քրեական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանցավոր ոտնձգություններից քրեաիրավական պաշտպանության օբյեկտների նշված եղյակի անվտանգության առավելա-

<sup>1</sup> Տե՛ս Աветисян С.С. Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, էջ 215:  
<sup>2</sup> Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 1. Понятие уголовного права. Глава 1. Понятие уголовной политики, ее содержание и принципы. Издание профессора Малинина. СПб., 2005: էջ 119: Автор главы – Лесников Г.Ю. 2. Экономическая и национальная безопасность: Учебник /Под ред. Е.А. Олейникова. М.: Изд-во “Экзамен”, 2005, էջ 14:  
<sup>3</sup> Տե՛ս Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Երևան, 2016, էջ 77 (ընդունվել է ՀՀ Նախագահի կողմից 2007թ. փետրվարի 7-ին, ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 25-ին, ՀՀ ՊՏ 2007.02.15/11/ (535)):

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

գույն ապահովումը քրեական քաղաքականության առաջնահերթություններից մեկն է, որոնք հաշվարկված են ինչպես արդի ժամանակաշրջանի, այնպես էլ՝ ապագայի համար: Այդ առաջնահերթությունը որոշակի մարմնավորում է գտել 2003թ. ՀՀ ՔՕ-ում, որտեղ իրավապաշտպանվող հարաբերությունների հիերարխիան հիմնվում է արժեքների ընդհանուր համակարգի՝ անձ ընտանիք-հասարակություն-պետություն, վրա:

Քանի որ ընդհանուր առմամբ անվտանգության ապահովումը պետության առաջնայնություն է, իսկ պետությունը գործում է՝ օգտագործելով իր իշխանական-իրավական մեխանիզմը, ուստի ակնհայտ է, որ իրավաբանական կողմը կարևոր տեղ է զբաղեցնում կենսականորեն կարևոր շահերի ու ազգային արժեքների անվտանգության ապահովման համակարգում:

Հիմնարար մարդկային արժեքների անվտանգության իրավաբանական ապահովումն ունի բազմաթիվ ուղղություններ:

Այդ ուղղությունների շարքում հատուկ տեղ է պատկանում քրեաքաղաքական ապահովմանը, որը ներառում է քրեաիրավական, քրեադատավարական, քրեաբանական, քրեական, քրեակատարողաան ուղղությունները: Բոլոր ուղղություններում կարևորվում է մարդու անվտանգության հիմնախնդիրը, քանի որ հասարակության ու պետության անվտանգությունը պետք է սկսվի մարդու անվտանգությունից: Այլ կերպ ասած՝ անձի անվտանգության հիմնախնդիրը պետք է լինի գերիշխող, ուստի այդ խնդիրը պետք է լուծել այնպես, որ բոլոր հարցերի լուծումը չխոչընդոտի մարդու իրավունքներն ու օրինական շահերի իրականացումը:

Տվյալ եզրակացությունը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածից, որի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրա-

վունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Անձի, հասարակության ու պետության անվտանգության քրեաիրավական պաշտպանությունն առանցքային տեղ է զբաղեցնում ընդհանուր իրավական և քրեաիրավական քաղաքականությունում:

Պետության քրեական քաղաքականության իրավական հիմք է քրեական օրենսդրությունը: Հատկանշական է, որ ՀՀ Քրեական օրենսգիրքն զգալիորեն մեծացրել է անձի անվտանգության ապահովման նկատմամբ ուշադրությունը:

Առաջինը՝ ՀՀ ՔՕ հոդ. 1-ի մ. 1-ում ամրագրել է ոչ միայն որոշակի օրենքների քրեաիրավական պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման, այլև՝ խաղաղության ու մարդու անվտանգության ապահովման մասին:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն չունի «պաշտպանություն» ու «ապահովում» հասկացությունների հարաբերակցության նկատմամբ կարծիքների միասնություն<sup>4</sup>: Այնուհանդերձ՝ այդ բառերի ստուգաբանական և տրամաբանական մեկնաբանումը թույլ է տալիս պնդել, որ մարդկության խաղաղության ու անվտանգության ապահովումը քրեական օրենսդրության խնդիրներից մեկն է: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ ողջ քրեական օրենսդրությունն ու դրա նորմերի կիրառման պրակտիկան պետք է ուղղված լինեն անձի անվտանգության ապահովմանը: Միայն այդ հիմքի վրա հնարավոր է ազգային անվտանգության իրական ապահովումը:

Նշված դիրքորոշումը համապատասխանում է Ազգային անվտանգության ռազմավարության հիմնական դրույթներին, որոնց համաձայն՝ անձի շահերը սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրագործման, անձնական անվտանգության ապահովման, կյանքի որակի ու մակարդակի բարձրացման, մարդու և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր ու մտավոր զարգացման մեջ են:

Երկրորդը՝ անձի անվտանգության ապահովումը դարձել է քրեական օրենսդրության ու քրեական պատասխանատվության սկզբունք:

<sup>4</sup> Տե՛ս Новоселов Г.П. Учение об объекте преступления. Методологические аспекты. М.: Изд-во НОРМА, 2001, էջ 61-62:

ՀՀ ՔՕ հոդ. 11-ում նշվում է, որ Քրեական օրենսգրքըն ապահովում է մարդու ֆիզիկական, հոգեբանական, նյութական, բնապահպանական և անվտանգության այլ տեսակները:

Երրորդը՝ Հատուկ մասը լրացվել է քրեական պատասխանատվության հիմնավորվածության ու արդարության երաշխիք-նորմերի զգալի թվով: Դրանց թվին հարկավոր է դասել՝

1) Սահմանադրության ու միջազգային իրավունքի նորմերի առաջնայնությունը սովորական, այդ թվում՝ քրեական օրենսդրության նկատմամբ, ինչը պարտավորում է դիմել դրանց՝ մարդու իրավունքների ու ազատությունների հարցերը լուծելիս,

2) անձի անվտանգության ապահովման՝ իբրև քրեական իրավունքի հիմնական սկզբունքներից ու խնդիրներից մեկը.

3) քրեական օրենքի հետադարձ ուժի արգելումը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

4) ՀՀ ՔՕ-ում արդարության սկզբունքի ամրագրումը,

5) միևնույն հանցագործության համար կրկնակի քրեական պատասխանատվությանը ենթարկելն ու մեղադրանքի բացառումը,

6) սահմանափակ մեղսունակության ինստիտուտի ներմուծումը,

7) հանցագործությանը նախապատրաստելու համար պատասխանատվության սահմանափակումը միայն ծանր ու հատկապես ծանր կատեգորիաներով,

8) արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ընդարձակումը,

9) պատիժ նշանակելիս մեղադրյալի կյանքի պայմանների հաշվառումը (հոդ. 60, մ. 3),

10) անչափահասների նկատմամբ օրենսդրության մարդասիրացումը,

11) դատական հայեցողության սահմանների սահմանափակումը հատուկ դեպքերում պատիժ նշանակելիս (անավարտ հանցագործության համար, հանցագործությանը մասնակցելու համար, հանցագործությունների կրկնողության համար և այլն):

Չորրորդը՝ ՀՀ ՔՕ-ի Հատուկ մասը կառուցված է հիմնականում ըստ մարդու, հասարակության ու պետության անվտանգության տեսակների:

Դրանում հստակորեն առանձնացվում է անձի կենսական ու ֆիզիկական անվտանգության նկատմամբ ոտնձգություն գործող հանցագործությունների մասին (սպանություն, առողջությանը տարբեր տեսակի վնաս հասցնելը), սեռական, քաղաքական, նյութական անվտանգություն, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և այլն:

Հատուկ մասի համակարգը լրացված է տնտեսության, բնապահպանական և տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված նոր հանցակազմերով և այլն:

Այնուամենայնիվ, կարծում ենք՝ Հայաստանի գործող քրեական օրենսդրությունը մարդու անվտանգության հարցերը ոչ լրիվ, հատվածային է լուծում:

1. Կան բոլոր հիմքերը և օբյեկտիվ պահանջ համակարգի գիտական շրջանառության մեջ ներմուծելու անձի հոգեբանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համակարգը:

Հոգեբանական անվտանգության հանդեպ ոտնձգությանն առնչվող հանցագործությունների համակարգը կարելի է դիտարկել իբրև զանազան օբյեկտներին ուղղված արարքների ամբողջություն.

ա) անձի բնականոն հոգեկան գործունեություն ապահովող հարաբերություններ (դրանք են՝ շորթումը, ինտիմ կյանքի մասին տեղեկությունները տարածելու նպատակով հավաքելը և այլն),

բ) հարաբերություններ, որոնք կազմում են սոցիալ-հոգեբանական անվտանգության հիմքը: Այդպիսի հանցագործությունները ներառում են հոգեկանի վրա զանգվածային ազդեցություն (օրինակ՝ հեռուստատեսային հոգեթերապիայի չարտոնված անցկացում, մարդկանց կուտակումների վրա չարտոնված միջոցներով ներգործությունը՝ նպատակ ունենալով դադարեցնել որևէ զանգվածային միջոցառումները, մասնավորապես՝ հանրահավաքները, ժողովները, ցույցերը, զանգվածային անկարգությունների կազմակերպումները և այլն, առանց տուժողի համաձայնության, խաբեությամբ առողջության զանգվածային խանգարում առաջացնող հոգեբանական փորձերի անցկացումը և այլն). բնական միջավայրի նկատմամբ ազդե-

ցությունը՝ իբրև մարդկանց հոգեկանի նկատմամբ ոտնձգության եղանակ. նախապես հայտնի կեղծ գիտական գաղափարների տարածումը, որոնք առաջացնում են վախ, տագնապ, զանգվածային անկարգություններ և հակահասարակական այլ գործողություններ,

գ) քրեական օրենքով պաշտպանվող այլ հարաբերություններ: (Այստեղ հնարավոր են հանցագործություններ, որոնցում հոգեբանական առողջության նկատմամբ ոտնձգությունը հանդես է գալիս իբրև հստակ հակահասարակական նպատակներին հասնելու միջոց: Սովորաբար, դա նվաճվում է անձի գիտակցության նկատմամբ վերահսկում իրականացնելու ճանապարհով: Այդպիսի եղանակների օգնությամբ հնարավորություն է առաջանում օգտագործելու մարդուն՝ իբրև հանցագործության գործիք, այլ շահերին վնաս հասցնելու համար՝ սպանություններ, առողջությանը վնաս պատճառում, կողոպուտներ, պետական և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հավաքագրում, փոխանցում և այլն):

2. ՀՀ Քրեական օրենսգրքում ոչ պատշաճ մակարդակով են կարգավորվում տեղեկատվական անվտանգության համար քրեական պատասխանատվության հարցերը:

Մեր կարծիքով՝ տեղեկատվական անվտանգությունը հարկավոր է դիտարկել իբրև քրեաիրավական պաշտպանության ինքնուրույն տեսակային օբյեկտ: Տեղեկատվական անվտանգության նկատմամբ ոտնձգությունները կարող են կատարվել ոչ միայն համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով:

Տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության իրավական կարգավորման ընթացքում կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տեղեկատվությունը կարող է լինել ոչ միայն հանցագործությունների կատարման միջոց, այլև՝ քրեական ոտնձգություններից պաշտպանության առարկա:

3. Մարդու անվտանգության՝ իբրև քրեական օրենսդրության սկզբունքի բուն հոչակումը, անձի՝ իբրև ոտնձգության օբյեկտի ՔՕ Հատուկ մասի նորմերում առանձնացումը չեն ստացել իրենց պատշաճ զարգացումը: Հա-

տուկ մասի ողջ համակարգը կառուցված է ավանդական եղանակով, որի համաձայն՝ մարդու կյանքն ու առողջությունը բազմաթիվ հանցակազմերում հանդես են գալիս իբրև քրեաիրավական պաշտպանության ֆակուլտատիվ (լրացուցիչ) օբյեկտներ՝ զիջելով որոշակի հասարակական հարաբերություններին: Օրենսդրական այդպիսի մոտեցումը չի համապատասխանում մարդուն, նրա իրավունքներն ու ազատությունները գերագույն սոցիալական արժեք ճանաչելու մասին սահմանադրական մոտեցմանը:

Գ.Պ. Նովոսելովը, ով մշակել է «հանցագործության օբյեկտը միշտ մարդիկ են» հայեցակարգը, տեղին նկատում է. «Ոչ թե մարդիկ գոյություն ունեն հանուն հասարակական հարաբերությունների, այլ՝ հասարակական հարաբերություններն առաջանում են մարդկանց շահերի իրականացման համար, և ուստի պարզ է գլխավորը. ինչո՞ւ անձին, հասարակության անդամներին վնաս պատճառելու գործում պետք է տեսնել իրենց միջև առկա հարաբերությունների նկատմամբ ոտնձգությունները, այլ ոչ թե՝ հակառակը, հասարակական հարաբերությունների խախտման մեջ տեսնել դրանց մասնակիցներին վնաս պատճառելը: Տվյալ դեպքում հեղինակների տրամաբանությունը թելադրված է այն հանգամանքով, որ, հնարավորություն չունենալով նշելու վնասի արտահայտման հստակ հատկություններն ու ձևերը, ինչը իբր հասցվում է հանցագործությամբ հասարակական վերաբերմունքին, իրենք ստիպված են փոխարինել այդ վնասը այն վնասով, որն իրականում հասցվում է կամ կարող է հասցվել մարդկանց կամ, ինչպես ասում են, հասարակական հարաբերությունների մասնակիցներին (սուբյեկտներին): Չհամոզելով զբաղեցրած դիրքորոշման հիմնավորվածության մեջ՝ հեղինակի կողմից ստանձնած տրամաբանությունը հաստատում է մի բան. ոչ մի այլ վնաս՝ բացի մարդկանց հասցվող վնասից, հանցագործությունը հասցնել չի կարող»<sup>5</sup>:

Պրոֆեսոր Ս. Ավետիսյանը հիմնավորել է ՔՕ-ի Հատուկ մասի ողջ համակարգի վերանայման անհրաժեշտությունը՝ այնպես, որպեսզի մարդու կյանքն ու առողջությունը միշտ հան-

<sup>5</sup> Տե՛ս Новоселов Г.П., նշված աշխ. էջ 63:

դես գան որպես ոտնձգությունների հիմնական օբյեկտներ<sup>6</sup>:

Նոր մոտեցման իմաստն այն է, որ այդ ուղղությամբ քրեական օրենսդրության զարգացումը թույլ կտա հիմնվել միայն անձի, հասարակության ու պետության անվտանգության վրա:

Քրեականացում են պահանջում նաև հասարակայնորեն վտանգավոր այլ արարքներ, որոնք ոտնձգություն են իրականացնում մարդու հոգևոր, մտավոր, վերարտադրողական, բնապահպանական, տնտեսական անվտանգության նկատմամբ:

Մարդու անվտանգության ապահովման, իր կենսականորեն կարևոր հիմնական շահերի պատշաճ պաշտպանության՝ նշված հանգամանքներով ապահովման վերաբերյալ, անկասկած, չեն սպառվում, դրանք կարելի է շարունակել:

Ընդ որում՝ հարկավոր է ընդգծել, որ դեպի մարդկային գործոնը շրջադարձը, որն սկսվել էր սոցիալական, իրավական ու ժողովրդավարական հասարակության կառուցման ընթացքում, ստիպում է քրեական իրավունքի տեսանկյունից մարդուն դիտարկել իբրև ինքնու-

րոյն արժեհամակարգ, որը քրեական օրենսդրությամբ պաշտպանվող առավել կարևոր սոցիալական արժեքն է:

Ի տարբերություն սոցիալական (ազգային, պետական) անվտանգությունից՝ անձի անվտանգությունը բնութագրում է այն պայմանները, որոնք պաշտպանում են անձի օրինական և կենսական շահերը՝ բոլոր դրսևորումներում: Դրա առարկան ոչ թե հասարակությունն է, այլ՝ անհատը, իր բոլոր հատկություններով, որակներով ու հարաբերություններով հանդերձ: Ուստի հիմքեր կան պնդելու, որ պետության (ազգային) անվտանգությունը պետք է սկսվի անձի անվտանգության ապահովմամբ: «Անձի անվտանգության շահերը հաշվի առնելու վրա չհիմնվող պետության անվտանգության հայեցակարգի կառուցման յուրաքանչյուր փորձ, դատապարտված է անհաջողության»<sup>7</sup>:

Այսպիսով՝ անձի անվտանգության ապահովումը հարկավոր է դիտարկել արդի քրեական իրավունքի տեսության, պրակտիկայի և քրեաիրավական քաղաքականության հրատապ ուղղություն և առաջնահերթություններից մեկը:



<sup>6</sup> Տե՛ս Ավետисяն С.С. Актуальные проблемы развития уголовного права России и Армении в контексте обеспечения юридической безопасности человека. Уголовно-правовая защита конституционных прав человека (к 15-летию Конституции России) // Сборник материалов международной научно-практической конференции 26-27 мая, 2009 г.: БИЭПП-БИИЯМС, СПб, 2009, էջ 5-7:

<sup>7</sup> Տե՛ս Тер-Акопов А.А. Безопасность человека (теоретические основы социально-правовой концепции). М.: Изд-во МНЭПУ, 1998, էջ 5:

ԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

## ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

«Մարդու իրավունքներ» արտահայտությունը հանրահայտ է: Այսօր դժվար է գտնել մեկին, ով չի լսել մարդու իրավունքների մասին: Մինչդեռ, ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ կան ամենատարբեր, երբեմն՝ իրարամերժ ընկալումներ և բացատրություններ:<sup>1</sup>

Մարդու իրավունքը սոսկ իրավական հասկացություն չէ, այլ, նախ՝ փիլիսոփայական կատեգորիա է, որը փորձում է բացահայտել մարդու տեղը, դերն ու նշանակությունը հասարակության մեջ: Պատահական չէ, որ փիլիսոփայական ամենատարբեր ուսմունքների միջոցով միշտ էլ փորձ է արվել պարզել հասարակության բնականոն զարգացման համար չափազանց կարևոր այդ հասկացության բնույթը (Համուրաբի, Արիստոտել, Մ. Գոշ, Մաքիավելի, Հ. Գրոտիոս, Սպինոզա, Ժ.ժ.Ռուսո, Սմբատ Սպարապետ և այլն):

«Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացությունն ի հայտ է եկել դեռևս հնագույն դարաշրջաններում: Եթե **ազատության** վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ. թ. ա. 14-րդ դարում<sup>2</sup>, ապա **մարդու իրավունքները** գոյություն ունեն ղեռնա Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ: Հետևաբար՝ յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղու-

թյուններից մեկը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է: Դրանք լայնորեն ընդունված և ճանաչված են ամբողջ աշխարհում: Դրանք ներկայացված են Սահմանադրություններում, ՄԱԿ-ի կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և միջազգային մի շարք կոնվենցիաներում:

2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների նախագծի առանցքային բարեփոխումներից են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների ոլորտում կատարված փոփոխությունները, որոնք նպատակ են հետապնդում ապահովել այդ իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը և դրանց երաշխավորված պաշտպանությունը: Այս փոփոխությունների կարևորագույն խնդիրներից է նաև այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման արդյունավետ և միջազգային չափանիշներին ու սահմանադրական իրավունքի զարգացումներին համապատասխանող լուծումների ամրագրումը Սահմանադրությունում:

Անվիճելի է, որ փոփոխությունների շնորհիվ առավել հստակեցվել են մարդու անձնական, քաղաքական, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքները: Սույն հոդվածում ուսումնասիրվել են մի քանի հոդված, որոնք ենթարկվել են առավել արմատական փոփոխության:

Այսպես՝

1. Ըստ Հայաստանի Հանրապետության

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>1</sup> Տե՛ս «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ», ԵԱՀԿ, Երևան, 2013թ., էջ 9:

<sup>2</sup> Տե՛ս International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available at: [http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint\\_e.php](http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint_e.php).



Սահմանադրության 23-րդ հոդվածի (նախկին Սահմանադրության 14-րդ հոդված)՝ **մարդու արժանապատվությունն անխախտելի է:**

Իր կարևորությամբ արժանապատվության իրավունքն առանձնանում է, քանի որ, ըստ էության՝ բոլոր այլ իրավունքների հիմնական նպատակն է: Ամենևին պատահական չէ, որ մարդու իրավունքներին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերում մարդու իրավունքները թվարկելիս արժանապատվության իրավունքը հաճախ դրվում է առաջին տեղում:

Արժանապատվության գերկարևորությունը է պայմանավորված այն հանգամանքը, որ դա տեղ է գտել միջազգային գրեթե բոլոր փաստաթղթերում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի 1-ին հոդվածում նշված է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»: Այդ ակտի 5-րդ հոդվածում արդեն նշվում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի»: 22-րդ հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք և ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից»:

Վերոնշյալներից բխում է, որ արժանապատվությունն իր նշանակությամբ հավասարեցված է բոլոր մյուս իրավունքների ամբողջությանը: Բնականաբար, մարդու ցանկացած իրավունքի խախտման դեպքում նսեմացվում է նրա արժանապատվությունը: Հենց սա է պատճառը, որ արժանապատվության իրավունքը

մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրն է:

Արժանապատվությունը մարդուն Աստուծոց կամ բնությունից տրված նրա ներքին արժեքն է, մարդու ինքնուրույնությունը, գոյությունը, պարզապես՝ նրա բնույթը<sup>3</sup>: Յուրաքանչյուր ոք ունի դա՝ իր հատկանիշներից, ձեռքբերումներից, սոցիալական և այլ վիճակից անկախ: «Մարդկային կյանքը ... մարդու արժանապատվության կենսական հիմքն է և մնացած բոլոր հիմնական իրավունքների նախապայմանը»<sup>4</sup>: Այսինքն՝ մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթն իրենում ամփոփում է հիմնական իրավունքը:

Արժանապատվությունը ձեռք է բերվում անձի զարգացման որոշակի շրջանում, երբ նա սկսում է գիտակցել իր ազատությունը, հավասարությունը մյուսների հետ, իր պաշտպանվածությունը, երբ մարդն սկսում է արժեքավորել իրեն, գնահատել իր տեղը հասարակության մեջ: Անձի արժանապատվությունը մարդկային քաղաքակրթության հիմնարար հայեցակարգերից մեկն է, չափանիշ՝ հասարակության զարգացման համար:

Մարդու արժանապատվության իրավունքի հետ սերտորեն կապված է մարդու անձեռնմխելիության իրավունքը, որը տարածվում է նրա կյանքի, առողջության, ինչպես նաև պատվի վրա<sup>5</sup>:

Ի տարբերություն նոր Սահմանադրության՝ նախորդ Սահմանադրությունն անձի արժանապատվության իրավունքի պարտադիր տարր էր համարում **պետության կողմից անձի արժանապատվությունը հարգելու և պաշտպանության երաշխավորումը:**

Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, ուստի մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք է, և պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով: Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին, պետության պարտականությունը՝ կյան-

<sup>3</sup> Տե՛ս Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք: Գոռ Հովհաննիսյան: Երևան, 2009թ., էջ 6:

<sup>4</sup> Տե՛ս Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք: Գոռ Հովհաննիսյան: Երևան, 2009թ., էջ 9:

<sup>5</sup> Տե՛ս [http://www.iatp.am/economics/eduprogram/management/book/spisok\\_arm.htm](http://www.iatp.am/economics/eduprogram/management/book/spisok_arm.htm).

քի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում<sup>6</sup>: Ուստի անվիճելի է պետության կողմից այդ իրավունքի պահպանման ու երաշխավորման պարտականությունը:

Անձի արժանապատվությունը բնածին է և առաջանում է մարդու ծնվելու պահից: Ըստ իրավագետներ Վ.Կարտաշևի և Ե.Լուկաշևայի՝ բնական իրավունքների թվին են պատկանում մարդու ոչ թե բոլոր, այլ, առաջին հերթին՝ նրա համընդհանուր իրավունքները՝ կյանքի իրավունքը, քաղաքացիության իրավունքը, արժանապատվության իրավունքը, անձնական ազատության ու անձեռնմխելիության և այլ իրավունքները: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք Սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազան պարտքն է:

Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգանքի իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականությանը: Դա կոնկրետանում է մարդու իրավունքների և ազատությունների մեջ, որոնց պաշտպանությունը համարվում է պետության գոյության բովանդակությունը: Եթե մարդու արժանապատվությունը պատշաճ կերպով պաշտպանվում է, ապա դա ժողովրդավարության և իրավական պետության հուսալի հենարան է:

Պետությունը պետք է նաև անհատի համար արժանապատիվ կյանքով ապրելու հնարավորություն ստեղծի: Նա պարտավոր է ապահովել արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ ապրուստի նվազագույն պայմանները: Պետության առաջնահերթ պարտականություններից մեկը կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Օրինակ՝ Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով դատարանը եզրակացրել է, որ պետու-

թյունը պետք է ապահովի անձի կալանքի այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվության հետ (տես նաև՝ Աերթսն ընդդեմ Բելգիայի 30.07.1998թ. վճիռը)<sup>7</sup>:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհերքելի է դառնում այն, որ մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների հիմք և նպատակ, դրանց սկզբունք, որին համապատասխան պետք է կառուցվի մարդու սահմանադրական իրավունքների ամբողջ համակարգը, պետք է ամրագրվեն պետության, իշխանության ողջ համակարգի՝ անհատի արժանապատվությունն ապահովելու նկատմամբ պարտականությունները: Մարդու արժանապատվության ապահովումը պետության պարտականությունն է՝ այդ իրավունքը կրողների պահանջներից անկախ: Պետությունն այդ առումով պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունը տարաբնույթ ոտնձգություններից, անհրաժեշտության դեպքում՝ անգամ քրեական իրավունքին բնորոշ ներգործության միջոցներով:

Արտասահմանյան երկրներում անձի արժանապատվության իրավունքի ամրագրման սահմանադրական մոդելների համեմատական հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը տարբեր աստիճանով է գնահատում տվյալ եզրույթի նշանակությունը հասարակության իրավական կյանքում:

Հունաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Շվեդիայի և մի շարք այլ պետությունների Սահմանադրություններում մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու պարտականությունն օրենսդրի կողմից սահմանված է որպես առաջնահերթ իրավունք, որի պաշտպանությունը նույնպես պետության պարտականությունն է: Իսկ, օրինակ՝ Գերմանիայի Սահմանադրությամբ այդ դրույթն ունի հետևյալ ձևակերպումը. «Մարդկային արժանապատվությունն անձեռնմխելի է: Դա

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 24.02.2009թ. N ՍԴՈ-792 որոշումը, կետ 5-րդ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=58532//26.11.2016թ.>)

<sup>7</sup> Տե՛ս «Կուդլան ընդդեմ Լեհաստանի» գործով ՄԻԵԴ թիվ 30210/96, պարբ. 92, ՄԻԵԴ 2000-XI որոշում:

հարգելը և պաշտպանելն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է»:<sup>8</sup>

Այսպիսով՝ մարդու արժանապատվությունը բացարձակ է, և քաղաքակիրթ հասարակությունում պետության հիմնական գործառույթը պետք է լինի անձի արժանապատվության պաշտպանությունը: Սա նշանակում է նաև զանազան խախտումներից մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորումը պետության միջոցով<sup>9</sup>: Պետության և հասարակության խնդիրն ու պարտականությունն է ապահովել մարդու արժանապատվության իրավունքի իրականացումը և երաշխավորել այդ իրավունքի պահպանումն ու պաշտպանությունը, ինչպես նաև պետությունը պարտավոր է դա պաշտպանել ամեն տեսակի ոտնձգություններից:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ (նախկին Սահմանադրության 16-րդ հոդված) հոդվածն ամրագրում է անձի **անձնական ազատությունը**:

Անձնական ազատությունն անձի ազատության բաղկացուցիչ և դրանից ածանցված մասն է: Սա ասելով՝ հասկացվում է անձի ազատությունը բոլոր առումներով, որը բավական ընդգրկուն հասկացություն է և ներառում է կամքի ազատություն, մտքի խղճի և կրոնի ազատություն, խոսքի, արտահայտվելու ազատություն, անձնական կյանքի ազատություն, միավորվելու ազատություն, տնտեսական գործունեություն իրականացնելու ազատություն և այլն, հետևաբար՝ մի շարք իրավունքներ ներառվում են վերջինիս մեջ: Այն, որ անձի անձնական ազատության իրավունքը զետեղված է Սահմանադրության մեջ, շատ բնական և պարտադիր պայման է, քանի որ ակնհայտ է, որ «ազատություն» հասկացությունը գործածվում է նաև «իրավունք» հասկացության առումով:

Մարդու իրավունքներին վերաբերող գրականության մեջ հաճախ օգտագործվում են նաև «հիմնական իրավունքներ և ազատություններ», «սահմանադրական իրավունքներ և ազատություններ», «այլ իրավունքներ և ազատություններ» հասկացությունները:

«հասկացությունները»: Հարկ է նշել, որ մինչ օրս այդ հասկացությունները հստակ ձևակերպում չեն ստացել, սակայն, ծանոթանալով բազմաթիվ պետությունների Սահմանադրություններում օգտագործվող «հիմնական իրավունքներ և ազատություններ» հասկացությանը, կարելի է եզրակացնել, որ «սահմանադրական իրավունքներ և ազատություններ» հասկացությունը նույնանում է «հիմնական իրավունքներ և ազատություններ» հասկացության հետ:

Ազատության իրավունքը նշանակում է, որ անձն ազատ է տնօրինելու իր գործողությունները, ժամանակն այնպես, ինչպես ինքն է ցանկանում, ինչպես իրեն հարմար է, սակայն այդ ազատությունը չպետք է վնասի այլ անձանց ազատությանը: Այդ իրավունքը միաժամանակ նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի որևէ մեկի դեմ գործադրել ֆիզիկական կամ հոգևոր ճնշում, բռնություն: Անձի ազատությունը ենթադրում է նաև ճնշման միջոցներ կիրառելիս կամայականության անթույլատրելիությունը:

Անձի ազատության իրավունքի սահմանադրական, միջազգային-իրավական երաշխիքներն արտահայտվում են նաև այն փաստով, որ այդ հանցակազմը պետք է նախատեսված լինի քրեական օրենսգրքով, կալանավորումը կարող է կիրառվել միայն դատական կարգով, դրա առավելագույն ժամկետը ևս սահմանվում է օրենքով, մարդը կարող է ազատագրվել միայն այն դեպքում, երբ նրա մեղավորությունը հաստատվել է օրենքով սահմանված կարգով իրականացված քննությամբ և դատավարությամբ:

Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի. **«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով»:**

<sup>8</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, «Մարդու իրավունքներ, հասկացություններ, սկզբունքներ, մոտեցումներ»: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002թ., էջ 10:

<sup>9</sup> Տե՛ս Dreier (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 139.

Հայաստանի Հանրապետության նախկին Սահմանադրությամբ տվյալ հոդվածը շարադրված էր հետևյալ կերպ. «Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

Պետք է արձանագրել, որ սահմանադրական փոփոխությամբ տվյալ հոդվածը ենթարկվել է որոշակի փոփոխության, որը ոչ բարենպաստ իրավիճակ է ստեղծում մարդու անձնական ազատության իրավունքի լիարժեք իրականացման համար: Ըստ որում՝ ոչ բարենպաստ իրավիճակն այն է, որ անձի տվյալ իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Այսինքն՝ տվյալ հոդվածի երկրորդ նախադասության վերլուծությունը ենթադրում է, որ անձը կարող է ձերբակալվել, բերման ենթարկվել կամ այլ կերպ սահմանափակվի վերջինիս անձնական ազատության իրավունքը, սակայն այդ մասին նա չի կարող տեղյակ պահել իր կողմից նախընտրած անձին՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակի հետ կապված, սակայն առարկայական և կոնկրետացված չեն սահմանափակման հիմքերը:

Տվյալ իրավունքի իրականացումը, իհարկե, մեծ մասամբ վերաբերում է անձի կողմից իր իրավունքների պաշտպանության համար իր կողմից ընտրված անձին հայտնելը, որը հիմնականում անձի պաշտպանն է կամ նրա իրավունքները ներկայացնող որևէ անձ: Տվյալ իրավունքի իրականացումը որևէ կերպ չի կարող սահմանափակվել: Դա կդիտվի որպես իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակում:

Ըստ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ յուրաքանչյուր ոք ունի առնվազն հետևյալ իրավունքները՝

«ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ

ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալու իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը»:

Այս դրույթներից հասկանալի է դառնում, որ անձի առաջնային իրավունքներից է իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով պաշտպանելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում սահմանված է, որ մեղադրյալն իրավունք ունի հարցաքննվել պաշտպանի մասնակցությամբ, մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, առանձին՝ կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց թվի և տևողության սահմանափակման, պաշտպանի հետ ծանոթանալ գործի նյութերին և այլն: Պատահական չէ, որ տվյալ իրավունքի սահմանափակման դեպքերը գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ուշադրության կենտրոնում: Որպես ասվածի վկայություն՝ տեղին է մեջբերել վերջինիս կողմից կայացված մի քանի որոշում՝ վերոնշյալ իրավունքի սահմանափակման հետ կապված.

- ✓ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Գալստյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ զուգակցված,

- ✓ Թաղևոսյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Կարապետյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Աշուրյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի հետ զուգակցված,
- ✓ Գասպարյանն ընդդեմ Հայաստանի – Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի:

Նշված բոլոր գործերով դիմումատուներին չեն տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություններ՝ իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար<sup>10</sup>:

Տվյալ իրավունքը նախատեսված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով, որի համաձայն. «Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ընթացքում իրավունք ունի բավարար ժամանակ ու հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար»: Նույն հոդվածի «դ» կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ընթացքում իրավունք ունի դատվելու իր ներկայությամբ և պաշտպանելու իրեն անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. եթե նա չունի պաշտպան՝ տեղեկացված լինի այդ իրավունքի մասին և ունենա իր համար նշանակված պաշտպան ցանկացած դեպքում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, նրա համար անհատույց բոլոր այն դեպքերում, եթե նա

բավականաչափ միջոցներ չունի այդ պաշտպանին վճարելու համար»:

**Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել, որ ազատությունից զրկվելու դեպքում այդ մասին իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու՝ մարդու իրավունքը սահմանափակման չի կարող ենթարկվել, քանի որ, մարդու իրավունքներն ամրագրող միջազգային համընդհանուր փաստաթղթերի համաձայն՝ անձի պաշտպանության, իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու, նրա հետ հաղորդակցվելու իրավունքներն ունեն իմպերատիվ բնույթ և հռչակված են որպես անխախտելի և պարտադիր իրավունք:**

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածը (նախկին Սահմանադրության 21-րդ հոդված) ամրագրում է հանրահայտ՝ **անմեղության կանխավարկածի** սկզբունքը: Դրա համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Նախկին Սահմանադրությունը, բացի վերոնշյալը, նախատեսում էր նաև դրույթ, ըստ որի, նախ՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, ինչպես նաև չփարատված կասկածները մեկնաբանվում են hoqուտ մեղադրյալի:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը նաև քրեադատավարական կարևորագույն սկզբունքներից է և ապահովում է անձի իրավունքների պաշտպանությունը, բացառում չհիմնավորված մեղադրանքները և անհիմն դատապարտումը: Անձի մեղավորությունը կարող է հիմնավորվել միայն օրենքով սահմանված ապացուցման միջոցներով և բավարար ապացույցների առկայության դեպքում, ընդ որում՝ ապացուցման ողջ ծանրությունը (ապացուցման պարտականությունը) պետք է կրեն մեղադրող մարմինները:

Անմեղության կանխավարկածն անհրաժեշտ է անձին անհիմն մեղադրանքներից պաշտպանելու առումով՝ իշխանության հնա-

<sup>10</sup> Տե՛ս << կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վիճակը: Ուսումնասիրություն (2007-2015 թթ.): Վանաձոր, 2016թ.:

րավոր չարաշահումների սահմանափակման համար: Դա ամրագրված է նաև միջազգային իրավական փաստաթղթերում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»:

ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվի հրապարակային դատական քննության միջոցով, որի ընթացքում նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի վերլուծությունը վկայում է ընդհանուր բնույթի այն մոտեցման առկայության մասին, որ ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը<sup>11</sup>:

Չենք սխալվի, եթե ասենք, որ հանցավորության դեմ պայքարի պրակտիկայի համար չկա ավելի հավաստի ուղեցույց, քան անմեղության կանխավարկածի անվերապահ ընդունումը և ճիշտ ընկալումն է: Այս սկզբունքի գոյությանը է պայմանավորվում անձի դրությունը հասարակության և պետության մեջ, դրա ճիշտ գործելուց է կախված այն, թե արդյոք անհատի իրավունքները և ազատությունները համար-

վում են բարձրագույն արժեք տվյալ պետությունում:<sup>12</sup>

**Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն:** Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի վրա: Մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում են դատախազը և քննիչը: Այս կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք»:

Քրեական դատավարության ընթացքում մեղադրյալի մեղքի ապացուցումը դատավարության մեղադրող կողմի պարտականությունն է: Դեռևս լրիվ չապացուցված, կասկած հարուցող փաստը չպետք է դրվի որոշման՝ դատավճռի հիմքում կամ պետք է մեկնաբանվի հոգուտ մեղադրյալի: Ելնելով անմեղության կանխավարկածից՝ վարույթն իրականացնող մարմիններն իրավունք չունեն ապացուցման պարտականությունը դնել մեղադրյալի վրա՝ պահանջել, որ նա ապացուցի իր անմեղությունը:

Անմեղության կանխավարկածի՝ քննարկվող խնդիրների համատեքստում քննարկման կարիք ունի այսպես կոչված «**լռության իրավունքը**», երբ անձի կողմից իր անմեղության վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը, ինչպես նաև նրա լռությունը չեն կարող հիմք ծառայել նրա մեղավորության վերաբերյալ եզրահանգում անելու հարցում: Ընդհանուր առմամբ՝ քանի որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը, վերջինիս կողմից լռություն պահպանելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

Այսինքն՝ անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է այն, որ. «**Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը**»:

<sup>11</sup> Տե՛ս «Բարբարան և այլք ընդդեմ Իսպանիայի» գործով ՄԻԵԴ որոշում: СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ. Еրևան, 2016թ., էջ 62:

<sup>12</sup> Տե՛ս Савицкий В., Презумпция невиновности, Москва, с. 18, 1997, с. 2:



Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով կայացրած որոշման. «...Մեղադրողին ներկայացվող պահանջը՝ կրելու նրա դեմ առաջադրված մեղադրանքն ապացուցելու պարտականությունը, կազմում է արդարացի դատաքննության ընդհանուր գաղափարի բաղկացուցիչ մասը»: Մեղադրանքի կողմը պարտավոր է, մի կողմից, ապացուցել մեղադրանքը, մյուս կողմից՝ հերքել կասկածյալին, մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկները: Վ.Սլույսևսկու բնորոշմամբ՝ մեղադրյալի վրա չի կարող դրվել ճշմարտության բացահայտմանն աջակցելու պարտականություն:

**Ֆամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի** գործով մեղադրյալը ձերբակալվել էր սահմանագծին՝ Ֆրանսիա հերոին ներկրելիս: Ֆրանսիական օրենսդրությունը նախատեսում է, որ արգելված ապրանքների, այդ թվում՝ հերոինի ներկրումը ենթադրվում է ապօրինի, եթե այդ ապրանքը ներկրող անձը հակառակը չի ապացուցել, օրինակ՝ այն դեպքում, երբ ներկայացվում են բավարար արդարացնող փաստաթղթեր, կամ երբ ապացուցվում է, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում:

Ներկայացվող գործում պաշտպանության կողմը ոչ մի նման արդարացնող ապացույց չէր ներկայացրել, իսկ մեղադրյալը հրաժարվել էր որևէ բացատրություն տալուց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրեց, որ որևէ անթույլատրելի բան չկա, որ այն մարդը, ով իր տիրապետության տակ ունի այնպիսի գույք, որն արգելված է, պետք է բավարար ձևով բացատրի այդ փաստը<sup>13</sup>:

**Բարբերան, Մեսեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի** գործով 1988թ. վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հետևյալ բովանդակությունը. «...6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Դա պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները

կատարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի»<sup>14</sup>:

Անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «**չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու**» պահանջը:

Մեղադրյալի մեղավորության վերաբերյալ կասկածների առկայությունը հանգեցնում է մեղադրյալի արդարացմանը, եթե սպառված են լրացուցիչ ապացույցներ հավաքելու բոլոր հնարավոր միջոցները: Սա նշանակում է, թե՛ մեղադրանքը հիմնավորող փաստերի վերաբերյալ չփարատված կասկածների առկայության դեպքում այդ փաստերը պետք է հանվեն ապացույցների համակարգից, և դրանով իսկ չփարատված կասկածները մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Երբ դիտարկում ենք այս սկզբունքը, հավանական է համարվում, որ կառաջանա մի իրավիճակ, երբ վերջնական արդյունքով կունենանք ապացուցած մեղավորություն, որին հանգեցրել են անուղղակի ապացույցների համակցությունը և մեղադրյալի՝ իր լռելու իրավունքից օգտվելու հանգամանքը: Այսինքն՝ մի վիճակից, որին հակառակ ոչինչ չի ապացուցվել, հանգել ենք ապացուցված մեղավորության, հետևաբար՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի գործել:

**Գրեյսոնը և Բարնհամն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել է հետևյալ կարևոր հարցին. «...Դատախազության վրա էր դրված ապացուցման ծանրությունը, որ դիմողը քննության առարկա ունեցվածքը ձեռք էր բերել տվյալ ժամանակահատվածում: ... Թեև դատարանն օրենքով սահմանված կարգով պարտավոր էր ենթադրել,

<sup>13</sup> Տե՛ս «Ֆամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի» գործով ՄԻԵԴ որոշում:  [<sup>14</sup> Տե՛ս «Բարբերան և այլք ընդդեմ Իսպանիայի» գործով ՄԻԵԴ որոշում:](http://hudoc.echr.coe.int/eng#{)

թե այդ ունեցվածքը ձեռք էր բերվել թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ, այդ ենթադրությունը կարող էր ժխտվել, եթե դիմողն ապացուցեր, որ ունեցվածքը ձեռք է բերվել օրինական ճանապարհով: Բացի դրանից՝ դատավորի հայեցողությանն էր թողնվել ենթադրության վրա չհիմնվելը, եթե նա համարի, թե դրա վրա հիմնվելը կարող է արդարադատության իրականացումից հրաժարվելու լուրջ վտանգ առաջացնել...»: Այսինքն՝ դատարանն ունի կանխավարկածների վրա ինքնաբերաբար հիմնվելուց ձեռնպահ մնալու պարտականություն: Դատարանը պետք է պատշաճ կերպով կշռադատի ներկայացված ապացույցները, հանգամանորեն գնահատի դրանք և մեղավորության վերաբերյալ իր դատողությունները պետք է հիմնավորի դրանցով:<sup>15</sup>

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները (մասնավորապես՝ Vassilios Stavropoulos v. Greece), համարում է, որ որևէ որակական տարբերություն չպետք է դրվի ապացույցների բացակայության և անձի անմեղությունը կասկածի տակ չդնող արդարացման դատավճռի հիմքով քրեական գործի ավարտման միջև:

**Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհերքելի է դառնում, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, և այդ բեռը կրում է մեղադրանքի կողմը, ինչպես նաև չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ մեղադրյալի:**



<sup>15</sup> Տե՛ս Մաքքրայդ Զ., Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան), թարգմանություն, Երևան, 2009, էջ 228-230:

ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1995 թվականի հուլիսի 5-ի ընդունումից ի վեր անցել է շուրջ 21 տարի: Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում ընդունվել է Հիմնական օրենքը, այնպիսի խնդիրների առաջ էր դրել ամբողջ հայ ժողովրդին, որպիսիք են. 1) գոյատևումը, 2) տնտեսության քայքայված վիճակի վերականգնումը, 3) աշխատատեղերի վերականգնումը, 4) պատերազմը, 5) հասարակության բնականոն զարգացումը:

Նոր անկախացած երկիրը, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, ձևավորում է իր անկախ ինստիտուտները, ստեղծում է պետական ապարատը, հին պետական և հասարակական սկզբունքները վերափոխվում են անկախ նոր սկզբունքներով, նոր արժեքներով: Նոր արժեհամակարգ ստեղծելու նպատակով Հայաստանի հիմնական օրենքի բազմաթիվ դրույթները վերցվել են նորմատիվ դաշտի հարուստ և կայացած այնպիսի եվրոպական երկրների սահմանադրություններից, որպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան: Տվյալ երկրների բազմադարյա փորձը մարդու իրավունքների, պետական մարմինների կայացման, ինչպես նաև սահմանադրական դրույթների նկատմամբ վերահսկողություն իրականացման հետ կապված սկզբունքները ներդնելով՝ Սահմանադրությունը կոչված է նաև իրականացնելու լուրջ կազմակերպական գործառույթ, որի համաձայն՝ ոչ միայն ամբողջականացվում է ձեռք բերածը, այլև հասարակության առջև նոր խնդիրներ են դրվում՝ վերակազմակերպելու հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան, գտնելու դրան համապատասխան կառուցակարգային լուծումներ, ձևավորելու սահմանադրականության երաշխավորման իրավաքաղաքական նախադրյալներ<sup>1</sup>:

Առհասարակ՝ վերջին դարերում մարդկության համար տեխնիկական միջոցների զարգացումը, բազմաթիվ ոլորտների ավտոմատացումը թեև հանգեցնում են դրական առաջընթացի, միևնույն ժամանակ՝ ճակատագրական են ազդում այլ ոլորտների վրա՝ էկոլոգիական աղետներ, բարոյափոփոխական դեգրադացում: Վերը նշվածից ենթադրվում է, թե մարդկության պատմությունը զարգանում է ալիքաձև՝ վերելքները, հաջողությունները փոխարկվում են լճացմամբ և **բարոյափոփոխական անկմամբ**: Նշված նրբությունները բազմաթիվ մտավորականներին ստիպել են ժամանակին անդրադառնալ համապարփակ առաջընթացի չափանիշներին: Որոշներն այդպիսի առաջընթացը տեսնում էին գիտատեխնիկական առաջընթացում, իսկ ահա հայտնի ֆրանսիացի, անգլիացի լուսավորիչներն այդպիսի առաջընթացը տեսնում էին ռացիոնալ տարրերի ներթափանցումը հասարակական կյանքի կազմակերպման մեջ: Ինչպես ցույց է տալիս, սակայն, պատմությունը՝ հասարակական կյանքում առավել արագորեն զարգանում են ոչ ռացիոնալ տարրերը, մասնավորապես՝ XX-րդ դարը հիշատակվեց տեխնիկական լուրջ հաջողություններով, որպիսիք լայն կիրառություն ստացան ինչպես Առաջին այնպես էլ երկրորդ աշխարհամարտերով: Հասարակական խնդիրներն ազգայինից ժամանակի ընթացքում վերածվում են վերազգայինի, քանի որ այդ խնդիրները պատճառ են դարձել հարյուրավոր միլիոնների հասնող մարդկային զոհերի: Այստեղ պատմությունը ներկայիս մարդկության սերնդի առջև դրել է հետևյալ խնդիրը՝ ինչպես ապահովել մարդկության խաղաղ, համատեղ գոյակցությունը:

Հավագույն լուծումները, ըստ էության, տրվել

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>1</sup> Հարությունյան Գ, Վաղարշյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ. – Եր.: «Իրավունք», 2010, էջ 12:

են նաև ՀՀ Սահմանադրության (Սահմանադրության փոփոխություններ) տեքստային տարբերակներում: Այդուհանդերձ՝ ակնհայտ է, որ այն լուծումները, որոնք տրվել են նորմատիվային դաշտում, հետ են մնում իրականությունից: Տեղին է հիշել Հեգելի դատողություններն իրավունքի բովանդակության առնչությամբ, երբ շեշտում էր, որ հասկացությունը և իրական հարաբերություններում դրա գոյությունը երկու տարբեր բաներ են՝ ինչպես հոգին և մարմինը, որոնք միմյանցից բաժան լինել չեն կարող<sup>2</sup>: Ավելին՝ սահմանադրական ընկալումների ու հասարակական իրողությունների միջև որոշակի ներդաշնակություն պետք է լինի. ներդաշնակություն ցանկալի ու իրականի միջև, հանրային ճանաչում գտած ու վարքագծի հիմնարար կանոն դարձած արժեքի ու իրական վարքագծի միջև<sup>3</sup>: Վերը շարադրվածի պատկերն ստիպում է ձևավորել նոր համակարգ՝ ապահովված նոր երաշխիքներով: Սահմանադրության ընդունված լինելը, դեռևս հեռու է պահում երկրում սահմանադրականության հաստատված լինելուց: Սահմանադրական դրույթները պետք է արտացոլեն հիմնական զարգացման այն ուղղությունները, որոնք հասարակությունը պահանջում է իշխանությունից: Նորմերը պետք է արտահայտեն իրականությունը և ձգտեն կատարելության, մինչդեռ իրականությունն ստիպում է սահմանադրական դրույթներին վերաբերել առանց վստահության, քանի որ այն երաշխիքները, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ, հաճախ տարբեր պատճառներով պայմանավորված գործիք են դառնում իշխանության ձեռքում և չեն պահպանվում: Այնուամենայնիվ, հասարակությունը պետության առջև որոշակի պահանջներ դնելու հնարավորությունը պայմանավորված է «առողջ» հասարակություն ունենալով, որի կայացման անմիջական պարտականությունը կրում է իշխանությունը: Վերջինիս գործողությունները պետք է ուղղված լինեն կրթված և բարձր իրավագիտակցությամբ օժտված հասարակության ձևավորմանը և դրա հետագա զարգացման և կատարելագործման համար համապատասխան պայմանների ստեղծմանը: Երկրում սահմանադրական մշակույթի դրսևորման կարևոր բնութագրիչներից է սահմանադրական պատշաճ մակարդակի իրավագիտակցությունը: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու և գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց տարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների: Հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջև աններդաշնակությունը սոցիալական անհամաձայնությունների ու կատակլիզմների պատճառ կարող է հանդիսանալ<sup>4</sup>: Վերը նշված գործառույթները կատարած լինելուց հետո նոր հնարավոր է խոսել այնպիսի գաղափարներից, որպիսիք են ժողովրդավարությունը, ժողովրդահիշխանությունը, իրավունքի գերակայությունը և այլն: Սահմանադրական անվերապահելի պահանջ է պետական մարմիններին սահմանափակել մարդկանց իրավունքներով, այդուհանդերձ՝ հարց է առաջանում. արդյոք ներկայիս հասարակությունը, ոչ բարձր իրավագիտակցությամբ օժտված, կարողանում է օգտվել իր իրավունքներից: Խնդիրն այն է նաև, որ հասարակության բջիջները՝ մարդիկ, հրաժարվում են պատշաճ կատարելուց իրենց պարտականությունները, սակայն ցանկանում են օգտվել իրենց համար անհասկանալի իրավունքներից: Սահմանադրականությունը ենթադրում է իրավունքի գերակայություն, հարգանք մարդու նկատմամբ՝ որպես բարձրագույն արժեք, իշխանության բաժանում, զսպումների և հակակշիռների ինստիտուտի ներդրում: Նշվածները սոսկ փոքր մասնիկն են այն սկզբունքներից, որոնք կարող են պետու-

տարելագործման համար համապատասխան պայմանների ստեղծմանը: Երկրում սահմանադրական մշակույթի դրսևորման կարևոր բնութագրիչներից է սահմանադրական պատշաճ մակարդակի իրավագիտակցությունը: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու և գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց տարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների: Հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջև աններդաշնակությունը սոցիալական անհամաձայնությունների ու կատակլիզմների պատճառ կարող է հանդիսանալ<sup>4</sup>: Վերը նշված գործառույթները կատարած լինելուց հետո նոր հնարավոր է խոսել այնպիսի գաղափարներից, որպիսիք են ժողովրդավարությունը, ժողովրդահիշխանությունը, իրավունքի գերակայությունը և այլն: Սահմանադրական անվերապահելի պահանջ է պետական մարմիններին սահմանափակել մարդկանց իրավունքներով, այդուհանդերձ՝ հարց է առաջանում. արդյոք ներկայիս հասարակությունը, ոչ բարձր իրավագիտակցությամբ օժտված, կարողանում է օգտվել իր իրավունքներից: Խնդիրն այն է նաև, որ հասարակության բջիջները՝ մարդիկ, հրաժարվում են պատշաճ կատարելուց իրենց պարտականությունները, սակայն ցանկանում են օգտվել իրենց համար անհասկանալի իրավունքներից: Սահմանադրականությունը ենթադրում է իրավունքի գերակայություն, հարգանք մարդու նկատմամբ՝ որպես բարձրագույն արժեք, իշխանության բաժանում, զսպումների և հակակշիռների ինստիտուտի ներդրում: Նշվածները սոսկ փոքր մասնիկն են այն սկզբունքներից, որոնք կարող են պետու-

● ԳՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>2</sup> Гегель Г. Философия права: Пер. с нем., М., 1990, С 59:  
<sup>3</sup> <http://concourt.am/armenian/library/cclibrary/2016/book-monitoring-2016.pdf>  
<sup>4</sup> Հարությունյան Գ., Վաղարշյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհանուր խմբագրությամբ.- Եր.: «Իրավունք», 2010, էջ 15:

թյան զարգացման տրամագիծն ուղղել դեպի կայունություն:

Պետությունը՝ որպես համակարգ, բավականին բարդ է, քանի որ պարունակում է այնպիսի բարդ համակարգ, որպիսին հասարակությունն է: Ժամանակակից հասարակությունը, ինչպես հաճախ ընդունված է ասել, բաց համակարգ է, քանի որ վերջինիս զարգացման համար անհրաժեշտ է այլ համակարգերից ռեսուրսների ներթափանցումը: Այդպիսի համակարգեր կարող են լինել, առաջին հերթին, բնությունը, իսկ հետո միայն՝ մարդու անհատական աշխարհը: Հասարակությունը նաև դինամիկ համակարգ է, որպիսի հանգամանքը նշանակում է, որ նա անընդհատ փոփոխվում է, հինը փոխարինում է նորին, և ինչքան անցնում է ժամանակը, այդ տեմպերն ավելի և ավելի են արագանում:

Հասարակությունն առավել բարդ համակարգ է, այդ դրսևորվում է մի քանի չափանիշով՝ ա) փոփոխությունների բարձր դինամիկա, բ) բազմաշերտություն, գ) տարբեր հանգույցներ, կապեր, հարաբերություններ հասարակության ենթահամակարգերի և տարրերի միջև, դ) հասարակության տարրեր՝ մարդիկ, ովքեր զինված են կամքով, ազատությամբ, ընտրությամբ, որպիսիք վերջիններիս վարքագիծը դարձնում են անկանխատեսելի: Հասարակությունը, թեև ինքնաբավ չէ, այդուհանդերձ գոյություն ունեցող բարդ համակարգերից գրեթե ամենաինքնակարգավորվողն է: Այդ հանգամանքը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ համակարգի մեջ գործում են մարդիկ, ովքեր օժտված են գիտակցությամբ, որն էլ նրանց թույլ է տալիս ընկալել նրանց գործողությունները, իմաստավորել նպատակները, կանխատեսել արդյունքները՝ այդ գործառնություններն էլ հենց պայմանավորում են ինքնակարգավորման էությունը: Եթե փորձենք կիրառել սիներգետիկայի լեզուն, ապա կարելի է փաստել, որ, ինչպես յուրաքանչյուր համակարգում, այնպես էլ հասարակության մեջ, կան կայուն զարգացման որոշակի ժամանակահատ-

վածներ, որոնք փոխարկվում են քառսի տարրերով: Այդուհանդերձ՝ այն հանգամանքը, որ մարդիկ օժտված են գիտակցությամբ, թույլ է տալիս վերահսկել քառսը, ուղղորդել անորոշությունը որոշակիության: Տեղին է հիշել կանտյան կատեգորիկ իմպերատիվը, որն իրավական ոլորտում հանդես է գալիս հետևյալ բովանդակությամբ համընդհանուր օրենքի տեսքով. «Արտաքուստ վարվիր այնպես, որ քո կամայականության ազատ դրսևորումը համատեղելի լինի համընդհանուր օրենքին համապատասխանող յուրաքանչյուրի ազատության հետ»<sup>5</sup>:

Պետական այն համակարգերում, որոնցում, Սահմանադրության հետ մեկտեղ, առկա է սահմանադրականությունը, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձևավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն, և կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ՝ քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, վերջինիս սահմանափակելով իրավունքով<sup>6</sup>:

Վերջին հարյուրամյակների ընթացքում շատ է խոսվել իրավական, ժողովրդավարական պետության «կատարյալ» Սահմանադրության մոդելի մասին: Դեռևս 1928թ. հրատարակած «Սահմանադրության մասին ուսմունք» մենագրության մեջ Կ. Շմիթը խոսում էր «քաղաքացիական իրավական պետության Սահմանադրության կատարյալ հասկացության» մասին<sup>7</sup>: Իսկ, ահա, 2004թ. Սանտյագոյում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության գագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահ-

<sup>5</sup> Williams T. C, The categorical imperative, The concept of the categorical imperative, OXF. 1968.

<sup>6</sup> Հարությունյան Գ., Վաղարշյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ. Եր.: «Իրավունք», 2010, էջ 13:

<sup>7</sup> Carl Schmitt, Verfassungslehre, Berlin 1993, S. 37-40.

մանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Արված կարևոր հետևություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու կատարյալ Սահմանադրություն լինել: Դա յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաև միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոտեցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձևախեղումներից խուսափելն է, գիտակցումը, որ սահմանադրական պետությունը ձևավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով: Էական է և այն, որ սահմանադրական մշակույթն ավելի կայուն է, քան սահմանադրական համակարգերը, սակայն դրանց գոյաբանական ներքին կապն անխզելի է: Սահմանադրականությունը սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ՝ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման<sup>8</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ ժամանակակից հասարակության առջև դրված են բազմաթիվ մարտահրավերներ: Այդ մարտահրավերները կարող են հաղթահարվել միայն այն դեպքում, երբ ընկալվում, վերհանվում են առկա խնդիրները, մշակվում են համապատասխան մեխանիզմներ խնդիրների լուծման վերաբերյալ, կանխատեսվում են հնարավոր արդյունքները, և զսպվում են հնարավոր վատացման ռիսկերը: Վերը նկարագրված խնդիրներն առաջ են քաշում ամբողջովին նոր պահանջներ՝ մշակելու և ներդնելու որակապես նոր ամբողջական համակարգ, որը կոչված կլինի իրականացնելու սահմանադրական ախտորոշում (դիագնոստիկա) և Սահմանադրության մշտադիտարկում (մոնիտորինգ),

որպիսիք թույլ կտան գտնել, գնահատել, վերականգնել խախտված սահմանադրական հավասարակշռությունը, ինչպես նաև ապահովել կայունությունը և հասարակության զարգացման դինամիկան: Իրական կյանքի զարգացումները ցույց են տալիս, որ ներկայումս սահմանադրական դիագնոստիկայի և մոնիտորինգի մեխանիզմները բացակայում են, մինչդեռ առկա սահմանադրական վերահսկողության և արդարադատության համակարգն ի գործու չէ դիմակայելու ժամանակակից մարտահրավերներին:

Սահմանադրության ներկայիս կարգավիճակի, դերի, կարգավորվող ոլորտների և, ամենակարևորը՝ էության շուրջ պատկերացումները հասարակության կողմից թողնում են բավականին խեղաթյուրված պատկեր: Պատճառները կարող են լինել տարբեր՝ սոցիալական անապահովվածությունից մինչև արտագաղթ, որակյալ կրթություն ստացած և այդ գիտելիքները կիրառող մտքի արտահոսք և այլն: Այդուհանդերձ՝ վերը նշված խնդիրները նույնպես հանգեցնում են հենց այն գործառույթի իրականացմանը, որպիսին սահմանադրական մշտադիտարկումն է: Խնդիրն այն է, որ թե՛ հանրային կառավարչական լիազորություններով օժտված սուբյեկտները, թե՛ դատական իշխանության մարմինները, թե՛ օրինաստեղծ և օրենքը կիրառող պետական և ոչ պետական մարմիններն իրենց վարքագիծը համապատասխանեցնեն ՀՀ Սահմանադրությամբ հռչակված արժեքներին՝ ընկալելով այն դրույթները, որոնք ներառում են գաղափարներ, և շարժվեն այդ գաղափարներով: Նշված գաղափարների և իրականության միջև հակասությունների բացահայտումը սահմանադրական մշտադիտարկման կարևորագույն խնդիրներից մեկն է, որը պարզում է թե որքանով է գործում Սահմանադրությունը, կան արդյոք դեկլարատիվ բնույթ ունեցող նորմեր, թե՛ ոչ, ինչպե՞ս են Սահմանադրության փոփոխություններն ազդում մարդկանց իրավագիտակցության վրա: Վերջինիս մակարդակը վկայում է պետության արժեքների, գաղափարախոսության, պաշտպանության պահպանման սահմանաչափերի մասին: Գիտակցությունը բացառապես մարդու կողմից

<sup>8</sup> <http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010>



աշխարհի իմաստավորման և այդ աշխարհում իր կողմնորոշման միջոցն է: XX-րդ դարի փիլիսոփայական միտքը բախվել էր անհատական գիտակցության և հասարակական գիտակցության հարաբերակցությանը: Ֆրանսիացի մտավորական Է. Դյուրբադյանը եկել է այն եզրահանգման, որ անհատական գիտակցությունը պարունակում է հասարակական գիտակցության երկու մակարդակ՝ զուտ անհատական գիտակցություն և այն մակարդակը, որը ներառում է այլ մարդկանց գիտակցության տարրեր, մասնավորապես՝ գաղափարներ, արժեքներ, բարոյական նորմեր և այլն: Հասարակական գիտակցությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Այդպիսի ձևերից մեկն է նաև իրավագիտակցությունը: Հարկ է նշել, որ Սահմանադրության մշտադիտարկման՝ որպես առանձին ինստիտուտի ներդրման խնդիրները պայմանավորված են որոշ գործառնական և ինստիտուցիոնալ լուծումներով: Գործառնական խնդիրներից մեկն է ապահովել Սահմանադրության սահմանադրականությունը: Սահմանադրությունը կարող է իրականացնել իր առջև դրված պատվիրանը միայն այն դեպքում, երբ հիմնարար սահմանադրական արժեքներն ու սկզբունքներն արտացոլում են հասարակության արժեհամակարգը, նրանց պատկերացումները և իրավագիտակցության մակարդակը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: Նմանատիպ դրույթներ նախատեսվում են նաև այլ պետությունների հիմնական օրենքներում (Պորտուգալիա, Լեհաստան, Ֆրանսիա): Հետաքրքիր է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 80-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ Նախագահը ոչ միայն Սահմանադրության երաշխավորն է, այլ նաև՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների: Պատահական չէ, որ պետությունների մեծ մասում հիմնական օրենքի երաշխավոր են հենց պետությունների գլուխները: Այդ երկրներում Սահմանադրության պահպանմանը հետևող անձն էլ, կարելի է ենթադրել, իրականացնում է Սահմանադրության մշտադիտարկում: Մշտադիտարկման իրականացման արդյունքներն էլ, ըստ էության, կարող են արտա-

հայտվել հանրաքվեի միջոցով: Նման պարագայում Հանրապետության Նախագահը ձեռք է բերում սկզբունքային գործառույթ՝ անընդհատ իրականացնելով Սահմանադրության մշտադիտարկում:

Եթե մինչև XVIII դարն իրավաքաղաքական մտքի զարգացումը հանգեցրեց Սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է: Ինչպես տեսանք՝ «սահմանադրականությունը» բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական հասկացություն է, որը, առաջին հերթին, ենթադրում է սահմանադրական ժողովրդավարության հաստատում: Դա նպատակ է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղի ընտրած երկրները: Սակայն այդ նպատակի իրականացումը պահանջում է, մասնավորապես, այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը և երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, անհրաժեշտ իրավագիտակցությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանվածությունը և այլն: Սահմանադրական արդարադատության մարմինների համաշխարհային խորհրդաժողովի առաջին կոնգրեսում առանձնահատուկ կարևորվեց այն խնդիրը, որ շատ երկրներում սահմանադրականության հաստատումը նկատելիորեն հետ է մնում սահմանադրական փաստաթղթային այն լուծումներից, որոնք, որպես իրավական մտքի ու մարդկային քաղաքակրթության ձեռքբերումներ, հաճախ ընդօրինակվելով՝ չեն դառնում տվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգի օրգանական բաղադրատարրը: Սահմանադրականության հաստատման համար Սահմանադրության առկայությունը դեռևս բավարար չէ: Ավելին՝ Մեծ Բրիտանիան, չունենալով մեկ առանձին Հիմ-

նական օրենք, ներկայումս համարվում է Եվրոպայի իրավական, ժողովրդավարական կայացած պետություններից մեկը: Խնդիրը սահմանադրական հիմնարար սկզբունքներն ազգային իրավական համակարգում և հասարակական պրակտիկայում կյանքի կոչելու մեջ է<sup>9</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ սահմանադրական մշտադիտարկում չհրականացնելու պայմաններում Սահմա-

նադրության պահպանմանը հետևելու գործառույթը, ինչպես արդարացիորեն ընդգծում է Գ.Գ. Հարությունյանը, ունի ձևական բնույթ, իսկ սահմանադրական նորմերի գերակայությունը և «իրացվելիությունը» հասարակության մեջ ներդնումն ապահովումը սահմանադրական հիմնարար արժեքների և սկզբունքների իմաստավորված գոյությունը՝ հաստատելով այդպես սահմանադրականությունը:



<sup>9</sup> Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում, Եր.: Նժար, 2016, էջ 29:

**ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի  
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

*Յուրաքանչյուր կոալիցիա, հարկապես՝ այնպեղ,  
որպեղ մի կուսակցությունն ավելի ուժեղ է, քան մյուսը,  
սահմանափակված է ունենալ հիերարխիկ կարգուկանոն:*

**Պեղեր Հուկ**

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման կարգ ունեցող երկիր է: Պառլամենտական համակարգը նկարագրվում է՝ որպես օրենսդիր և գործադիր իշխանության միաձուլում, որտեղ գործադիր իշխանությունը կարիք ունի ունենալ խորհրդարանի մեծամասնության վստահությունը, որպեսզի գա իշխանության, որը և պահպանի<sup>1</sup>: Էսոսելով ՀՀ-ում Ազգային ժողովի մասին՝ պետք է նշենք, որ, ըստ ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ: Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան<sup>2</sup>:

Այս կառավարման ձևի համատեքստում կարևորվում են պառլամենտի՝ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի ընտրությունները, որոնց միջոցով ձևավորվում է երկրի բարձրագույն քաղաքական, իրավական մարմինը: Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունենում ՀՀ Սահմանադրության և ՀՀ ընտրական օրենսգրքի հիման վրա: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ Ազգային ժողովը կազմված է 101 պատգամաորից, ովքեր ընտրվում են համամասնական ընտրակարգով, հինգ տարի

ժամկետով<sup>3</sup>: Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ազգային ժողովի ձևավորման համար անհրաժեշտ է, որ խորհրդարանում ձևավորվի կայուն մեծամասնություն, և եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ: Փաստորեն, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով խորհրդարանում կայուն մեծամասնության ձևավորելու հնարավորությունը:

Քաղաքական կոալիցիան, սովորաբար, ժամանակավոր պակտ է կամ համագործակցություն երկու կամ ավելի կուսակցության միջև և նպատակ ունի ունենալու ավելի մեծ քաղաքական ազդեցություն կամ ուժ, քան յուրաքանչյուր կուսակցություն կունենար՝ առանձին վերցված<sup>4</sup>: Այլ կերպ ասած՝ քաղաքական կոալիցիան կամ քաղաքական միությունը համագործակցության համաձայնագիր է տարբեր քաղաքական կուսակցությունների միջև՝ ընտրություններին հաղթելու կամ ընտրություններից հետո կառավարության մեջ լինելու համար: Գիտության մեջ տարանջատվում են քաղաքական կոալիցիաների հետևյալ տեսակները.

➤ Ընտրական միություններ: Այս միության հիմնական նպատակն է ռեսուրսների կենտրոնացման միջոցով ունենալ ավելի լավ արդյունքներ ընտրություններից հետո: Սա կարող է դրսևորվել՝ թեկնածուներին միավորելով կուսակ-

<sup>1</sup> Տե՛ս [https://www.hks.harvard.edu/fs/pnorris/Acrobat/stm103%20articles/Cheibub\\_Pres\\_Parlt.pdf](https://www.hks.harvard.edu/fs/pnorris/Acrobat/stm103%20articles/Cheibub_Pres_Parlt.pdf), page 1.

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդված 88, 2015թ.

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդված 89-90, 2015թ.

<sup>4</sup> Տե՛ս <https://yali.state.gov/wp-content/uploads/sites/4/2016/01/Coalitions-A-Guide-for-Political-Parties.pdf>

ցություններին մեկ ընդհանուր թեկնածուի շուրջ, կամ պլյուրալիստական-մեծամասնական համակարգի դեպքում՝ համաձայնության ձեռքբերմամբ, որ քաղաքական ուժերը չեն մրցակցում միմյանց դեմ որոշակի ընտրատարածքում: Առավել հաճախ այս միությունների առաջնային նպատակն է հաղթել ընտրություններում կամ օրենսդիր մարմնում ձեռք բերել մեծամասնություն և ձևավորել հաջորդ կառավարությունը: Օրինակ՝ ըստ Ինդոնեզիայի ընտրական օրենսգրքի՝ նախագահի թեկնածություն կարող են առաջադրել միայն այն ուժերը, որոնք ժողովորդի ներկայացուցչական խորհրդում ղեկավարում են պատգամավորական տեղերի քսան տոկոսը կամ նախկին ընտրություններում ստացել են ազգային ձայների քսանհինգ տոկոսը: 2014 թվականին որևէ քաղաքական ուժ չէր ստացել վերոնշյալ քանակով ձայներ, և միայն քաղաքական ուժերի կոալիցիա կազմելու միջոցով ընտրվեց երկրի նախագահ<sup>5</sup>:

➤ Կոալիցիոն կառավարություն: Կոալիցիոն կառավարությունն առավել հաճախ հանդիպում է, երբ որևէ քաղաքական ուժ չի հաղթում ընտրությունները, և խորհրդարանում չի ապահովվում կայուն մեծամասնություն: Պառլամենտական համակարգերում խորհրդարանում մեծամասնություն կազմող ուժը միանում է իր նման հայացքներ ունեցող ուժի հետ և ձևավորում կառավարությունը: Օրինակ՝ 2013 թվականին Նորվեգիայի չորս նախկին ընդիմադիր ուժեր սկսեցին բանակցել կոալիցիոն համաձայնագրի շուրջ, ինչի շնորհիվ նրանցից երկուսը ստորագրեցին կոալիցիոն համաձայնագիր, իսկ մյուս երկուսը համաձայնվեցին աջակցել ընդհանուր քաղաքական հարցերում<sup>6</sup>:

➤ Մեծ կոալիցիա: Մեծ կոալիցիան հանդիպում է, երբ երկրի հիմնական քաղաքական ուժերը միանում են և ձևավորում կառավարություն: Կոալիցիայի այս տեսակը շատ հաճախ

չի հանդիպում, սա հիմնականում հանդիպում է, երբ երկրում առկա է քաղաքական ճգնաժամ, և այլ ելք հնարավոր չէ այդպիսի պարագայում: Բոլորովին վերջերս Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ձևավորել է նմանատիպ կոալիցիա Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ, առաջինը՝ 2005-2009 թվականներին, իսկ երկրորդը՝ 2013 թվականի ընտրություններից հետո<sup>7</sup>:

➤ Ազգային միության կառավարություններ: Ազգային միության կառավարությունները ձևավորվում են հիմնականում, երբ երկիրը գտնվում է քաղաքական ճգնաժամի մեջ: Առավել հաճախ այսպիսի դեպքերում նոր կառավարությունը հանձն է առնում նոր Սահմանադրության մշակումը և երկրում հիմնարար վերափոխումների իրականացումը: Այսպիսի կոալիցիայի դեպքում որոշումների կայացումը կարող է կատարվել առանց ժողովրդավար մեթոդների՝ հաշվի առնելով երկրի քաղաքական վիճակը:

➤ Օրենսդրական կոալիցիաներ: Այս կոալիցիաների հիմնական նպատակն է հասնել որևէ օրենսդրական փոփոխության՝ առանց գործադիր իշխանության բաժանման կոալիցիայի անդամների միջև: Այս տեսակի դեպքում հնարավոր է նաև ընդդիմության առկայությունը կոալիցիայի կազմում<sup>8</sup>: 1994 թվականից սկսած՝ մեքսիկական երեք ամենամեծ կուսակցություններից և ոչ մեկը չի ստացել խորհրդարանում հիսուն տոկոս կամ ավելի ձայներ ազգային ընտրություններում: 2012 թվականին այդ երեք կուսակցությունը ստորագրեցին օրենսդրական նախաձեռնությունների օրակարգ, որը հայտնի է որպես Մեքսիկական պակտ: Թեև այդ փաստաթղթում չէր խոսվում գործադիր մարմին կազմավորելիս կոալիցիայի մասին, սակայն փաստաթուղթն ընդգրկում էր մի քանի կարևորագույն հարցեր երկրի ի-

<sup>5</sup> St'ua Sara Schonhardt, "Indonesia's Political Parties Hurrying to Build Coalitions," Wall Street Journal, May 12, 2014, <http://blogs.wsj.com/searealtime/2014/05/12/indonesias-political-parties-hurrying-to-build-coalitions/>; and Wikipedia contributors, "Indonesian presidential election, 2014," Wikipedia, The Free Encyclopedia, accessed February 12, 2015, [http://en.wikipedia.org/wiki/Indonesian\\_presidential\\_election,\\_2014](http://en.wikipedia.org/wiki/Indonesian_presidential_election,_2014)

<sup>6</sup> St'ua Joachim Dagenborg, "Norway's Conservatives Clinch Coalition Deal," Reuters, October 7, 2013, <http://www.reuters.com/article/2013/10/07/us-norway-government-coalition-idUSBRE99600K20131007>; and Lars Bevanger, "Norway Election: Conservative Emma Solberg Triumphs," BBC, September 10, 2013, <http://www.bbc.com/news/world-europe-24014551>

<sup>7</sup> St'ua Wikipedia contributors, "Grand coalition (Germany)," Wikipedia, The Free Encyclopedia, accessed February 12, 2015, [http://en.wikipedia.org/wiki/Grand\\_coalition\\_\(Germany\)](http://en.wikipedia.org/wiki/Grand_coalition_(Germany))

<sup>8</sup> St'ua <https://yali.state.gov/wp-content/uploads/sites/4/2016/01/Coalitions-A-Guide-for-Political-Parties.pdf>

րավաքաղաքական կյանքի բարելավման մասով<sup>9</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ տեսության մեջ և գործնականում առկա են կոալիցիաների ձևավորման տարբեր նպատակներ: Սույն հոդվածի շրջանակներում մեզ հետաքրքրում է կոալիցիոն կառավարությունների ձևավորման ընթացքը: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են ՀՀ Ընտրական օրենսգրքով<sup>10</sup>: Ըստ ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 6 օրվա ընթացքում, ընտրական արգելապատնեշները հաղթահարած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք) կարող է քաղաքական կոալիցիա կազմել ընտրական արգելապատնեշները հաղթահարած այլ՝ առավելագույնը երկու կուսակցության (կուսակցությունների դաշինքների) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունն ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ: Մինչև կոալիցիա ձևավորելու վերջնաժամկետի օրվա ժամը 18:00-ն կոալիցիայի անդամ կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պետք է Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնեն կոալիցիա կազմելու մասին կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների անդամ բոլոր կուսակցությունների) մշտական գործող դե-

կավար մարմինների որոշումները: Կոալիցիա կազմելու մասին որոշումը պետք է պարունակի վարչապետի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը: Սահմանված ժամկետում նշված որոշումները չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում կոալիցիան համարվում է չձևավորված: Եթե ձևավորված կոալիցիան ստացել է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով<sup>11</sup> բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա կոալիցիան ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ կոալիցիայի մանդատների ընդհանուր քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 տոկոսը: Լրացուցիչ մանդատների կոալիցիային տրամադրման հարցը նույնպես կարգավորվում է Ընտրական օրենսգրքով: ՀՀ Ընտրական օրենսգրքի հոդված 97-ի 2-րդ մասով նախատեսված վերջնաժամկետի ավարտի հաջորդ օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին կամ Ազգային ժողով ընտրվելու մասին<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ ՀՀ Ընտրական օրենսգրքը հնարավորություն է տալիս, որ այն դեպքում, երբ մեկ քաղաքական ուժ կայուն մեծամասնություն չի ձևավորել Ազգային ժողովում, քաղաքական կոալիցիա կազմելու ձևով հնարավոր է ունենալ կայուն մեծամասնություն խորհրդարանում, եթե քաղաքական կոալիցիայի շնորհիվ այդ ուժը հատում է խորհրդարանում բաշխված մանդատների ընդհանուր թվի 54 տոկոսը:

Սույն իրավակարգավորումների շրջանակներում հարց է առաջանում, թե արդյոք այն դեպքում, երբ Ազգային ժողովի ձևավորումից հետո քաղաքական կոալիցիաները չեղարկում են իրենց քաղաքական կոալիցիա կազմելու մասին համաձայնագիրը, և որևէ քաղաքական ուժ խորհրդարանում չի ունենում կայուն մեծա-

<sup>9</sup> Տե՛ս “Pacto Por Mexico,” November 29, 2012, <http://pactopormexico.org/como/>; Andres Sada, “Explainer: What Is the Pacto por México?” Americas Society-Council of the Americas, March 11, 2013, <http://www.as-coa.org/articles/explainer-what-pacto-por-m%C3%A9xico>; Duncan Wood, “A Look at Mexico’s Political Reform-The Expert Take,” The Wilson Center, October 16, 2013, <http://www.wilsoncenter.org/article/look-mexico%E2%80%99s-political-reform-the-expert-take>; and “Choose Pemex over the pact,” The Economist, July 13, 2013, <http://www.economist.com/news/leaders/21581730-successful-cross-party-pact-has-broken-congressional-gridlock-it-must-not-become-obstacle>

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 89, 2015:

<sup>11</sup> Սույն մասերով կարգավորվում է Ազգային ժողովի մանդատների բաշխման գործընթացը:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգրք, հոդված 97, ՀՕ-54-Ն, 2016թ.:

մասնություն, անհրաժեշտ է նշանակել նոր ընտրություններ, թե՛ ոչ:

Շատ Արևմտաեվրոպական շատ երկներում առկա պառլամենտական կառավարման համակարգը հանգեցրել է այն արդյունքին, որ բազմակուսակցական կառավարությունը կամ, այսպես կոչված, կոալիցիոն կառավարությունը դարձել է հիմնադրույթ<sup>13</sup>: Նմանատիպ երկրներում առաջ է եկել, այսպես կոչված, առանց վերահսկողության օրենսդիր մարմնի տեսակը, երբ որևէ քաղաքական ուժ չի կազմում կայուն մեծամասնություն խորհրդարանում<sup>14</sup>: Այս խնդիրը լուծելու համար քաղաքական ուժերն առավել հաճախ կազմում են կոալիցիաներ և, ստանալով ձայների կայուն մեծամասնություն խորհրդարանում՝ կազմում կառավարություն: Սակայն, հաշվի առնելով, որ կոալիցիա կազմելու վերաբերյալ համաձայնագիրը որևէ կերպ չի պարտադրում կողմերին ցանկացած պահի դուրս գալու կոալիցիայի կազմից, պետք է նշենք, որ մեծանում է ռիսկն առանց կայուն մեծամասնության խորհրդարան ունենալու: Քաղաքական կոալիցիաների փլուզման պատճառները տարբեր կարող են լինել, օրինակ՝ քաղաքական հայացքների փոփոխումը, որևէ հարցի շուրջ կոալիցիայի անդամ կուսակցությունների անհամաձայնությունը և այլն: Առանց կայուն մեծամասնության խորհրդարանը վտանգում է երկրի սահմանադրական կարգը և հանգեցնում քաղաքական ճգնաժամի, իսկ վերջինս ազդում է երկրի տնտեսության և օրենսդրության զարգացման վրա: Կա շատ կարևոր մտահոգություն, որ առանց կայուն մեծամասնության խորհրդարանի՝ երկրի ֆինանսական շուկան կդառնա անկայուն<sup>15</sup>: Հաշվի առնելով, որ, ըստ ՀՀ Սահմանադրության, ՀՀ խորհրդարանը՝ Ազգային ժողովը, պետք է վերահսկողություն իրականացնի գործադիր մարմնի նկատմամբ, ակներև է, որ առանց կայուն մեծամասնության այդպիսի վերահսկողությունը դառնում է իմաստագուրկ և ունի միայն ձևական բնույթ: Առանց կայուն մեծամասնության խորհրդարանը ազդում է նաև օրենսդրական գործընթացի կայունության վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ

Սահմանադրության հոդված 103-ի երկրորդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի կանոնակարգը, «Ընտրական օրենսգիրքը», Դատական օրենսգիրքը, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, «Հանրաքվեի մասին» օրենքը, «Կուսակցությունների մասին» օրենքը և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը սահմանադրական օրենքներ են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, կարող ենք նշել, որ առանց կայուն մեծամասնության կվտանգվի օրենսդրական գործընթացի իրականացումը: Սույն խնդիրն ունի լուծման տարբեր ձևեր, որոշ երկրներում ձևավորվում է, այսպես կոչված, փոքրամասնության կառավարությունը, որը մինչև հաջորդ ընտրություններ ղեկավարում է երկրի իրավաքաղաքական կյանքը, որոշ երկրներում ձևավորվում է փոքրամասնության կառավարություն, և կարճ ժամանակում հայտարարվում են նոր ընտրություններ, այդպես տեղի ունեցավ, օրինակ, 1974 թվականին Անգլիայում, երբ վարչապետ Հարոլդ Վիլսոնը հայտարարեց նոր ընտրություններ անցկացնելու մասին<sup>16</sup>:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ առանց կայուն մեծամասնության խորհրդարանն սպառնում է երկրի սահմանադրական կարգին և առաջացնում է քաղաքական ճգնաժամեր, հետևաբար՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության մեջ ավելացնել սույն հոդվածը հետևյալ բովանդակությամբ.

Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով, եթե խորհրդարանում կայուն մեծամասնությունը ձևավորվում է կոալիցիա կազմելու միջոցով, և Ազգային ժողովի կազմավորումից հետո մինչև չորս տարվա ընթացքում կոալիցիայի համաձայնագիրը վերացվում է, և մեծամասնություն ունեցող կուսակցությունը մեկ ամսվա ընթացքում կոալիցիայի համաձայնագիր չի ստորագրում այլ կուսակցության հետ և ձևավորում կայուն մեծամասնություն խորհրդարանում, ապա Ազգային ժողովն արձակվում է, և նշանակվում է Ազգային ժողովի նոր ընտրություն՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում:

<sup>13</sup> Տե՛ս <http://people.duke.edu/~gsv5/AJPS2004.pdf>, page 24.

<sup>14</sup> Տե՛ս [https://en.wikipedia.org/wiki/Hung\\_parliament](https://en.wikipedia.org/wiki/Hung_parliament)

<sup>15</sup> Տե՛ս Constitutional Process following a general elections, 2010, page 29

<sup>16</sup> Տե՛ս [https://en.wikipedia.org/wiki/Labour\\_government\\_1974%E2%80%939379#Wilson.27s\\_cabinet\\_.28March\\_1974\\_.E2.80.93\\_April\\_1976.29](https://en.wikipedia.org/wiki/Labour_government_1974%E2%80%939379#Wilson.27s_cabinet_.28March_1974_.E2.80.93_April_1976.29)



**ԱՐՏԱՇԵՍ ԽԱԼԱԹՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՃՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՄ**

### **Նախաբան**

Խորհրդարանական համակարգի հաստատումը Հայաստանում հավակնում է երկրաժաշժի էֆեկտ ունենալ մեր երկրի հասարակական-քաղաքական կարգի համար: Հայաստանի Երրորդ հանրապետության 25-ամյա պատմության ընթացքում ձևավորված քաղաքական համակարգն այլևս համարժեք չէ նոր սահմանադրական իրողությանը, և դրա ապամոնտաժումն այլևս Սահմանադրության պահանջն է:

Այդուհանդերձ՝ գոնե ներկայումս հնարավոր չէ կանխատեսել, թե ինչպես կգործառնինոր կառավարման մոդելը Հայաստանում. կդառնա՞ պետության բարենորոգման և առաջանցիկ զարգացման ինստիտուցիոնալ հիմքը, թե՞ կստեղծի սահմանադրական-քաղաքական սուր ճգնաժամեր՝ դրանցից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ամեն դեպքում՝ միջին տարբերակ չի լինելու, քանզի նոր համակարգն էապես բարձրացրել է հասարակության և պետության սահմանադրական-քաղաքական հասունության և պատասխանատվության նշաճողը: Ուրեմն և՛ կա երկու տարբերակ. կան հայրենի քաղաքական համակարգը ոչ հեռու ապագայում կհարմարվի «խաղի» նոր կանոններին, և մենք կարձանագրենք նոր որակի պետության կառուցման գործընթացի մեկնարկ, կան հայ հասարակության և քաղաքական ինստիտուտների ներուժը չի բավարարի նոր պահանջներին, ինչը կհանգեցնի պետության թուլացման:

Այս առումով ամենամեծ պատասխանատվությունը, թերևս, ընկած է Հայաստանի կուսակցական համակարգի վրա, որը պետք է

ստանձնի քաղաքական և պետական որոշումների գեներացման գործառույթը և ուղղորդի հայոց պետականության նավը ներքին և արտաքին քաղաքականության փոթորկալից հորձանուտում:

### **Որոշ դիտարկումներ խորհրդարանական կառավարման համակարգում կուսակցությունների դերի և նշանակության մասին**

Խորհրդարանական կառավարման համակարգի փիլիսոփայության առանցքը քաղաքական իշխանության և կառավարման կոլեգիալության գաղափարն է: Դասական իմաստով պառլամենտարիզմը քիչ տեղ է թողնում անձերի և անձնիշխանության համար և հիմնված է կոլեգիալ քաղաքական ինստիտուտների վրա՝ կուսակցություններ, խորհրդարան, կառավարություն: Այս թվարկման հաջորդականությունն իսկ ցույց է տալիս, որ նշված եռամիասնության մեջ համակարգաստեղծ նշանակություն ունեն հենց կուսակցությունները: Ի վերջո՝ խորհրդարանական կառավարման ձևի դեպքում կուսակցություններն են այն միակ քաղաքական խողովակը, որի միջոցով ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունը՝ ձևավորելով օրենսդիր մարմին, որն էլ, իր հերթին, կազմավորում է պետաիշխանական մնացյալ համակարգը:

Կուսակցությունները խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ժողովրդի իշխանության քաղաքական պատվիրակման շղթայի առաջնային օղակն են<sup>1</sup>: Կուսակցություններն այն բանալին են, որով հասարակու-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ, № 99 2017

<sup>1</sup> St' u Müller W. C. Political parties in parliamentary democracies: Making delegation and accountability European Journal of Political Research 37, 2000, էջ 310:

թյունը գործարկում է պետական մեքենայի շարժիչը և ապահովում պետության մեխանիզմի բնականոն գործունեությունը<sup>2</sup>: Հետևաբար՝ կուսակցությունների կայացածությունը, դրանցում որոշումների ընդունման ժողովրդավարական կառուցակարգերի գործողությունը, ընտրություններին թեկնածուների առաջադրման գործընթացի թափանցիկությունն ու կուսակցությունների հանրային հաշվետվողականությունը, հստակ գաղափարախոսական-քաղաքական ծրագրի և տեսլականի առկայությունը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ ունեն, անկյունաքարային կարևորություն ամբողջ պետական համակարգի ձևավորման և գործունեության սահմանադրականության համար, քանի որ պետական իշխանության բարձրագույն մարմինները, փաստորեն, ձևավորվում են կուսակցությունների կողմից, խորհրդարանում իշխանություն-ընդդիմություն հարաբերակցությունը ևս, ի վերջո, հանգում է խորհրդարանում ներկայացված որոշակի կուսակցությունների ներկայացուցիչների քաղաքական համակեցությանը: Չմոռանանք նաև, որ ժողովրդավարական քաղաքական համակարգ ունեցող պետություններում Սահմանադրությունը, այդ թվում նաև Հայաստանի Սահմանադրությունը (հոդվ. 8), կուսակցությունների վրա դնում է ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման առաքելությունը, ինչն արդեն իսկ հուշում է, որ կուսակցությունները պետք է ունենան սոցիալական զարգացման տեսլական՝ հիմնված հստակ և իրատեսական գաղափարախոսության ու քաղաքական ծրագրի վրա, որը ձևավորվում է ընտրողների հետ մշտական անմիջական և հետադարձ կապի ու շփումների արդյունքով: Կուսակցությունների քաղաքական ծրագիրը պետք է հիմնված լինի հասարակության տարբեր շերտերի շահերի ազդեցական և համադրման վրա՝ շեշտադրելով որոշակի թիրախային սոցիալական խմբերի՝ որպես տվյալ կուսակցության առաջնային սոցիալական հենարան:

Եթե կուսակցությունները կայացած չեն, չկան հստակ տարանջատված գաղափարական հոսանքներ, կաղում է կուսակցական կար-

գապահությունը, քաղաքական գործիչները չունեն քաղաքական մշակույթի անհրաժեշտ մակարդակ, ապա անիմաստ է ակնկալել, որ խորհրդարանական կառավարման համակարգը կարող է իրացնել իր ողջ սահմանադրարավական և քաղաքական ներուժն ու ապահովել ժողովրդավարական և դինամիկ գործող հասարակական և պետական կարգ: Ավելին՝ նման պայմաններում խորհրդարանական կառավարման համակարգը կարող է վերածել ավտորիտարիզմի՝ միակուսակցական կառավարման կամ մեկ կուսակցության կամ քաղաքական բևեռի գերիշխանության ձևով:

Այստեղ կա ևս մեկ խնդիր: Կուսակցությունները նույնիսկ զարգացած ժողովրդավարություններում որոշակի շահերի վրա հիմնված մարդկանց միավորումներ են, և միանգամայն բնական է, որ նրանց կորպորատիվ շահը կարող է և հակասության մեջ մտնել հանրային շահի հետ: Չէ որ քաղաքական գործիչները և նրանց ներկայացնող կուսակցությունները ձգտում են հնարավորին երկար պահել իշխանությունը, ինչն օբյեկտիվորեն նրանց դարձնում է առավել զգուշավոր, որոշակիորեն ամբոխահաճո՝ հակված չլինելով դիմելու հասարակության այս կամ այն հատվածին հուզող քաղաքական խնդիրների լիարժեք լուծման, արմատական փոփոխությունների, քանի որ դա կարող է հանգեցնել իրենց քվեների նվազման սոցիալական այլ խմբերի շրջանում: Նաև դրանով պայմանավորված՝ քաղաքական կուսակցությունները հակված են վերածելու փակ կառույցների և հանրային շահի սպասարկման իրենց հիմնական գործառույթի իրականացումը ստորադասելու անձնական կամ խմբակային շահերին: Հետևաբար՝ եթե չլինեն համապատասխան սահմանադրական-իրավական զսպիչ մեխանիզմներ, կուսակցությունները կարող են փաստացի իրենցով փոխարինել հանրային-պետական ինստիտուտները և խորհրդարանական կառավարման համակարգը վերածել կուսակցապետության:

Նման հակազդման մեխանիզմ է, օրինակ՝ խորհրդարանական կառավարման համակարգի պարագայում պետության գլուխը, ով, որ-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 99 2017

<sup>2</sup> Ст'у Силаев В. С. Роль партий в политической системе РФ, <http://cyberleninka.ru/article/n/rol-partiy-v-politicheskoy-sisteme-rossiyskoy-federatsii>, էջ 19:

պես կանոն՝ անկուսակցական է: Այդպիսին է միապետը խորհրդարանական միապետություններում՝ Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում և այլուր, կամ նախագահը Գերմանիայում, Իսրայելում, սահմանադրական փոփոխություններից հետո՝ նաև Հայաստանում: Անկուսակցական պետության գլխի ինստիտուտի առկայությունը թույլ է տալիս հավասարակշռել հանրային և պետական շահն ու քաղաքական համակարգի սուբյեկտների քաղաքական շահերն ու նկրտումները՝ ապահովելով սահմանադրական կարգի կենսունակությունը: Տարբեր պետությունների Սահմանադրություններով կամ ընթացիկ օրենսդրությամբ նախատեսված են պետական պաշտոններ, որոնց ստանձնումը թույլատրվում է միայն անկուսակցական անձանց՝ գլխավոր դատախազ, ոստիկանապետ, կենտրոնական բանկի նախագահ և այլն, նախատեսված են կուսակցությունների ներքին ժողովրդավարության, ֆինանսական թափանցիկության վերաբերյալ պահանջներ: Բնականաբար, շատ կարևոր է նաև հասարակության և պետության իրավագիտակցության և սահմանադրական մշակույթի բարձր աստիճանը, լայն իմաստով ժողովրդավարական քաղաքական ավանդույթի առկայությունը, երբ քաղաքականության սուբյեկտների սահմանադրական վարքագիծը վաղուց արդեն դարձել է օրինակելի նորմ, որն ապահովվում է ոչ միայն պետության, այլև քաղաքացիական հասարակության ջանքերով: Ամուր սոցիալական իմունիտետով քաղաքացիական հասարակության գոյությունն ուժեղ կռվան է, որը սահմանափակում է կուսակցությունների քաղաքական սուբյեկտիվիզմը և թույլ չի տալիս, որ քաղաքական ուժերը դառնան փակ բյուրոկրատական կառույցներ:

Խորհրդարանական կառավարման համակարգի կենսունակ գործունեության և սահմանադրական կարգի ընդհանուր կայունության համար կարևոր է նաև, որ քաղաքական դաշտը բաժանված չլինի բազմաթիվ փոքր կուսակցությունների, այլ լինեն առավելագույնը 4-5 խոշոր և գաղափարական հստակ ու ինքնու-

րույն ուղենիշներով քաղաքական ուժեր, որոնք, ունենալով կայուն ընտրազանգված և սոցիալական համապատասխան հենարան, ունակ լինեն առանձին կամ կոալիցիայի ձևով խորհրդարանում կազմավորելու կայուն մեծամասնություն և ձևավորելու գործունակ կառավարություն:

Կայուն, խոշոր կուսակցությունների առկայությունը, այլ հավասար պայմանների պարագայում, վկայում է կուսակցական համակարգի որոշակի կայացածության մասին և նախադրյալներ է ստեղծում կայուն և գործունակ օրենսդիր ու գործադիր իշխանության ձևավորման համար: Նման համակարգեր են գործում Իսրայելում, Գերմանիայում, Իսպանիայում, Իտալիայում և այլուր: Նշված պետություններում կայուն կուսակցական համակարգը թույլ է տալիս որոշակիորեն չեզոքացնել խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային հիմնական ռիսկերից մեկը՝ խորհրդարանական կայուն մեծամասնության բացակայությունը, և որպես դրա հետևանք՝ կառավարությունների հաճախակի փոփոխությունը, ինչը բացասաբար է ազդում պետության սահմանադրական կայունության և զարգացման վրա:

Հատկանշական է, որ կուսակցությունների խոշորացման խնդրին մեծ կարևորություն է տրվել նաև ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, որում նշվում է երկբևեռ քաղաքական համակարգի ձևավորման կարևորության մասին, որի հնարավորություններն ընձեռում է նոր՝ խորհրդարանական կառավարման համակարգն ու դրա համատեքստում խորհրդարանի դերի բարձրացումն ու կայուն ընտրական համակարգի սահմանումը<sup>3</sup>:

Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում կուսակցությունների համարժեք դերի և նշանակության ամրապնդման համար շատ կարևոր է նաև ընտրական համակարգը: Ընտրական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր նշանակություն և առաքելություն, կենտրոնանում է որոշակի թի-

<sup>3</sup> Տես Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, [http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan\\_barepokhumner.14.10.pdf](http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner.14.10.pdf), էջ 35-36:

րախային հարցերի վրա: Օրինակ՝ մեծամասնական ընտրակարգի հիմնական նշանակությունը քաղաքականությունը շարքային ընտրողին ավելի «մոտ» դարձնելու խնդիրն է, երբ յուրաքանչյուր ընտրատարածքի բնակիչները կկարողանան ընտրել իրենց պատվիրակներին խորհրդարանում, որը կկարողանա ներկայացնել և պաշտպանել իրենց շահերը: Միևնույն ժամանակ՝ դասական մեծամասնական համակարգը կայուն և կայացած կուսակցությունների առկայության դեպքում կարող է լուծել նաև կառավարման կայունության խնդիրը, քանի որ կուսակցությունները, տեղերում ունենալով գործունակ կառույցներ և ընտրողների հետ գրագետ աշխատելով, կարող են առաջադրել ընտրողների վստահություն վայելող թեկնածուների, ովքեր, յուրաքանչյուր ընտրատարածքից միայն մեկ թեկնածու ընտրվելու շնորհիվ, կկարողանան հաղթել իրենց մրցակիցներին և այդպիսով ապահովել նաև իրենց կուսակցության հաղթանակը կամ պատկառելի ներկայությունը խորհրդարանում: Այդպիսով՝ խոշոր կուսակցությունները կարողանում են դուրս մղել փոքրերին և ձևավորել կայուն մեծամասնություն խորհրդարանում և գործունակ կառավարություն: Անկատար կուսակցական համակարգի պայմաններում մեծամասնական ընտրակարգը հանգեցնում է կուսակցությունների ռեսուրսի փոշիացմանն ու պառակտմանը և, որպես հետևանք՝ քաղաքականության գերանձնավորմանը, համապետական և տեղական շահերի ներկայացվածության միջև համամասնության խախտմանը: Նման պայմաններում դժվար է ակնկալել, որ խորհրդարանում կձևավորվի գործունակ և կարգապահ մեծամասնություն, որն ի վիճակի կլինի ձևավորելու «աշխատող» կառավարություն և ապահովելու սահմանադրական կայունությունը երկրում:

Համամասնական ընտրական համակարգի պայմաններում քաղաքական ուժերը հայտնվում են շահեկան վիճակում, քանի որ խորհրդարանի ձևավորման ողջ գործընթացը կատարվում է կուսակցական ցուցակներով, և այդպիսով՝ կուսակցությունը կամ կուսակցությունները հնարավորություն են ստանում ընտրությունների արդյունքով անվերապահորեն ձևավորելու օրենսդիր և գործադիր իշխանություն:

Կարծիք կա, թե՛ տեղական շահերը համամասնական ընտրակարգի պայմաններում ստորադասվում են համապետական շահին: Այդուհանդերձ՝ անցումային ժողովրդավարական համակարգերում նախընտրելի է հենց խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների պարզ համամասնական համակարգի կիրառումն այն պատճառով, որ կուսակցությունները նման պետություններում չունեն կուռ կազմակերպական կառուցվածք, գաղափարախոսական հենք և չեն տիրապետում ընտրողների հետ աշխատելու և սեփական վարկանիշը բարձրացնելու տեխնոլոգիաներին, որոնք վաղուց արդեն օրինաչափություն են արևմտյան կայացած քաղաքական համակարգերում: Այլ կերպ ասած՝ կուսակցությունները, հատկապես՝ խորհրդարանական կառավարման ձևի դեպքում, ունեն որպես կուռ և դինամիկ քաղաքական-կազմակերպական և գաղափարական միավորներ կայանալու խնդիր, քանզի ժողովրդի կողմից ընտրվող ուժեղ նախագահի ինստիտուտի բացակայությունը կուսակցությունների վրա է դնում պետության կառավարման համար հիմնական քաղաքական և իրավական պատասխանատվությունը: Պարզ համամասնական ընտրակարգն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կուսակցությունների նշված խնդիրների լուծման համար, քանի որ, մի կողմից, թուլացնում է անհատի դերը քաղաքական գործընթացներում, ինչը կարևոր է խորհրդարանական կառավարման համակարգի բնականոն գործառնման համար, թույլ է տալիս ընտրողներին ընտրություն կատարել ոչ այնքան կամ ոչ միայն անձերի, այլ՝ կուսակցությունների գաղափարների և ծրագրերի միջև, ընտրողների գիտակցությունում ձևավորում է հստակ կապ կուսակցության և նրա քաղաքական ծրագրի միջև, ինչը թույլ կտա հետագայում արձանագրել, թե խորհրդարան անցած կուսակցություններն ինչպես և որքանով են առարկայացնում իրենց նախընտրական ծրագրային դրույթները պետության քաղաքականության մեջ:

Այս ամենը, մի կողմից, նպաստում է կուսակցությունների կայացմանը՝ որպես ամենօրյա ռեժիմով գործող կազմակերպություններ, ընտրողների հետ ուղղակի և հետադարձ կապի միջոցով խթանում է կուսակցությունների

«բրենդավորման» գործընթացը, իսկ մյուս կողմից՝ կուսակցությունների մեջ ստեղծում է միավորման անհրաժեշտության գիտակցում, քանզի խորհրդարանական կառավարման պարագայում խորհրդարանում մեծամասնություն ստանալու կամ ներկայացված լինելու համար կուսակցություններից պահանջվելու են շատ ավելի մեծ քաղաքական, ֆինանսական և այլ ռեսուրսներ, որոնց առանձին վերցրած փոքր կուսակցությունները չեն տիրապետում, բայց կարող են ունենալ, եթե միավորվեն: Իսկ խոշոր կուսակցությունների առկայությունը, ինչպես նշվեց, կայունացնող ազդեցություն է ունենում քաղաքական համակարգի վրա և հատկապես պառլամենտական համակարգի պարագայում դառնում է ներքաղաքական և սահմանադրական կայունության երաշխիքներից մեկը:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ պարզ համամասնական համակարգն առնվազն անցումային շրջանում թույլ է տալիս խթանել կուսակցական շինարարության և կուսակցությունների կայացման գործընթացը և բարենպաստ պայմաններ ստեղծել խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետ գործողության համար:

Ինչ վերաբերում է համամասնական ընտրակարգի այլ դրսևորումներին, մեծամասնական ընտրակարգին կամ մեծամասնական և համամասնական ընտրակարգերի խառը մոդելին՝ այս ընտրական համակարգերը, ունենալով որոշ, երբեմն նաև ակնառու դրական կողմեր, այդուհանդերձ՝ կիրառելի են առավելապես զարգացած ժողովրդավարական համակարգերում, որտեղ գործում են կայացած պետական ինստիտուտներ և զանգվածային կուսակցություններ, հասարակությունն ունի ավելի բարձր իրավագիտակցություն և այլն: Պատահական չէ, որ նշված ընտրակարգերը գործում են հենց առաջադեմ եվրոպական երկրներում՝ Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում և այլուր:

**Հայաստանի կուսակցական համակարգը կառավարման նոր ձևի պայմաններում**

Խորհրդարանական կառավարման համակարգի գործառնման արշալույսը Հայաստանի կուսակցական համակարգը դիմավորում է բազմաթիվ իրավական և քաղաքական խնդիրներով: Թերևս՝ ճիշտ կլինի փաստել, որ Հայաստանում ներդրվող կառավարման մոդելն իր բնույթով ավելի առաջադիմական է, քան այն սոցիալական միջավայրը, որում պետք է գործի: Սրա պատճառները բազմաթիվ են և հանգում են անկախությունից ի վեր Հայաստանում արմատավորված անձնակենտրոն քաղաքական ավանդույթին: Վերջինիս հիմքերը դրվեցին 1991թ., երբ Հայաստանում սկզբնավորվեց նախագահակենտրոն համակարգը, որը բյուրեղացավ 1995թ. Սահմանադրության ընդունմամբ: Նախագահի ինստիտուտի գերարժևորումը և փաստացի անսահմանափակ լիազորություններով օժտումը դարձավ կուսակցությունների զարգացման հիմնական արգելակներից մեկը: Նախագահի ինստիտուտը, չավարտված պատերազմի և սոցիալ-տնտեսական լրջագույն խնդիրների պայմաններում, որոշ առումով օբյեկտիվորեն սկսեց սահմանափակել քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացը և ձևավորել իշխող կուսակցության հեգեմոնիայի վրա խարսխված գործնականում որևէ սահմանադրական և քաղաքական հակակշռով չկաշկանդված անձնիշխանական քաղաքական-պետական համակարգ:

Սկզբնական շրջանում, որքան էլ որ պարադոքսալ հնչի, Հայաստանում կար նման իշխանական ուղղաձիգի ձևավորման որոշակի սոցիալական պահանջարկ: Արտաքին քաղաքական վտանգաշատ իրավիճակը, կապիտալիստական-լիբերալ կացութաձևի անցման հետևանքով օրախնդիր դարձած սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումները, պետականության ավանդույթների բացակայության հետևանքով քաղաքական կուսակցությունների և մյուս կոլեգիալ քաղաքական ինստիտուտների անկատարությունը հասարակության մեջ «ուժեղ ձեռքի» ինչ-որ առումով հիմնավորված անհրաժեշտություն էր առաջացրել: Այդ պատճառով նախագահը փաստացի դարձավ քաղաքական համակարգի միակ կենտրոնակ և լեգիտիմ ինստիտուտը՝ իր ձեռքում կենտրոնացնելով ընդարձակ լիազորություններ, որոնց մի մասը չունեի սահմանադրափրավական հիմք, այլ իրականացվում էր մնացյալ քաղաքական ինստիտուտների ոչ պատշաճ

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

գործունակության հետևանքով: Նման դեպքերի համար դիպուկ է արտահայտվել պրոֆեսոր Ա. Հարությունյանը, ով համարում է, որ եթե պետության քաղաքական համակարգն ու պետական ինստիտուտները կայացած չեն, ապա հասարակության իրավագիտակցության մակարդակը դեռևս թույլ չի տալիս ընկալել պառլամենտարիզմի էությունը, և որպես արդյունք՝ հանրությունը հակված է անձնավորել իշխանությունը, նախագահի սահմանադրական լիազորությունների ծավալից և հակակշիռներից ու զսպումներից անկախ՝ նախագահի փաստացի լիազորությունները կարող են գերազանցել Սահմանադրությամբ կանխորոշված շրջանակները: Այստեղ շատ բան կախված է նախագահի անձնական հատկանիշերից<sup>4</sup>:

Նախագահի՝ որպես անձ-ինստիտուտի նման կարգավիճակը ներքաղաքական հարթությունում նրան դարձրեց քաղաքական պատասխանատվության հիմնական սուբյեկտ, իսկ քաղաքական կուսակցությունները փաստացի դադարեցին գործուն մասնակցություն ունենալ պետության կառավարմանը: Այդ պատճառով խորհրդարանը՝ որպես բարձրագույն ներկայացուցչական մարմին, ևս ըստ պատշաճի չէր իրականացնում իր օրենսդրական և վերահսկողական գործառույթը: Նույնը վերաբերում է նաև կառավարությանը: Այս զարգացումներն անխուսափելիորեն հանգեցրին Հայաստանի քաղաքական կյանքի գերանձնավորմանը: Կուսակցությունները չդարձան ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման խողովակը, այլ, փոխարենը սկսեցին սպասարկել ուժեղ քաղաքական անհատների անձնական նկրտումները՝ թերանալով կուսակցաշինության գործում: Այս առումով, թերևս, առանձնանում է իշխող կուսակցությունը, որը, նախագահի քաղաքական հենարանը լինելու ուժով, ձեռք է բերել որոշակի կայուն կազմակերպական կառուցվածք և քաղաքական դիմագիծ: Սակայն այս իրողությունը հիմնականում պայմանավորված է նախագահի ինստիտուտի անձով, այլ ոչ թե կուսակցության բնականոն ներքին զարգացմամբ:

Այսօր արդեն, երբ սահմանադրական փոփոխությունների հետևանքով իրավիճակը կտրուկ փոխվել է, կուսակցությունները կանգնել են իրենց անցած քաղաքական ուղին վերահիմաստավորելու և արմատական վերափոխման հրամայականի առջև: Մասնավորապես՝ առաջնահերթ խնդիր է նրանց անձնակենտրոնության նվազեցումը, կուսակցությունների կառավարման ժողովրդավարական ապարատի ձևավորումը, քաղաքական ուժերի խոշորացման խթանումը և, որպես արդյունք բազմաթիվ փոքր, սոցիալական բավարար հենարան չունեցող, գաղափարախոսության իմաստով միմյանց կրկնող կուսակցությունների միավորումը կամ ավելի խոշորների կողմից կլանումը և մի քանի զանգվածային կուսակցությունների առաջացումը, որոնք կունենան հստակ գաղափարախոսական տարանջատվածություն, քաղաքական ծրագիր-մանիֆեստ և կայուն սոցիալական հենարան:

Այս համատեքստում ընթացող զարգացումները, ցավոք, բավարար վստահություն չեն ներշնչում կուսակցական համակարգի շուտաթույթ զարգացման առնչությամբ: Մասնավորապես՝ «Կուսակցությունների մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» նոր օրենքներում անպատասխան են մնացել այնպիսի հարցեր, ինչպիսիք են կուսակցությունների կառավարման ներքին ժողովրդավարական մեխանիզմների և երաշխիքների սահմանումը, կուսակցության ընտրական ցուցակների կազմման, թեկնածուների առաջադրման հրապարակայնությունը, կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության ապահովման երաշխիքները և այլն: Ավելին՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված բաց ցուցակներով համամասնական ընտրակարգը, կուսակցությունների ինստիտուցիոնալ զարգացումը խթանելու փոխարեն, ուժեղացնում է անձի գործոնը կուսակցությունների մրցակցությունում, բացասաբար է ազդում կուսակցությունների կոնսոլիդացման և խոշորացման գործընթացի վրա և թուլացնելով կուսակցությունների քաղաքական ռեսուրսը, պարարտ հող ստեղ-

<sup>4</sup> Տե՛ս Арутюнян А. Ш. Институт президента в постсоветских республиках: конституция и политическая реальность (Сравнительно-правовой анализ), Ереван, Петакан цараяютюн, 2006, [http://hrlibrary.umn.edu/russian/hrtsbook/Rinstituteofpresident.html#\\_Toc113431802](http://hrlibrary.umn.edu/russian/hrtsbook/Rinstituteofpresident.html#_Toc113431802)



ծում առանձին ընտրատարածքներում ազդեցության խմբերի վարչաֆինանսական լծակների կիրառման համար:

Այս իրավիճակում տրամաբանական է, որ մենք ականատեսն ենք դառնում ոչ այնքան գաղափարական պայքարի, ընդհանուր արժեքների վրա հիմնված կուսակցական դաշինքների և միավորումների ձևավորման, որքան խոշոր կապիտալի տիրապետող անձանց շուրջ արհեստական միավորումների, որոնք չունեն ո՛չ հստակ գաղափարական հենք և ո՛չ էլ՝ իրատեսական քաղաքական ծրագիր:

Այս համատեքստում հարկ է առանձնացնել նաև քաղաքացիական հասարակության դերը քաղաքական մշակույթի զարգացման և նոր որակի քաղաքական համակարգի ձևավորման գործում: Ի տարբերություն կուսակցությունների, որոնք չեն կարողանում վեր կանգ-

նել նեղ-կոնյուկտուրային շահերից և իրավամբ ստանձնել հանրային-քաղաքական նոր օրակարգի ձևավորման գործը, քաղաքացիական հասարակությունը վերջին տարիներին արձանագրել է բավական հուսադրող հաջողություններ իրավագիտակցության բարձրացման, քաղաքական ակտիվիզմի աճի, հասարակության հուզող խնդիրների ձևակերպման և առաջմղման առումներով: Այս հանգամանքը հույս է ներշնչում, որ հասարակության ներսում գեներացվող առողջ քաղաքացիական գործընթացները, երիտասարդության՝ նոր սերնդի աստիճանական ներգրավումը հանրային-քաղաքական գործընթացներում ի վերջո կապահովեն իրենց արդյունքը՝ բարեշրջելով հայ հասարակության և պետության զարգացման քառորդարյա հարացույցը:



ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Այնտեղից կառավարման ակադեմիայի ասպիրանտ»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Պետություն և աշխարհագրություն: Կամ արդյոք դրանց միջև օրինաչափ կապ: Այս հարցադրման տեսանկյունից մեր առջև հառնում են որոշակի խնդրահարույց հարցեր, մասնավորապես՝ պետության տարածքի և իր սահմանադրական կառույցի միջև կապը, պետության էական կազմակերպակառուցվածքային գծերի և իր տարածքի, աշխարհագրական դիրքի միջև կապը: Արդյոք մենք անկախ պետականության կերտման ընթացքում, բացի գործնական արտաքին քաղաքական գործունեությունից, փորձել ենք տեսնել այդ կապերը, ճանաչել դրանք և օգտագործել որպես պետականաշինության գործոններ:

Հենց սկզբում փաստենք, որ, երևի թե՛ ոչ: Պետականագիտության դիրքերից բարձրացված հարցը, երևի թե, խորապես ամենաքիչ հետազոտված, սակայն դիլետանտիզմի մակարդակով նույնիսկ հոգնեցուցիչ ծավալով արծարծված հարցերից մեկն է մեզանում: Անկախ պետության գոյության ավելի քան 25 տարվա ընթացքում մենք էականորեն չկարողացանք կապել մեր ազգային պետությունն ու նրա բնակչությունն իր իսկ տարածքի հետ: Բայց պետությունն առաջին հերթին տարածքային կազմակերպություն է, այսինքն՝ որպես երևույթ ունի

ծագման և գոյության երկու հիմնական բնական-օբյեկտիվ նախադրյալներ, այն է՝ երկրագնդի ցամաքային մասի որևէ տարածք և դրա վրա ապրող բնակչություն<sup>1</sup>: Այս առումով՝ տարածքի ու պետության միջև գոյություն ունի սերտ կապ: Տարածքն իր չափերով, աշխարհագրական միջավայրով ազդում է պետության կառուցման և պետական քաղաքականության առանձնահատկությունների վրա: Սակայն տարածքի ու պետության կապի այս տեսանկյունն ամենից առաջ շեշտադրում է տարածքի՝ որպես ներպետական գործոնի առանձնահատկությունները<sup>2</sup>: Այս ուղղությամբ, իհարկե, ամեն մի պետական կառույց մոդելավորելիս և իրական կազմակերպության վերաձելիս անպայմանորեն փորձում են հաշվի առնել տարածքի ներպետական առանձնահատկությունները, արտացոլել դրանք հիմնադիր օրենսդրական կարգավորման մեջ: Այս տեսանկյունից ՀՀ-ն իր սահմանադրական կարգավորման ներկա համակարգով (1995 թ. սկսած) փորձել է տալ համապատասխան սահմանադրական լուծումներ, որոնք, իհարկե, իդեալական ու ավարտուն չեն, բայց, համենայն դեպս, լուծումներ են:

Պետք է նկատի ունենալ, որ պետության

<sup>1</sup> Տարածքը պետության գոյության ոչ թե հասարակական, այլ՝ բնական պայմանն է: Տարածքն ինքը պետություն չի ծնում: Դա է միայն տարածությունն է, որի սահմաններում պետությունը տարածում է իր իշխանությունը: Այսպիսով՝ և՛ բնակչությունը, և՛ տարածքը պետության ծագման ու գոյության նյութական նախադրյալներն են: Չի կարող լինել պետություն առանց տարածքի և բնակչության (տե՛ս Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն, Եր., ԳՈՇ, 1997, էջ 71):

<sup>2</sup> Ինչպես ցույց է տալիս պատմական փորձը՝ «ինքը՝ պետության հողը, տարածքը կազմում է այն ռազմավարական ռեսուրսը, որն իր նշանակությամբ հնարավոր է, որ գերազանցում է մնացած բոլոր ռեսուրսները: Տարածքային տիրույթների իրական չափերը չեն կարող այս կամ այն ձևով և չափով չազդել ինչպես պետության բնույթի, այնպես էլ նրա շահերի հիմնարար պարամետրերի վրա: Լանդշաֆտը, հողի պտղաբերության աստիճանը, բնական ռեսուրսներն անմիջական կերպով ազդում են ինչպես ժողովրդական տնտեսության կառուցվածքի ու եկամտաբերության, այնպես էլ բնակչության խտության վրա: Տոպոգրաֆիան և կլիմայական պայմանները ծայրահեղ կարևոր են հաղորդակցության ուղիների զարգացման, ռեսուրսների ու ժողտնտեսական ինֆրակառուցվածքի տեղաբաշխման, ներքին և արտաքին առևտրի համար...» (տե՛ս Гаджиев К.С. Введение в геополитику. Изд. 2-ое, доп. и перераб., М., Логос, 2000, էջ 40):

տարածքն ունի մեկ այլ դրսևորում, այն է՝ արտաքին: Նախ և առաջ՝ արդի պետությունն ունի միջազգայնորեն ճանաչված տարածքային սահմաններ, որոնցով սահմանազատված է այլ (հարևան) պետություններից: Վերջինները պատմականորեն իրար հանդեպ կարող են լինել բարեկամաբար կամ թշնամաբար տրամադրված: «Իշխանությունը մարդկային հասարակության մեջ միշտ, բոլոր ժամանակներում ձգտել է նրա տարածքային չափերի առավել ընդարձակմանը, որտեղ վերջնական սահմանն իմաստավորված տարածությունն է (վերջին հաշվով՝ մոլորակը): Այս հիմնական գաղափարից ծնվել են համաշխարհային գերիշխանության, աշխարհին, մայրցամաքներին, օվկիանոսներին տիրելու, միջազգային հարաբերությունների կառուցման տեսությունները: Սա իմացության մի ահռելի ոլորտ է, որի մի մասը նվիրված է այսօրվա ժողովրդավարական նվաճումներով իրավիճակին, սակայն դեռևս չվերացված սպառնալիքներով ու վտանգներով»<sup>3</sup>: Որպես ասվածի պատկերավոր հաստատման օրինակ՝ ներկայացնենք այն փաստը, որ երկրագնդային քաղաքակրթության պատմության վերջին 5000 տարվա ընթացքում մարդկությունը մոտավորապես 4700-ը պատերազմել է, իսկ պատերազմների թիվն այդ ընթացքում հաշվվում է 13-14 հազար: Դրանց հիմնական մասը եղել են տարածքային կամ տարածքի համար մղվող պատերազմ-

ները: Այս պատմական օրինաչափության ճանաչման իմացաբանական հետևանքն աշխարհաքաղաքականության՝ որպես գիտական ոլորտի ձևավորումն ու զարգացումն էր<sup>4</sup>: Անգլերեն «geopolitics» բառի ծագումնաբանությունը գալիս է հունարեն geo – հող, աշխարհ և politike – պետության կառավարման արվեստ բառերից<sup>5</sup>: Աշխարհաքաղաքականությունը որպես քաղաքական տեսություն ծագել է XIX դարի վերջին – XX դարի սկզբին և օգտագործում է աշխարհագրական գործոնները (երկրկնների, պետությունների, դրանց դաշինքների տարածքը, դրանց դիրքը, բնական, կլիմայական և այլ առանձնահատկությունները) այս կամ այն ծրագրերի ու հաշվարկների (տնտեսական, քաղաքական, ազգային, նվաճողական, գաղափարական և այլն) հիմնավորման համար<sup>6</sup>: Աշխարհաքաղաքականությունն այսօր մեծ հետաքրքրություն ներկայացնող ոլորտ է և, հետևաբար՝ աճել են դրանով զբաղվող հեղինակների թիվը՝ ինչպես հետխորհրդային տարածքում<sup>7</sup>, այնպես էլ Հայաստանում: Այդ հետաքրքրությունը ոչ միայն գիտական է, այլ նաև քաղաքական-պետական, ընդհուպ մինչև այն աստիճան, որ ՌԴ Պետական դումայում կա նաև աշխարհաքաղաքականության կոմիտեն: Ընդ որում՝ ոլորտի գիտական զարգացումը հանգեցրեց այն արդյունքին, որ աշխարհաքաղաքականության ավանդական երկու ոլորտին՝ ծովային ու ցամաքային, ավելացան

<sup>3</sup> Ст'у Халипов В.Ф. Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005, էջ 355:  
<sup>4</sup> Խորհրդային շրջանում աշխարհաքաղաքականությունը չէր համարվում գիտություն կամ էլ դիտարկվում էր բուրժուական հակագիտական, հետադիմական տեսություն: Օրինակ. «Աշխարհաքաղաքականությունը քաղաքական հայեցակարգ է, որը, օգտագործելով աշխարհագրական տվյալները, հիմնավորում է իմպերիալիստական էքսպանսիան: Կապված է ռասիզմի, մայրուսականության, սոցիալ-դարվինիզմի հետ: Եղել է ֆաշիստական Գերմանիայի պաշտոնական դոկտրինան» (տե՛ս Философский словарь, под ред. И.Т. Фролова, издание пятое, М., Политиздат, 1986, էջ 88, Протасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд., перераб. и доп., М., Юрайт-М, 2001, էջ 96):  
<sup>5</sup> Ռ. Չելենն առաջին օգտագործեց geopolitike հասկացությունը, սակայն դրա տեսաբանն են համարում Հելֆորդ Ջոն Մակինդերին (1861-1947), ով 1904 թ. հրատարակված «Պատմության աշխարհագրական առանցքը» աշխատության մեջ առաջ քաշեց «հարթլանդի» (երկրագնդի սրտի) գաղափարը: Հարթլանդեր էին համարվում Կենտրոնական Ասիան և Արևելյան Եվրոպան: Ըստ Մակինդերի՝ ով կառավարում է Հարթլանդը, նա էլ կառավարում է աշխարհը:  
<sup>6</sup> Աշխարհաքաղաքականության՝ որպես գիտական ոլորտի հիմնադիրներ են համարվում Ֆ. Ռաոնգելը, Ռ. Չելենը, Ֆ. Նաումանը, Խ. Մակինդերը, Ա. Մեյենը, Վ. դե լյա Բլանշը, Ն. Սպիլմենը, Կ. Հաուսհոֆերը, Կ. Շմիդտը և այլք: Աշխարհաքաղաքականության պատմական և արդի տեսությունների բովանդակային նկարագիրը տես Дугин А.Г. Основы геополитики. Геополитическое будущее России. М., Арктогея, 1997, 608 էջ:  
<sup>7</sup> Ст'у Бабурын С.Н., Территория государства: правовые и геополитические проблемы. М., изд-во МГУ, 1997, 480 с.; Дугин А.Г. Основы геополитики. Геополитическое будущее России. М., Арктогея, 1997, 608 с.; Мирофанов А.Б. Шаги новой геополитики. М., 1997, 286 с.; Гаджиев К.С. Геополитика, М., Междунар. Отношения, 1997. 384 с.; Тихонравов Ю.В. Геополитика. М., 1998, 378 с.

նորերը՝ օդային և եթերային (տիզետարական տարածությունը)<sup>8</sup>:

«Գիտական տեսանկյունից՝ աշխարհաքաղաքականությունը համալիր տեսություն է, որը բացատրում է պետական քաղաքականության կախվածությունն այնպիսի գործոններից, ինչպես երկրի աշխարհագրական դիրքը (ելքը դեպի ծով, լանդշաֆտը, բնական սահմանների, օրինակ՝ լեռների, անապատների առկայությունը, հողը, կլիման, բուսաբանությունը, օգտակար հանածոները և այլն), տարածքի չափը, սահմանագծերի երկարությունը և կոնֆիգուրացիան, բնակչության քանակը, որակը և այլն»<sup>9</sup>: Այսպիսով՝ աշխարհաքաղաքականությունը գիտություն է պետության տարածքային շահերի մասին: Ըստ աշխարհաքաղաքականության տեսության հիմնադիր Ռ. Չելենի (1864-1922). «Աշխարհաքաղաքականությունը գիտություն է պետության՝ որպես տարածության մեջ մարմնավորված աշխարհագրական օրգանիզմի մասին»<sup>10</sup>:

Եթե փորձենք տեղայնացնել այս բնորոշումը Հայաստանի Երրորդ հանրապետության՝ որպես պետության նկատմամբ, ապա կառաջանան հետևյալ հարցադրումները. որո՞նք են մեր հարևան պետությունները, ինչպիսի՞ն է մեր աշխարհագրական դիրքը, ո՞րն է հարևան-սահմանակից պետությունների դիրքորոշումը մեր նկատմամբ, ի՞նչ աշխարհաքաղաքական շահեր ունեն գերտերությունները մեր տարածաշրջանում, համընկնում են մեր ազգային-պետական և նրանց արտաքին քաղաքական շահերը, և այսպես շարունակ: Սրանք հարցեր են, որոնց պատասխաններն էական նշանակություն ունեն հայոց պետականության համար, որովհետև դրանք կազմում են այդ պետության գո-

յության և գործողության արտաքին միջավայրը: Կ.Ս. Գաջինի կարծիքով. «Ազգային նպատակների և անվտանգության համար կարևոր նշանակություն ունի նաև պետության շրջակայքը: Ակնհայտ է, որ աշխարհագրական դիրքը նախորոշում է որոշակի պարամետրեր պետության կողմից բազմաթիվ ներքին տնտեսական և քաղաքական, ինչպես նաև հիմնարար արտաքին քաղաքական նպատակներն իրականացնելիս, ընդ որում՝ դրանց դերը և նշանակությունն էական փոփոխություններ են ունեցել միջազգային հարաբերությունների համակարգի պատմական զարգացման զանազան փուլերում»<sup>11</sup>: Այսպիսով՝ պետության գոյության ու գործողության արտաքին միջավայրը, անշուշտ, էական նշանակություն ունի պետության կառուցման ու գործողության ռազմավարության համար՝ շատ ավելի, քան արդիականացման (մոդեռնիզացիայի) և ժողովրդավարականացման քաղաքականության կողմնորոշիչները:

Աշխարհաքաղաքականության բովանդակության մեջ պետության վերաբերյալ առանձնացնում են երկու առում, պետության աշխարհաքաղաքական վարքագծի (գործելակերպի) երկու տեսակ<sup>12</sup>: Պետության աշխարհաքաղաքական գործելակերպի այդ երկու ռազմավարական տարբերակները պայմանականորեն կարող ենք անվանել **աշխարհաքաղաքական անշարժության և աշխարհաքաղաքական շարժունության (փոփոխության)** ուղիներ: Առաջին ռազմավարական ուղու՝ աշխարհաքաղաքական անշարժության դեպքում պետությունն իր քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս ելնում է երկրի «աշխարհաքաղաքական առանձնահատկություններից, որոնք նրան տրվել են պատմականորեն, և որոնք պետու-

<sup>8</sup> Ավանդական վերլուծական աշխարհաքաղաքականությունը գործողություններ էր անում ցամաքային և ծովային ռազմավարություններով: Սակայն տեխնիկայի զարգացումը հանգեցրեց օդային տարածքի յուրացմանը (հատկապես՝ հոդթիռամիջուկային զենքը), ինչը հիմք տվեց մշակելու «օդային աշխարհաքաղաքականությունը» (անվանում են նաև աերոկրատիա): Տիեզերական տարածության ռազմավարական յուրացումը, իր հերթին, հանգեցրեց «եթերաքաղաքականության» (էֆիրաքաղաքականություն և էֆիրակրատիա) մշակմանը: Դրա ռազմական համարժեքն էին աստղային պատերազմների ծրագրերը (տես Халипов В.Ф. Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005, էջ 357):

<sup>9</sup> Sfin Protasov B.H. Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд., перераб. и доп., М., Юрайт-М., 2001, էջ 97:

<sup>10</sup> Հղումն րւտ Халипов В.Ф. Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005, էջ 358:

<sup>11</sup> Sfin Гаджиев К.С. Введение в политическую науку. Изд. 2-ое, доп. и перераб.. М., Логос, 1998, էջ 304; Гаджиев К.С. Введение в геополитику. Изд. 2-ое, доп. и перераб.. М., Логос, 2000, էջ 40:

<sup>12</sup> Sfin Protasov B.H. Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд., перераб. и доп., М., Юрайт-М., 2001, էջ 98:

թյունը տվյալ քաղաքական պայմաններում չի կարող փոխել: Պետությունն այս դեպքում իր աշխարհաքաղաքական կացությունը դիտարկում է որպես մշտական մեծություն, և աշխարհաքաղաքականության արվեստն այս դեպքում հանգում է այն արդյունքին, որ առավելապես լրիվ օգտագործվեն առկա աշխարհաքաղաքական գործոնները, պետության աշխարհաքաղաքական անշարժությունը փոխհատուցվի այլ գործոնների հաշվին (արդյունաբերական զարգացում, նոր տեխնոլոգիաների յուրացում, հաղորդակցության զարգացում և այլն)»<sup>13</sup>:

Պետության աշխարհաքաղաքական վարքագծի երկրորդ տարբերակի՝ աշխարհաքաղաքական շարժունության ռազմավարության դեպքում պետության գործունեությունն ուղղված է նաև երկրի աշխարհաքաղաքական դրության բարելավմանը: XX դարի վերջին հայ ժողովուրդն օգտագործեց վարքագծի երկրորդ տարբերակը, սակայն ոչ թե նվաճման կամ ագրեսիայի ճանապարհով, այլ՝ պատմականորեն Հայաստանի մաս համարվող Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրականացման միջոցով:

Պետության աշխարհաքաղաքական վարքագծի երկու ռազմավարական տարբերակներն էլ ենթադրում են պետության ոչ միայն գործունեության մեջ, այլ նաև պետության կազմակերպման ու կառուցման ընթացքում աշխարհաքաղաքական առանձնահատկությունների իմաստավորում, դրանց հաշվառում, որպես արդյունք դրանք իրավական կարգավորման սկզբունքների վերածում, ինստիտուտացում:

Չխորանալով աշխարհաքաղաքական վերլուծությունների մեջ՝ կարող ենք հաստատել, որ արտաքին քաղաքական միջավայրը հայոց պետականության համար այդքան էլ նպաստավոր կամ բարիդրացիական չէ՝ պայմանավորված մեր ժողովրդի պատմական ճակատագրով, ինչպես նաև հանրապետության հռչակման ու կայացման առանձնահատկություններով: Այստեղից կարելի է անել հետևյալ եզրակացությունը. եթե պետության գոյության արտաքին քաղաքական, աշխարհաքաղաքական միջավայրը նպաստավոր չէ նրա գոյու-

թյան համար, ապա դա նշանակում է, որ, Չելենի խոսքերով ասած, «պետության՝ որպես աշխարհագրական օրգանիզմի» կազմակերպությանը պետք է ներկայացնել այնպիսի պահանջներ, կառուցման սկզբունքներ, որ նա ունակ լինի գոյատևելու և զարգանալու այդ միջավայրում, ունենա ինքնապաշտպանության բնական, ի ծնե հատկություն, ընդունակություն դիմակայելու արտաքին միջավայրից եկող սպառնալիքներին ու վտանգներին: Այս եզրակացության հետ կապված՝ պետք է նկատի ունենալ, որ պետության արտաքին միջավայրի նպաստավոր կամ բարիդրացիական լինելու հանգամանքը համեմատական կամ հարբերական բնութագրիչներ են: Բոլոր պետությունները, բացառությամբ կղզի պետությունների, ունեն սահմանակից պետություններ: Սակայն դրանցից մի մասի համար արտաքին միջավայրը չի ներկայացնում վտանգների ու սպառնալիքների այնքան շատ ծավալ, որ, ի վերջո՝ վտանգի պետության գոյությունը: Դա կարող է պայմանավորված լինել քաղաքակրթական, մշակութային, պատմական, տարածաշրջանային և մի շարք այլ գործոններով: Եթե մենք Հայաստանում կենսագործում ենք արդի աշխարհում տարածված սոցիալ-իրավական մոդելի պետությունը, ապա այդ գործընթացում արդյոք մենք հմտորեն կարողացել ենք այնպես տեղայնացնել ընդհանուր մոդելը, որ նոր միջավայրում արդյունավետ և ազգանպաստ կերպով գործի: Կարծում ենք՝ ոչ: Իսկ համակարգային մոտեցումը հուշում է, որ մեխանիկական պատճենահանման ձևով ընդօրինակված մոդելը, որպես ենթահամակարգ, չի կարող արդյունավետ գործառնութավորել նոր մետահամակարգ համարվող շրջակա միջավայրում:

Պետությունն իր նպատակները կենսագործելիս արտաքին ոլորտում գործ ունի այլ պետությունների հետ, որոնք կարող են նպաստել և նույնիսկ օգնել այդ նպատակների նվաճման հարցում կամ էլ, ընդհակառակն՝ խոչընդոտել կամ փորձել խոչընդոտել դա: Ամեն ինչ կախված է պետության աշխարհաքաղաքական վիճակից: Այս առումով՝ ՀՀ աշխարհաքաղաքա-

<sup>13</sup> Стів Протасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд., перераб. и доп., М., Юрайт-М, 2001, էջ 98:

կան կացությունը, ընդհանուր առմամբ, իր մերձակա շրջակա միջավայրով կարող ենք գնահատել, մեղմ ասած, ոչ բարենպաստ: Ապագայում չեն նկատվում դրա բարելավման միտումները:

ՀՀ-ը ստիպված է գործելու մի միջավայրում, որում անհրաժեշտ են հատուկ ջանքեր արտաքին քաղաքական միջավայրի ոչ բարենպաստ գործոնների եթե ոչ վերացման, ապա գոնե չեզոքացման ուղղությամբ: Այդ ջանքերի դրսևորման **սովորական ձևն արտաքին քաղաքականությունն է:** Այս տեսակետն ամենատարածվածն է քաղաքագիտության մեջ և շատ խոր կարծրատիպերով ամրացված: «Պետությունների միջև պատերազմների, ագրեսիայի և տարատեսակ բախումների կանխման գլխավոր միջոցը համարվում է ինքնիշխան պետության արտաքին քաղաքականությունը: Վերջինս կոչված է կարգավորելու յուրաքանչյուր առանձին պետության հարաբերություններն այլ պետությունների ու ժողովուրդների միջև՝ համապատասխան սկզբունքների, մեթոդների և կառուցակարգերի հիման վրա: Այդ կառուցակարգերից ամենատարածվածը և ամենաճանաչվածը համարվում է դիվանագիտությունը»<sup>14</sup>: Սա արտաքին քաղաքական միջավայրում պետության գործառութավորման հիմնական և արդեն հազարամյակներ գոյություն ունեցող գործելակերպն է: Արտաքին քաղաքականության իրականացման սովորական կամ ավանդական կառուցակարգի շղթաներն են համարվում ազգային շահերը՝ ազգային անվտանգության հայեցակարգը և դրա հիման վրա իրականացվող արտաքին քաղաքականությունը, որը որոշվում է բազմաթիվ գործոնների հաշվառմամբ, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման մակարդակը, ազգային-պատմական ավանդույթները, աշխարհագրական դիրքը, անվտան-

գության ու ինքնիշխանության ապահովման նպատակներն ու պահանջմունքները: Այս մոտեցումը գրեթե միատեսակ է պատկերացվում համաշխարհային քաղաքականության կամ միջազգային հարաբերությունների տեսաբանների կողմից<sup>15</sup>:

Այս մոտեցման կողմնակիցների համար արտաքին-քաղաքական գործունեության գլխավոր խթանիչ ուժը համարվում է ճիշտ հասկացված ազգային կամ պետական շահը: «Ազգային շահերի» հայեցակարգը մշակել է ամերիկացի Հ. Մորգենթաուն: Նա «շահ» հասկացությունը բնորոշել է իշխանություն կատեգորիայի միջոցով: Այդ հայեցակարգում ազգային շահը կազմված է երեք տարրից. ա) պաշտպանվող շահի բնույթները, բ) քաղաքական միջավայրը, որում գործում է շահը, դ) ռացիոնալ անհրաժեշտությունը, որը սահմանափակում է նպատակների ու միջոցների ընտրությունը միջազգային քաղաքականության բոլոր սուբյեկտների համար<sup>16</sup>: Այսպիսով՝ ազգային պետության գոյատևման, անվտանգության, կայունության ու բարգավաճման ապահովումը որպես պետության արտաքին քաղաքականության նպատակներ համապատասխանում են ազգային շահերին: Հետևաբար՝ ազգային շահերի բավարարումն անվտանգության հայեցակարգ – արտաքին քաղաքականության իրացման կառուցակարգ (որի հիմնական միջոցը դիվանագիտությունն է) համակարգային շղթան հնարավոր միջոց է ազգի նպատակների իրացման համար: Դրան նպաստող պայմանն արդի երկրագնդի միջազգային-համաշխարհային իրողություններն են, որոնց շնորհիվ միջազգային հանրության գլխավոր նպատակներ են դարձել միջազգային անվտանգության պահպանումը և ապահովումը, ժողովուրդների անվտանգության և խաղաղության խախտումների բացառումը: Այս դեպքում պետությունը գործում է

<sup>14</sup> Տե՛ս Гаджиев К.С. Введение в политическую науку. Изд. 2-ое, доп. и перераб.. М., Логос, 1998, էջ 294:

<sup>15</sup> Տե՛ս Мухаев Р.Т. Теория политики. М., ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 577-579, Гаджиев К.С. Введение в политическую науку. Изд. 2-ое, доп. и перераб.. М., Логос, 1998, էջ 290-297:

<sup>16</sup> Տե՛ս Morgenthau H. Politics among Nations. The struggle for Power and Peace. N. 4, 1972, p. 29): Պետության արտաքին քաղաքականությունը, ըստ Մորգենթաուի, պետք է հիմնվի ազգային շահի բնույթը և էությունը գիտակցելուն օգնող ֆիզիկական, քաղաքական և մշակութային իրականության վրա: Այդպիսի իրականություն է ազգը: Աշխարհի բոլոր ազգերը միջազգային ասպարեզում ձգտում են բավարարել իրենց առաջնահերթ պահանջմունքները, այսինքն՝ ֆիզիկական գոյատևման պահանջմունքը: Բոլոր ազգերն արտաքին ներխուժման վտանգի ներքո հոգ են տանում իրենց ֆիզիկական, քաղաքական և մշակութային ինքնության մասին:



**աշխարհաքաղաքական խնդիրների լուծման առաջին եղանակով:** Դրա երաշխիքներն են միջազգային կառույցները, ագրեսիայի իրավական արգելքը: Պետության գործելակերպի առաջին եղանակի դեպքում պատերազմների, ագրեսիայի, պետությունների միջև բախումների կանխման հիմնական միջոց է դառնում դիվանագիտությունը, պետությունների երկողմանի ու բազմակողմանի համագործակցությունը: Սակայն այդ համագործակցությունն ունի սահմանափակ հնարավորություններ, ինչից բխում է, որ սահմանափակ են նաև դիվանագիտության հնարավորությունները:

Դիվանագիտության և արտաքին քաղաքական համագործակցության հարցում ՀՀ-ն ունի էական առանձնահատկություններ: Անմիջական հարևան պետություններից երկուսի հետ ՀՀ-ն չունի դիվանագիտական կապեր, և դրանք հաստատելու մոտակա հնարավորություններն առայժմ չեն երևում: Վրաստանի հարցում ևս կան էական խնդիրներ՝ պայմանավորված մի շարք գործոններով, օրինակ՝ Վրաստանի և Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների էական տարբերությունները: Իրավիճակը բարդանում է, քանի որ հարևան պետությունների շահերն ինչ-ինչ հարցերում համընկնում են, ինչի պատճառով նրանք ձեռնարկում են տարածաշրջանային գործընթացներից ՀՀ-ի մեկուսացման քաղաքականություն: Գերտերություններն էլ իրենց հերթին ստանձնել են միջնորդ-հաշտեցնողի դեր, որի պտուղները դեռևս չեն հասունացել: Ազգային շահերի բավարարման այս ճանապարհը, անշուշտ, անհրաժեշտ և իրական հաջողություններ ապահովող միջոց է, սակայն պետք է նկատի ունենալ որոշակի հանգամանքներ, որոնք կարող են չեզոքացնել այդ ուղով ազգային շահերի բավարարումը: Որպես այդպիսի հանգամանք՝ կարող ենք նշել մի քանիսը. դիվանագիտության սահմանափակ հնարավորությունները, արդի աշխարհի աշխարհաքաղաքական անկայունությունը, համաշխարհային քաղաքականության գլխավոր դերակատարներին բնորոշ երկակի չափորոշիչները, երկրագնդում համամիասնական (գլոբալ) և տեղական (լոկալ) անկայունու-

թյունը և այլն: Դրանցից մի քանիսը մենք արդեն զգացել ենք պատմական գործընթացի ճանապարհին և նույնիսկ ճակատագրական բացասական ազդեցության տեսանկյունից: Այդ ամենը մեզ հուշում է, որ ուժը և ուժի կիրառման սպառնալիքը կարող են ինչ-որ մի պահ դառնալ ազգային նպատակների ապահովման միջոց:

Ազգային անվտանգության հայեցակարգի հիմնադիր տեսաբաններից մեկը՝ Վ. Լիպմանը շեշտում էր. «Ազգն ապահովում է իր անվտանգությունը, երբ նա զոհաբերում է իր օրինական շահերը պատերազմից խուսափելու համար, և ընդունակ է, եթե այդ շահերը վտանգվում են, պաշտպանել դրանք պատերազմի միջոցով»<sup>17</sup>: Այսպիսի տեսակետի կողմնակիցներ են ոչ միայն քաղաքագետները, այլև աշխարհաքաղաքագետները: Գերմանացի Ֆ. Ռատցելը 1897 թ. հրատարակած «Քաղաքական աշխարհագրություն» աշխատանքում հիմնավորում էր, որ պետությունը կենսաբանական օրենքներով գործող օրգանիզմ է: Նա պետությունը համարում էր օրգանական էվոլյուցիայի արդյունք, ծառի նման՝ հողում արմատավորված, ուստի եզրակացնում էր, որ պետության էական բնութագրերը պայմանավորված են տարածքով ու տեղադրությամբ, և նրա հաջողությունը կախված է, թե ինչպես է նա հարմարվել իր միջավայրի պայմաններին»<sup>18</sup>: Ռատցելը, սակայն, ճիշտ էր համարում, իհարկե, Գերմանիայի համար, պետության աշխարհաքաղաքական խնդիրների լուծման երկրորդ ուղին՝ տարածքային էքսպանսիան: Սակայն արդի շրջանում, միջազգային իրավունքի դիրքերից գոնե ձևական չափանիշներով այդպիսի մոտեցումն անընդունելի է: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետությանը մնում էր աշխարհաքաղաքական խնդիրների լուծման առաջին ռազմավարությունը, այն է՝ աշխարհաքաղաքական անշարժունության ճանապարհը, որի դեպքում աշխարհաքաղաքականության արվեստը հանգում էր և հանգում է առկա աշխարհաքաղաքական գործոնների առավել լրիվ օգտագործմանը, պետության աշխարհաքաղաքական աննպաստ կացության՝ այլ գործոնների հաշվին փոխհատուցմանը,

<sup>17</sup> Տե՛ս Lippman W. U. S. Foreign policy. N.Y.: McCrow-Hill, 1953, էջ 8:

<sup>18</sup> Հղումն ըստ Гаджиев К.С. Введение в политическую науку. Изд. 2-ое, доп. и перераб.. М., Логос, 1998, էջ 298:

հատկապես աշխարհաքաղաքական աննպաստությանը համապատասխանող պետության կառուցմանը:

Ունեցե՛լ է արդյոք մեր պետական շինարարությունը նման ուղղություն: Պետության արտաքին խնդիրների լուծման սովորական ուղին, որը որդեգրել ենք մենք, ենթադրում է ժողովրդավարական մոդելի պետության հիմնադրում, այնուհետև՝ ազգային անվտանգության հայեցակարգի մշակում և դրա կենսագործում: Օրինակ՝ ազգային անվտանգության ենթադրյալ տարրեր են դիտարկվում ներքին կայունությունը, հուսալի պաշտպանունակությունը, ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը<sup>19</sup>: Ինչպես տեսնում ենք՝ ազգային անվտանգության հայեցակարգը ենթադրում է նաև երկրի պաշտպանունակություն: Սակայն այդ պաշտպանունակության ապահովման միջոցը դիտարկվում է ժողովրդավարական-իրավական պետության կողմից երկրի պաշտպանության կազմակերպում՝ գրեթե նույն սխեմայով, ինչ անվտանգությունը: Բայց այստեղ առաջանում է խնդիրների մի ամբողջ շարք: Արդյոք հիմնադրված քաղաքական կառույցը՝ պետությունը, ունակ է պաշտպանվելու, արդյոք ունի քաղաքական կամք և ցանկություն դրա համար: Անվտան-

գությունը և պաշտպանությունը նաև սուբյեկտիվ-գիտակցված երևույթներ են, որոնք արտացոլում են ազգային առաջնորդները: Նրանք կարող են նաև չպատկերացնել դա, կարևորություն չտալ դրան և նույնիսկ դրսևորել անգործություն: Հետևանքն այն է, ինչ ունենք. անվտանգությունը և պաշտպանությունը դարձել են ոչ թե պետության «օրգանիզմի» հատկություններ, այլ՝ գործնական քաղաքականության խնդիրներ, որոնք ենթակա են մարտավարական վայրիվերումների: Այս հանգամանքը մեզ թելադրում է լրացուցիչ պահանջներ ներկայացնել մեր ազգային պետականությանը, պետական շինարարության հիմքում պետական ապարատի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների հետ դնել պաշտպանունակության սկզբունքը: Պաշտպանունակության սկզբունքով կառուցված սոցիալ-իրավական պետությունը երկրի անվտանգության ապահովման ու պաշտպանության գործառույթն իրականացնում է ոչ միայն սովորական, ավանդական ձևերով, այլև դրա էության մեջ՝ որպես հատկություն դրված է պաշտպանունակությունը: Առանց այդ հատկության՝ պետականակերտության հաջողությունները մեզ համար ընդամենը խաբկանք են:



<sup>19</sup> Sէն Мухаев Р.Т. Теория политики. М., ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 577-579:

**ՆԱՐԵԿ ՀԱԿՈՐՅԱՆ**

ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հայցորդ

## **ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԲԱՅԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Բացերի տեսության գծով տարբեր հետազոտությունների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել բացերի «վերացում», «լրացում» ու «հաղթահարում» եզրույթների օգտագործման մեջ էական եզրաբանական խառնաշփոթի առկայությունը: Այս խառնաշփոթը պայմանավորված է տարբեր տեսակետերով՝ թե ի՞նչը հարկավոր է համարել բացի «լրացում»՝ դրա լրիվ վերացումը (հեռացումը) կամ միանվագ հաղթահարումը՝ հստակ վիճահարույց դեպքի լուծման ընթացքում<sup>1</sup>: Մեկ անգամ ևս նշենք, որ այս վեճը զուտ եզրաբանական է, քանի որ վարվում է հիմնականում եզրույթների օգտագործման, այլ ոչ թե՝ երևույթների էության վերաբերյալ: Դա որոշակի կարևորություն է ձեռք բերում միայն այն դեպքում, եթե լուծում է հետևյալ հարցը. ի՞նչ է դատարանների կողմից բացերի լրացումը՝ իրավաստեղծությամբ, թե՛ իրավակիրառման տարր:

Այսպիսով՝ բացերի տեսության հետազոտողների որոշակի մասը ելնում է այն հանգամանքից, որ ցանկացած նորմատիվ-օրենսդրական իրավական համակարգ, որն ունի դինամիկ, մշտապես զարգացող բնույթ, նախատեսում է օրենսդրության մեջ բացերի լրացման հնարավորությունը, ընդ որում՝ ոչ թե իրավաստեղծության ճանապարհով, այլ՝ իրավունքի կիրառման ընթացքում հատուկ ինստիտուտների օգտագործման ճանապարհով (օրինակ՝ օրենքի անալոգիայի և իրավունքի անալոգիայի): Այս ինստիտուտների օգնությամբ նվաճվում են իրավական համակարգի ինքնակարգավորումը, ինքնալարումը, դրա արդյունավետ գործառնությունը՝ փոփոխական, զարգացող միջավայրի պայմաններում, այնպես, որ իրավունքը մշտապես պահպանում է հասարակական կարգավորման կայուն մեխանիզմի որակը: Այս

տեսանկյունից՝ իրավասու պետական մարմինների (մասնավորապես՝ դատարանների) գործունեությունն իրավունքում բացերի լրացման գծով ունի օրինաչափ, բնական բնույթ:

Հաշվի առնելով տվյալ հանգամանքը՝ կարելի է պնդել, որ դատարանները բազմիցս ապացուցել և ապացուցում են իրավունքում բացերի լրացնելու իրենց կարողությունը, օրինակ՝ այդ պահին գործող քաղաքացիական օրենսդրության կողմից չկանխատեսված՝ դրամաիրային վիճակախաղի շահույթի բաժանման մասին պայմանագրերի վերաբերյալ գործերով և այլն:

Դատարաններն օժտված են իրավունքում բացերի լրացման գծով անհրաժեշտ լիազորություններով, մասնավորապես՝ կիրառելով իրավունքի կամ օրենքի անալոգիան:

Մի շարք հեղինակների կարծիքով (Ա.Տ. Բոներ, Է.Շ. Կեմուլարիա, Վ.Վ. Լազարև, Ա.Ս. Պիգուլկին, Բ.Պ. Սպասով, Վ.Ն. Կարտաշև և այլք)<sup>2</sup> համապատասխան իրավական բացն իրականապես «լրացնել» (ավելի ճշգրիտ ասած՝ վերացնել) կարող է միայն օրենքը (կամ ենթաօրենսդրական նորմատիվ ակտը, որն ընդունված է դրա զարգացման համար իրավաստեղծ գործունեության ընթացքում): Ինչպես ընդունվել է Վ.Վ. Լազարևը՝ իրավական համակարգի շրջանակներում, որտեղ «ուսմունքն ու օրենսդրությունը իբրև իրավունքի լիարժեք աղբյուրներ ճանաչում են միայն այն ակտերը, որոնք բխում են իրավունքի ու կառավարման իրավասու իրավաստեղծ մարմիններից», միայն այդ մարմիններն էլ օգտվում են բացերի լրացման առաջնահերթությամբ: Մնացած բոլոր պետական մարմինները «գործուն մասնակցություն են ունենում բացերի սահմանման գործում, սակայն օժտված են դրանց վերացման իրավունքով»<sup>2</sup>: Հետևաբար՝ այդպիսի մարմիններն իրենց գործունեության ընթաց-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ, № 99 2017

<sup>1</sup> Տե՛ս Скурко Е.В. Очерки теории права. М., 2013, с. 58-59.

<sup>2</sup> Տե՛ս Лазарев В. В. Пробелы в праве. М., 1972. էջ 131:

քում, ինչպես համարում է Վ. Վ. Լազարևը, կարող են միայն հաղթահարել բացը:

Նմանատիպ տեսակետի կողմնակից է նաև Ս. Ս. Ալեքսեևը<sup>3</sup>, ով համարում է, որ իրավունքում բացերի «լրացում» եզրույթի ըստ անալոգիայի կիրառումը դատարանների գործունեության և դրանց կողմից վիճելի իրավիճակների լուծման նկատմամբ ընդունելի չէ:

Այստեղ հարկավոր է ուշադրություն դարձնել, որ վերոնշյալ հեղինակները նկարագրված իրավիճակը նկարագրելիս, փաստորեն, հավասարության նշան են դնում բացի «լրացում» և «վերացում» հասկացությունների միջև: Սակայն նրանք ամենևին չեն բացառում իրավակիրառական պրակտիկայում բացերի հաղթահարման համար հատուկ իրավական մեխանիզմների ու ինստիտուտների օգտագործման հնարավորությունը: Ընդ որում՝ հենց բացի «վերացում», այլ ոչ թե՛ «լրացում» կամ «հաղթահարում» եզրույթի օգտագործումը թույլ է տալիս նրանց առավել համաչափ կերպով արտահայտել այն գործողությունների էությունը, որոնք կատարում են նորմաստեղծ մարմինները: Նրանք ամբողջությամբ և վերջնականապես վերացնում են բացը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ իրավունքում բացի «վերացում» եզրույթն առավել լիարժեք է արտացոլում հենց իրավաստեղծ մարմինների գործունեության էությունը, և նշված եզրույթի կիրառումը բնութագրում է բացառապես նորմաստեղծ մարմինների գործունեությունը:

Ինչ վերաբերում է դատարաններին՝ պետական այդ մարմինները, մեր կարծիքով, հենց լրացնում են բացը: Իսկապես, իրավական համակարգում իրավակիրառական մարմինները, մասնավորապես՝ դատարանը, հայտնաբերելով բաց իրավունքի կիրառման ընթացքում, ըստ ընդհանուր կանոնի, չեն կարող ամբողջովին և վերջնականապես վերացնել դա: Նրանք պետք է համապատասխան պատկերացում անեն իրավունքի նոր նորմի հրապարակման մասին՝ օրենսդիր կամ այլ իրավասու մարմին: Ընդ որում՝ ոչ ոք չի վիճարկում այն փաստը, որ իրավունքում բացը վերջնականապես կարող է

վերացնել միայն իրավաստեղծ, այլ ոչ թե՛ իրավակիրառական մարմինը, այն ժամանակ, երբ դատարանը միայն ժամանակավորապես է լրացնում դա, ընդ որում, մեծ մասամբ՝ միայն մեկ հստակ վիճահարույց դեպքի նկատմամբ: Հենց այս պատճառով, իրավունքում բացի լրացման հիմնական եղանակը՝ անալոգիան, բնութագրվում է իբրև միանվագ հնարք, որը նշանակություն ունի միայն տվյալ գործի համար, «կաուզալ լրացում»:

Այսպիսով՝ իրավակիրառ գործունեության մեջ բացերի լրացման հնարավորության մասին վեճում մենք միանում ենք այն հեղինակներին, ովքեր ընդունում են դատարանների՝ իբրև «իրավական իրականության\*» առանձնահատուկ, շարժուն և ճկուն ոլորտի՝ իրավական կարգավորմանը մասնակցող իրավական համակարգի տարր»<sup>4</sup> հանդես գալու կարողությունը, այդ թվում՝ իրավունքում բացերի լրացման միջոցով:

Մինևույն ժամանակ՝ մենք ամբողջովին համաձայն ենք Վ.Վ. Լազարևի և այլ հեղինակների հետ, ովքեր պնդում են, որ բացը կարող է վերջնականապես վերացնել միայն լիազորված իրավաստեղծ մարմինը: Սակայն, մեր կարծիքով՝ դատարանը, նույնպես օգտագործելով բացերի լրացման հայտնի մեխանիզմները (օրինակ՝ ըստ անալոգիայի օրենքի կամ իրավունքի կիրառումը), կարող է լիարժեք լուծել հստակ իրադրությունը՝ իրավական դիրքորոշման կամ նախադեպի միջոցով:

Առաջացած հիմնախնդրի յուրահատուկ որոշում է առաջարկել Ս.Ս. Ալեքսեևը, ով հստակ սահմանազատում է դատարանների իրավաստեղծությունն ու անհատական-իրավական գործունեությունը և, համապատասխանաբար՝ իրավական կարգավորման նորմատիվ հիմքի և դատական (իրավաբանական) պրակտիկայի միջև: Բնութագրելով դատական պրակտիկան իբրև «դատարանների անհատական-իրավական գործունեության օբյեկտիվացված փորձ, որը ձևավորվում է իրավաբանական գործերի լուծման ընթացքում իրավունքի կիրառման շնորհիվ», իրավաբանը մշակում է «իրավադրույթ» հասկացությունը՝ նոր տարր, որն

<sup>3</sup> Сг'и Алексеев С. С. Теория права. М., 1994. էջ 262:

<sup>4</sup> Сг'и Алексеев С.С. Теория права. М., 1994. էջ 263:

իրավական իրականության հյուսվածքի մեջ է ներառվում դատական փորձի միջոցով:<sup>5</sup>

Ասվածի առնչությամբ արժե ուշադրություն դարձնել իրավունքում բացերի «վերացում», «հաղթահարում» և «լրացում» եզրույթների ավելի ճշգրիտ սահմանման և օգտագործման անհրաժեշտությանը: Մասնավորապես՝ հարկավոր է լիովին բացառել «բացի վերացում» և «բացի լրացում» եզրույթների նույնացման հնարավորությունը: Մեր կարծիքով՝ այն դեպքերում, երբ խոսքը ոչ թե բացերի վերացման մասին է ընդհանրապես, այլ՝ անմիջականորեն այն դերի մասին, որը բացերի լրացման ընթացքում խաղում են դատական մարմինները, հարկավոր է օգտագործել «բացերի լրացում» եզրույթը: «Բացերի լրացում» ասելով՝ հասկանում են լիազորված պետական մարմնի (դատարանի) կողմից վիճահարույց իրավահարաբերության գծով հստակ որոշման ընդունումը՝ օրենսդրության մեջ կամ իրավունքում բացի բացահայտման պայմաններում: Լրացնելով բացը, այսինքն՝ բախվելով վիճահարույց հարցի լուծման համար համապատասխան նորմի բացակայությանը, դատարանը պետք է լուծի դառող օրենսդրության ընդհանուր բանականության հիման վրա, ինչի հետևանքով իրեն, փաստորեն, հարկ է լինում ստեղծագործաբար գործել և ստեղծել նախկինում գոյություն չունեցած իրավական նորմ:

Նույն տեսակետն է փաստացիորեն պաշտպանում նաև Ա.Ս. Ալեքսեևը<sup>6</sup>, ով հստակ սահմանազատում է իրավաստեղծությունն ու դատարանների անհատական-իրավական գործունեությունը և, համապատասխանաբար՝ իրավական կարգավորման նորմատիվ հիմքի և դատական (իրավաբանական) փորձի միջև: Դատական փորձը բնութագրելով իբրև «իրավաբանական գործերի լուծման ընթացքում իրավունքի կիրառման շնորհիվ ձևավորվող՝ դատարանների անհատական-իրավական գործունեության օբյեկտիվացված փորձ»՝ իրավաբանը մշակում է «իրավադրույթ» հասկացությունը՝ նոր տարր, որը ներառվում է իրավական իրականության հյուսվածքում դատական փորձի միջոցով:

Հարկավոր է նաև նշել, որ «բացի լրացում» եզրույթն առավել ավանդական է ռոմանագերմանական իրավագիտության ուսմունքի համար, թեպետ, մեր կարծիքով, ոչ բավարար համարժեք է արտացոլում այն գործողությունների էությունը, որոնք կատարում են իրավակիրառական մարմիններն իրավունքում բացատ բացահայտելու դեպքում (ինչպես նաև՝ այդ գործողությունների հետևանքները): Այնուամենայնիվ, իրավունքի տեսության գծով գրականության մեջ «բացերի լրացում» սահմանումը շատ հաճախ բնութագրվում է իբրև հատուկ իրավաբանական եզրույթ, որն անմիջականորեն կապված է համապատասխան պետական մարմինների գործունեության հետ:

«Բացերի վերացում» եզրույթը, որը ենթադրում է դրանց լիարժեք վերացումն իրավունքի և օրենքի համակարգում, հարկավոր է առավելապես համարժեք համարել այն գործառույթներին, որոնք մեզ հետաքրքրող գործընթացների շրջանակներում կատարում են իրավասու իրավաստեղծ մարմինները՝ օրենսդիր, գործադիր և այլն:

Իսկ ինչ վերաբերում է «բացերի հաղթահարում» եզրույթին՝ դա մեր կարծիքով, ունի կիրառման սեփական ոլորտ: Դա իրավասու պետական մարմինների գործունեությունն է (վարչական մարմինների և այլն), որոնք նաև հաճախակի ստիպված են իրենց գործունեության ընթացքում լուծել հարցն այն մասին, թե ինչպես է հարկավոր վարվել իրավական կարգավորման մեջ բացերի բացահայտման դեպքում: Այս առումով՝ պետք է նշել, որ պետական մարմինների իրավակիրառական գործունեության մեջ բացի հայտնաբերումը դառնում է որոշակի խոչընդոտ, դժվարություն՝ հստակ գործի շուրջ հետագա վարույթի ճանապարհին, ինչի կապակցությամբ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում հենց հաղթահարելու այս խոչընդոտը:

Այլ հարց է, որ ոչ իրավունքի ուսմունքում, ոչ օրենսդրության մեջ այսօրվա դրությամբ լուծված չէ այդպիսի մարմիններին բացեր լրացնելու իրավունքով օժտման մասին հարցը, սահմանված չէ այդպիսի մարմինների շրջանակը,

<sup>5</sup> Տե՛ս Алексеев С.С. Теория права. Էջ 263:

<sup>6</sup> Տե՛ս Алексеев С.С. Теория права. Էջ 264-265:

ինչպես նաև՝ վերապահված չեն այն եղանակները, որոնց օգնությամբ գործադիր իշխանությունները կարողանային լուծել իրավունքում բացերի հաղթահարման հիմնախնդիրը: Նշված հարցերը, ինչպես կարծում ենք, կարող էին կազմել ինքնուրույն հետազոտության օբյեկտ: Նշենք միայն, որ ոչ դատական մարմինների կողմից ընդունված որոշումը կարող է վիճարկվել շահագրգիռ կողմերի կողմից դատական կարգով: Դրանում է այդ մարմինների առանձնահատկությունը, որն սկզբունքորեն դրանք տարբերում է դատարանից՝ իբրև իրավունքի բացի պայմաններում հստակ գործի շուրջ որոշման ընդունման վերջնական ատյանից:

Այսպիսով՝ վերևում քննարկված՝ իրավունքում բացերի «վերացման», «լրացման» և «հաղթահարման» հասկացություններին միանշանակ իրավաբանական բովանդակություն ամրագրելը, ինչպես նաև դրա հստակեցումը, մեր կարծիքով, թույլ կտա առավել հստակ կերպով նույնացնել իրավաստեղծ ու իրավակիրառական մարմինների գործունեության բնույթը՝ իրենց կողմից իրավունքում բացերի սահմանման, լրացման և վերացման ընթացքում:

Արտահայտված ենթադրությունն այն մասին, որ դոգմատիկ տեսակետից իմաստ կատարանշատելու այն մարմինները, որոնք իրենց գործունեության մեջ ստիպված են լուծելու բացերի հաղթահարման խնդիրը՝ դատական (բացեր լրացնող) և մնացած բոլոր (բացերը հաղթահարող) մարմինների, պայմանավորում է ևս մեկ խնդիր շրջափելու անհրաժեշտությունը, որն այսօրվա դրությամբ չունի միանշանակ լուծում իրավունքի տեսությունում այդ նպատակով հատուկ սահմանված ինստիտուտների օգնությամբ՝ բացատրել հաղթահարելուն լիազորված իրավունքի սուբյեկտների շրջանակի սահմանման հիմնախնդիրը (օրինակ՝ օրենքի անալոգիան):

Այդպես, օրինակ՝ մի շարք իրավագետների կարծիքով, որոնց թվում են, մասնավորապես, Ս.Ս. Ալեքսեևը, Վ.Ն. Կարտաշովը և այլք, օրենսդրությամբ չկարգավորված դեպքերում իրավունքում բացերի լրացման հատուկ եղանակների օգտագործման մասին հարցեր լուծելն իրավասու է միայն դատարանը: Այս դեպքում դատական մարմինների համապատասխան լիազորությունը հիմնավորվում է պետու-

թյան իրավական համակարգում տեղով ու դերով, ինչպես նաև՝ դրանց իրավական կարգավիճակը բնութագրող հետևյալ պահերով՝ դատարանի գործունեությունը կարգավորված է դատավարական նորմերով, դատական որոշումն ընդունվում է դատավորների վրա կողմնակի, ազդեցությունը բացառող պայմաններում. պետությունը հատուկ կարգ է սահմանում դատարանի ակտերի բողոքարկման համար. դատարանի անդամները, որպես կանոն, ունենում են բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթություն, ինչը ոչ պակաս կարևոր դեր է խաղում իրավաբանական տեխնիկայի հատուկ կանոնները կիրառելիս:

Որպես կանոն՝ ոչ դատական մարմինները (օրինակ՝ նոտարը և այլն), հայտնաբերելով իրավունքում բացի առկայությունը, հրաժարվում են բավարարել հղումով դիմածի շահերը՝ հղում կատարելով, որ տվյալ իրադրությունը կարգավորված չէ օրենքով:

Մեր կարծիքով՝ եթե խոսքը բացերի լրացման մասին է, ապա հարկավոր է աջակցել շարադրված տեսակետին. իրավակիրառական այն մարմինների համակարգում, որոնք իրենց գործունեության մեջ ստիպված են լուծել իրավունքում բացատների լրացման հիմնախնդիրը, առաջատար դերը պատկանում է դատարանին: Ընդ որում, ի տարբերություն մնացած բոլոր պետական և այլ իրավակիրառական մարմինների՝ միայն դատարանը չի կարող իր գործունեության մեջ հղում կատարել վիճահարույց իրավահարաբերության լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերի բացակայությանը: Օրենսդրության մեջ բացերի լրացման գծով արդարադատության մարմինների աշխատանքը բնութագրվում է իբրև դրանց գործունեության խոր իրավաբանական, իրավական կողմից սահմանադրական բնույթով: Հենց դատարաններն են օրենքով լիազորված, որ, օգտագործելով հատուկ իրավաբանական ինստիտուտները (անալոգիայի ինստիտուտները), վերացնեն նորմատիվ հիմքում առկա «բացը», լրացնեն բացը և, այսպիսով՝ լուծեն տվյալ դեպքին վերաբերող իրավաբանական գործը:

Այլ հեղինակների կարծիքով (մասնավորապես՝ Ա.Ա. Բելկինի, Է.Շ. Կեմուլարիի)՝ իրավունքի կիրառման ընթացքում թույլատրելի հնարքների օգտագործումը չի կարող լինել



միայն դատարանների նախապատվությունը: Ինչպես համարում է Ա.Ա. Բելկինը՝ այդպիսի օգտագործումը ցանկալի է նաև արտադատական որոշումներում, եթե դա նպաստում է իրավունքի կողմից սեփական խնդիրների կատարմանը: Է. Շ. Կեմուլարիի կարծիքով՝ միայն դատական մարմիններին բացերի լրացման իրավունքի տրամադրումը բացառում է իրավակիրառության այլ սուբյեկտների լիարժեք գործառնության հնարավորությունը, ինչպիսիք են, օրինակ՝ քննչական և նախաքննության մարմինները: Նա համարում է, որ օրենսդրության մեջ բացերի հաղթահարման և լրացման հատուկ իրավաբանական ինստիտուտների օգտագործման փաստացի անհրաժեշտությունը (մասնավորապես՝ ըստ անալոգիայի)՝ նախաքննություն իրականացնող մարմինների գործունեության մեջ, անգամ ավելի սուր է դրված, քան դատական փորձում, քանի որ այդպիսի մարմինների «չափազանց բազմակողմանի, լայն և աշխատատար» գործունեությունը պակաս մանրամասնորեն է կարգավորված իրավունքի նորմերով, քանի դատաքննությունը:

Մեր կարծիքով՝ հաղթահարելու համար այն իրադրությունը, որում իրավակիրառ, բայց ոչ դատական մարմիններն ստիպված են հաղթահարել իրավունքում առկա բացերն օրենսդրությամբ չնախատեսված, ոչ դատական

իրավական եղանակներով, այսինքն՝ բացառապես «իրենց ռիսկով», իրենց հայեցողությամբ, անհրաժեշտ է ընդունել, որ.

- առաջին՝ բոլոր իրավակիրառ մարմինները, որոնք իրենց գործունեության մեջ լիազորված են լրացնելու (կամ հաղթահարելու) իրավունքում առկա բացերը, կարող են բաժանված լինել երկու խմբի՝ դատական և ոչ դատական (մնացած բոլորը).
- երկրորդ՝ ոչ դատական իրավակիրառական մարմինները լիազորված են միայն հաղթահարելու օրենսդրության բացերը,
- երրորդ՝ ոչ դատական մարմինների կողմից բացերի հաղթահարման պայմաններն ու եղանակները պահանջում են համապատասխան իրավական կարգավորման ապահովում օրենսդրական մակարդակով:

Ասվածից ելնելով՝ չի կարելի, մեր կարծիքով, համաձայնել այն գիտնականների հետ, ովքեր պնդում են, որ անալոգիայի կիրառման որևէ այլ (դատականներից բացի) սահմաններ սահմանելու փորձերը (այսինքն՝ իրավունքի լրացում), այդ թվում՝ իրավունքի առանձին ինստիտուտների համար, կլինեին արհեստական և անալոգիայի բուն էությանը հակասող:



**ՄՀԵՐ ՎԱՍԻԼՅԱՆ**

«Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ,  
«ԳԱԱ փոխտնօրինության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ»

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԵՐԸ**

Իրավունքի տեսության մեջ գոյություն ունեն մեթոդաբանական բազմաթիվ մոտեցումներ, որոնք բացատրում են մարդկության քաղաքական-իրավական գործունեության մեջ տեղի ունեցող գործընթացները<sup>1</sup>: Անշուշտ, մեկ հողվածի մեջ դրանք բոլորը վերլուծել անհնար է:

Գոյություն ունեցած և այսօր գոյություն ունեցող պետությունները (ավելի քան 200) կարելի է դասակարգել ըստ տարբեր հիմքերի: Պետությունները կարելի է առանձնացնել ըստ հետևյալ հատկանիշների. 1) ըստ պետական իշխանության բնույթի, 2) ըստ ծագման եղանակի, 3) ըստ պետական իշխանության կազմակերպման ձևի ու եղանակի, 4) ըստ պետական իշխանության իրականացման մեթոդների:

Մ. Դյուվերթեն ժամանակին կարծում էր, թե ժամանակակից ռեժիմների հիմնարար դասակարգման համար բազա է տարբերությունը միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի միջև:

Ժամանակակից ազատական-ժողովրդավարական համակարգում որոշիչ նշանակություն ունի իշխանությունների տարանջատման բնույթը, ինչն էլ բնորոշում է իշխանային ինստիտուտների հարաբերությունը, լիազորությունները և գործառույթները:

Պետականության գործունեությունն այս տեսանկյան տակ վերլուծելով՝ կարելի է նկատել ոչ միայն Հայաստանում, այլև ողջ աշխարհում աստիճանաբար ավելի թափ առնող միտում. գործադիր իշխանությունը ձեռք է բերում ավելի մեծ և լայն իրավասություններ և լիազորություններ:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ գործադիր իշխանության հզորացումը պայմանավոր-

ված է մի ամբողջ շարք գործոններով: Դրա հետ մեկտեղ՝ գործադիր իշխանության նման հզորացումը պահանջում է իշխանության ինչպես օրենսդիր, այնպես էլ դատական թևի գործունեության սրբագրում: Ինչպես միշտ՝ իշխանության գործունեության տարրերի ուղղությունների չափանիշ է ժողովրդավարության առկայությունը կամ բացակայությունը:

Որպես պետականության դասակարգման չափանիշ՝ օգտագործվում են նաև ունիտար հիերարխիկ իշխանության կազմակերպման և գործունեության ձևերը: Ըստ այդ չափանիշի՝ քաղաքական համակարգերի տեսության մեջ ընդունված է տարբերակել ավտորիտար և տոտալիտար ռեժիմներ, որոնց ներսում գոյություն ունի երանգային ձևափոխումների մի ամբողջ զամմա: Այսպես՝ տոտալիտարիզմի շրջանակներում առանձնացվում են բոլշևիկյան, մարքսիստական և ֆաշիստական ռեժիմները: Պետական իշխանության իրականացման ավտորիտար ձևի մեջ կարելի է տարբերակել իշխանային ուղղաձիգի կազմակերպման առումով ավելի կամ պակաս դաժանության կամ «ազատականության» ռեժիմներ: Մասնավորապես՝ Ա.Պինչետի ռազմաքաղաքական դիկտատուրան տարբերվում էր Չոն Դու Հվանի ավտորիտար ռեժիմից այնքանով, որ ավելի բացահայտ կերպով էր հենվում ռեպրեսիվ ապարատի վրա: Պատմության մեջ գոյություն են ունեցել նաև «հարակից» ռեժիմներ, տարբեր (օրինակ՝ Ֆրանկոյի ռեժիմը Իսպանիայում):

Բնութագրելով պետականության ձևերի զարգացումը՝ Վ.Ե. Չիրկինն առաջարկում է առանձնացնել դրանց երեք տարատեսակ՝ մոնիստական, սեգմենտար և պլյուրալիստական: Մոնիստական (միապետական) պետական ձևը բնութագրվում է հասարակության պետական

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>1</sup> Сѣн Синюков В. Н. Российская правовая система. М., 2010, с. 84-85.

կառավարման գործում դերերի բաժանման բացակայությամբ: Պետական իշխանությունը գտնվում է մեկ կենտրոնի ձեռքերում՝ անկախ այն հանգամանքից՝ ինչպիսին է այդ կենտրոնը՝ բացարձակ միապետ, թե՛ պետաքաղաքական բյուրոկրատիա:

Սեզմենտար պետական ձևը միջանկյալ երևույթ է մոնիստական և պյուրալիստական ձևերի միջև և ենթադրում է դերերի որոշակի բաժանում հասարակությանը ղեկավարող պետական տարբեր ինստիտուտների միջև: Տվյալ դեպքում բացակայում է փոխադարձ հակակշիռների և զսպիչների համակարգի տարրերի «հավասարակշռությունը»:

Պյուրալիստական պետական ձևը բնորոշվում է իշխանությունների տարանջատմամբ՝ փոխադարձ հակակշիռների և զսպիչների առկայությամբ հանդերձ, ինչպես նաև պետության մասշտաբով, և տեղական մակարդակով իշխանության մի քանի կենտրոնի գոյությամբ<sup>2</sup>:

Այնուամենայնիվ, որքան էլ բազմազան լինեն մեթոդաբանական մոտեցումները հասարակության ու պետության պատմական զարգացման և գործունեության բացատրման առումով, անանց նշանակություն ունեն, ըստ ամենայնի, երկու համակարգ: Դրանցից առաջինը մարդկության զարգացումը դիտարկում է պարուրածև շարժման տեսքով, միասնական ուղի միայն մանրամասներով տարբերվող ընդհանուր փուլեր: Այսինքն՝ զարգացման տվյալ գործընթացը կառուցվածքայնորեն բաժանվում է առանձին, համեմատաբար ինքնուրույն փուլերի, որոնցից յուրաքանչյուրը կապված է նախորդի հետ: «Ոչ մի բնագավառում,– գրում է Կ.Մարքսը,– չի կարող տեղի ունենալ իր գոյության նախորդ ձևերը չբացառող որևէ շարժում»<sup>3</sup>: Ինչպես նշում է Հեգելը՝ զարգացման յուրաքանչյուր նոր աստիճան «բարձրացնում է նախորդ բովանդակության ողջ զանգվածը և ոչ միայն ոչինչ չի թողնում իր հետևում, այլև իր

հետ տանում է ողջ ձեռքբերվածը, հարստացնում ու խթանում է ինքն իրեն»<sup>4</sup>:

Հաջորդականության պահպանումը և առաջընթացության հաստատումը, դիալեկտիկորեն զուգորդվելով, որպես արդյունք՝ հանգեցնում է ցիկլայնության<sup>5</sup>:

Գերիշխման և ենթարկման պատմական ձևերի վերլուծության ընթացքում բացառման բացառում մենք տեսնում ենք նաև Կ. Մարքսի աշխատություններում: «Ակզբում դա ուղղակի անձնական կախում է. ստրուկի՝ ստրկատերից, գյուղացու՝ կալվածատերից: Այնուհետև գալիս է անձնական անկախությունը՝ հիմնված ունեցվածքային կախվածության վրա...»<sup>6</sup>: Այնուհետև «յուրաքանչյուրի ազատ զարգացումը բոլորի ազատ զարգացման պայման է»<sup>7</sup>: Կ. Մարքսի համաձայն՝ հասարակությունը կարող է բարձրանալ զարգացման այդ աստիճանին միայն հետկապիտալիստական կամ կոմունիստական դարաշրջանում, որը կդառնա պատմականորեն հասունացած բոլոր խնդիրների, այդ թվում նաև՝ գերիշխման և ենթակայության հարցի լուծում: Պատմական մատերիալիզմը, Ֆ. Էնգելսի համաձայն, այնպիսի հայացք է «համաշխարհային պատմության ընթացքին, որը պատմական բոլոր կարևոր անցքերի վերջնական պատճառն ու որոշիչ ուժը տեսնում է հասարակության տնտեսական զարգացման, արտադրության եղանակի և բաշխման ձևերի փոփոխման, այստեղից բխող հասարակության տարբեր դասակարգերի բաժանման և այդ դասակարգերի պայքարի մեջ»<sup>8</sup>:

Տնտեսական անհրաժեշտությունը, ինչպես դա հասկանում են մարքսիստները, իր համար ճամփա է բացում միայն «վերջնական հաշվով» միջանկյալ բազմաթիվ օղակների և միջնորդվածությունների՝ բնական պայմանների, ռասայական հարաբերությունների, դրսից գործող պատմական ազդեցությունների միջոցով և այլն: «Մենք ինքներս ենք ստեղծում մեր պատմությունը,– ընդգծում է Ֆ. Էնգելսը,– սակայն, նախ

<sup>2</sup> Стэн Чирикин В. Е. Элементы сравнительного государственоведения.– М., 1994, с. 23.

<sup>3</sup> Стэн Маркс К., Энгельс Ф. Соч., т. 4, с. 297.

<sup>4</sup> Стэн Гегель Г.В. Наука логики. Т. 3, М., 1972, с. 306-397.

<sup>5</sup> Стэн նույն տեղում, էջ 307:

<sup>6</sup> Стэн Маркс К., Энгельс Ф. Соч., т. 46, ч. 1, с. 101.

<sup>7</sup> Стэн Маркс К., Энгельс Ф. Соч., т. 4, с. 447.

<sup>8</sup> Стэн Маркс К., Энгельс Ф. Соч., т. 22, с. 306.

և առաջ, մենք դա անում ենք միանգամայն որոշակի նախադրյալների և պայմանների դեպքում: Դրանց թվում տնտեսականները, վերջնական հաշվով՝ մարդկանց մեջ ձևավորված ավանդույթները ևս խաղում են զգալի, թեև ոչ որոշիչ դեր»<sup>9</sup>:

Պատմության մատերիալիստական ըմբռնման հետ է կապված մարքսիզմում սոցիալ-տնտեսական կացութաձևերի տեսությունը, որի հենքի վրա էլ իրականացվում են մարդկային պատմության տիպաբանությունը և պարբերացումը, այսինքն՝ հասարակության և պետության առանձին տիպերի առանձնացումը և դրանց հերթափոխման հաջորդականության պարզաբանումը:

Երկրորդ ուղղությունը ճանաչողական գործընթացում անվանվում է քաղաքակրթական: Քաղաքակրթությունները նման չեն մեկը մյուսին, նրանք ծնվում են և վերանում, երբ մեկը գալիս է փոխարինելու մյուսին:

Քաղաքակրթական մոտեցումը տալիս է իրավիճակի այլ պատկեր: Ընթանում է ոչ թե նախկին (կոմունիստական) արտադրական հարաբերությունների ոչնչացում, ոչ թե կապիտալիզմի վերականգնում, այլ՝ քաղաքակրթության ոչնչի չնմանվող մշակույթի ոչնչացում, և այդ ոչնչացումը գրեթե կապ չունի սոցիալական հասարակարգի հետ, քանզի Արևմուտքի և Արևելքի հակամարտությունը պայմանականորեն ծագել է 13-րդ դարում, երբ Հռոմի պապն արշավանք հայտարարեց «անհավատների դեմ»:

Դա նշանակում է, որ մենք շատ ավելի զուսպ պետք է լինենք մեզանում պետության և հասարակության վերաշինման արևմտյան փորձն ու ավանդույթները արմատավորելու կոչերում:

Այս մոտեցման կողմնակիցները ելնում են այն հանգամանքից, որ 21-րդ դարի սկզբում հարկ չկա ճգնել ժողովրդավարական ինստիտուտներ հորինելու համար, քանի որ գոյություն ունեն ժողովրդավարության համամարդկային արժեքներ, այսպես կոչված՝ «ընդհանուր-քաղաքակրթական մակարդակ»:

Ոչ այնքան վաղ անցյալում մեր երկրում ժողովրդավարության վերաբերյալ իշխում էր դասակարգային և պատմական մոտեցում՝ այն բոլոր աղավաղումներով, որոնք բնորոշ էին տոտալիտար կոմունիստական ռեժիմի պատռնական գաղափարախոսությանը: Այժմ մարքսիզմ-լենինիզմի նախկին կողմնակիցների մեջ գերակշռում է այդ երևույթի գնահատումը համամարդկային արժեքների տեսանկյունից: Բավականին շատ է խոսվում քաղաքակրթական մոտեցման մասին, որը հակադրվում է ֆորմացիոն կամ դասակարգային հայեցակարգին: Նման մոտեցումը պետք է նախորդի կոնկրետ քաղաքակրթությունների, ազգային մշակույթների հետազոտմանը: Դա թույլ է տալիս բացահայտել տարբեր երկրների պատմական ուղու առանձնահատկությունները, դրանց քաղաքական ավանդույթների ինքնատիպությունը, պետական հաստատությունների յուրօրինակությունը և այլն: Այդ հատկությունները, ինչպես հայտնի է, անտեսում էր դոգմատիկ պատմական մատերիալիզմը, ինչն աղքատացնում էր գիտական հետազոտումների ներկայանալը: Սակայն գիտնականներից ոմանք շատ յուրահատուկ ձևով են հասկանում «քաղաքակրթական մոտեցումը»՝ նկատի ունենալով մերձեցումն ընդհանուր, համամարդկային, համաշխարհային քաղաքակրթությանը: Ընդ որում՝ ենթադրվում է, թե այդպիսի քաղաքակրթությունը ոչ թե տարբեր ժողովուրդների մշակույթների հանրագումար է կամ ունիվերսալ բնույթ ձեռք բերող դրանց պատմական փորձի թնջուկ, այլ՝ ավարտուն, ձևավորված հասարակական հարաբերությունների, մշակույթի, ավանդույթների համակարգ<sup>10</sup>:

Այդպիսի մոտեցումը չափազանց կասկածելի է: Ժողովրդավարության արևմտյան մոդելների մեծ մասը չի կարող անմիջականորեն, մաքուր տեսքով իրագործվել մեզանում: Բնականաբար, հազիվ թե նպատակահարմար է հեծանիվ հորինել, սակայն ուղիները դեպի ապագայի «ավտոմեքենաները» պետք է մանրակրկիտ նախապատրաստվեն: Ադապտացման, հարմարեցման գործնառն խիստ նրբին

<sup>9</sup> Տե՛ս Маркс К., Энгельс Ф. Соч., т. 37, с. 395.

<sup>10</sup> Տե՛ս Мартышин О. В. Несколько тезисов о перспективах правового государства в России: «Государство и право», 1996, N5, с. 4.

է: Խոսքն ինչպես պետականության հիմնական ատրիբուտների, այնպես էլ դրանց ուղեկցող գործոնների ձևափոխման մասին է:

Այսպես՝ քաղաքացիական հասարակության հիմքն է կազմում մասնավոր սեփականությունը, որը կարող է գոյանալ միայն սեփականաշնորհման արդյունքով: Վերջինս նշանակում է պետական իշխանության արմատական վերափոխում և կառավարման ապարատը անջատում է երկրի ողջ սեփականության տնօրինումից:

Ներկայիս սոցիալ-իրավական պետությունները նախապես անցել են ազատական-ժողովրդավարական զարգացման փուլ: Հենց այդ ժամանակաշրջանում են ծագել, զարգացել և բավականաչափ արմատացել հասարակական կյանքին պետական միջամտության սահմանափակման և անձի իրավունքների գերակայության ապահովման սահմանադրական մեխանիզմները, անհատական ու տնտեսական ազատության երաշխիքները: Հետոտալիտար պետականության զարգացման նման հաջորդականություն ապահովելն անհնար է: Ամեն ինչ պետք է անել միանգամից: Տոտալիտարիզմից ձեռքազատվելու համար անհրաժեշտ է էականորեն սահմանափակել պետական միջամտությունը, «կաշկանդել» պետության ձեռքերն իրավունքով և կանոնակարգել անհատական ազատության և սեփականության երաշխիքները: Միևնույն ժամանակ՝ արդիականության ընդհանուր քաղաքական համատեքստը պահանջում է իրականացնել բնակչության սոցիալ-տնտեսական և այլ տեսակի պաշտպանություն: Այն հասարակության մեջ, որի անդամների մեծ մասն այլասերված է երկարատև պետական հովանավորչությամբ, զրկված է սեփականությունից և տնտեսական ակտիվության հմտություններից այդ հասարակության մեջ պետությամբ սահմանափակ կողմից իր սոցիալական գործառություններում թերանալը հղի է լուրջ քաղաքական ցնցումներով:

Որպես արդյունք՝ մենք տեսնում ենք ազատական-ժողովրդավարական-իրավական և սո-

ցիալական պետության սկզբունքների մշտական հակամարտություն<sup>11</sup>:

Այսպիսով՝ հանձնարարականները, որոնք տալիս է Կ. Պոպպերը «Բաց հասարակությունը և նրա թշնամիները» գրքում,<sup>12</sup> որոշակիորեն հակասում են մեր փորձին: Այս կապակցությամբ տեղին է հիշել Հեգելին, ով գրում էր. «Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր սեփական պետական կառուցվածքը: Անգլիականը անգլիացիների պետական կառուցվածքն է, և եթե մենք ցանկանայինք այն տալ պրուսացիներին, ապա կլինեք նույնքան անհեթեթ, որքան պրուսական պետությունը թուրքերին տալու որոշումը: Յուրաքանչյուր պետական կառուցվածք միմիայն արդյունք է, հոչակագիր է տվյալ ժողովրդի ազգային ոգու և նրա ոգու գիտակցության զարգացման աստիճանի մասին: Այդ զարգացումն անհրաժեշտաբար պահանջում է առաջընթաց շարժում, որում ոչ մի աստիճան չպետք է բաց թողնվի: Չի կարելի ժամանակից առաջ անցնել, ժամանակը միշտ էլ ներկա է»<sup>13</sup>:

Այստեղից եզրահանգում. չի կարելի դեպքերից առաջ ընկնել, թռչել զարգացման աստիճանների վրայով: Նման բան Հայաստանի պատմության մեջ արդեն եղել է: Հայաստանի պետության ծառի վրա համաշխարհային չափորոշիչների պատվաստումը չպիտի լինի չգիտակցված, անվերապահ:

Այսպես մենք ապրում ենք ոչ միայն ֆորմացիոն համակարգի ճգնաժամ, ոչ միայն սոցիալիստական պետականության ճգնաժամ, այլև՝ ընդհանրապես գլոբալիստական ճգնաժամ:

Այսպես, օրինակ՝ ռուս գիտնական Է.Գ. Կոչետովը համարում է, թե ժամանակակից հետինդուստրիալ մոդելը մտել է իր ավարտական փուլ, մարում են դրա շարժիչ ուժերը, ընթանում է լոկ ինքնարտադրություն լավագույնս մշակված մեխանիզմների շրջանակներում՝ մեխանիզմների, որոնք անընդհատ ահագնացող տեմպերով խժռում են մտավոր, ֆինանսական, արտադրական, բնական և այլ ռեսուրսներ:

<sup>11</sup> Տե՛ս Варламов Н. В. Посттоталитаризм: проблемы теории. В сб. Политические проблемы теории государства. М., 1993, с. 16-28.

<sup>12</sup> Տե՛ս Поппер К. Открытое общество и его враги. Т. 1: Чары Платона. М., 1992, с. 7-17.

<sup>13</sup> Տե՛ս Гегель Г. В. Философия права. М., 1990, с. 458-469.

Մարդկությունը գամված է հենց իր կողմից ստեղծված Մոդրնի... Միջազգային հանրությունն աստիճանաբար սկսում է հասկանալ, որ դիմանալ այդ աստիճան ջլատող բեռնվածությանն արդեն չի կարող: Սկսվեց գլոբալ հետինդուստրիալ մեքենայից ձերբազատվելու տանջալի գործընթացը: Հետինդուստրիալ բազայի վրա հասունանում է նորագույն մոդել, որն ունակ է թեթևացնելու մարդկության ճակատագիրը: Պարադոքսն այն է, որ հետինդուստրիալ մեխանիզմների աճի բարձր տեմպերը պատանդի կարգավիճակում են պահում իր առավել վառ ներկայացուցիչներին (մոտ 20 առավել զարգացած երկիր): Եվ բացառված չէ, որ այդ հիմնախնդիրների պրիզման կստիպի զարգացած երկրներին այլ կերպ նայել նորացվող Ռուսաստանին<sup>14</sup>:

Ինչպես համարում է հետազոտողների մեծ մասը՝ ժամանակակից պատմության ներկայիս

ճգնաժամը վաղորդք կանխագուշակված նոր մարդկության ծնունդ է: Կ. Մ. Կանտորը, մասնավորապես, համարում է, որ այն, ինչ եղել է մեզանում 70 տարիների ընթացքում, երկունքով, արյան և կեղտի մեջ ծնված, ողբերգական ու ֆարսային, տոտալիտար և ժողովրդավարական, հերոսական ու հանցագործ, գեղեցիկ և այլանդակ համաշխարհային պատմության դարաշրջան էր: Դա անխուսափելի էր և կարող էր լինել միայն այնպիսին, ինչպիսին եղել է<sup>15</sup>: Մեր կարծիքով՝ նույնքան անխուսափելի էր այդ վեհ և խղճուկ դարաշրջանի ավարտն այն տեսքով, որով կատարվեց: Վրա հասած խառնակ «անցումային» ժամանակն ի զորու չէ ամբողջապես վանելու իր մեջից խորհրդային անցյալը: Չի ձերբազատվի դրանից հասարակությունը նաև քվազիկապիտալիստական կայունացումից հետո՝ որքան էլ, որ դա շարունակվի:



<sup>14</sup> Տե՛ս Կочетов Э. Г. Неоэкономика – новая цивилизационная модель экономического развития и Россия // Мировая экономика и международные отношения. 1997, N1, с. 70-86.

<sup>15</sup> Տե՛ս Кантор К. М. Социокультурные причины российской катастрофы // Полис, 1996, N3, с. 135-145; Пантин И. К. К логике теоретического становления современного социализма // Полис, 1996, N4, с. 106-118.



**ՆԱՐԵԿ ԱՐԳԱՐՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՈԱԶՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ  
ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՀԱՐԱԲԵՐԱՎՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Մասնավոր ռազմական ընկերությունների աշխատակիցներին ոչ իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ անվանում են վարձկաններ կամ 21-րդ դարի վարձկաններ: Եթե որոշակի իրավիճակում համեմատությունը կարող է մասնակիորեն տեղին լինել, ապա միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում վերոգրյալ տերմինների միջև հավասարության նշան դնելը, մեր կարծիքով, սխալ մոտեցման արդյունք է:

Վարձկանները պատմությանը հայտնի են դեռ հնագույն ժամանակներից: Պունիկյան պատերազմների ժամանակ նրանք կազմում էին Կարթագենի բանակի հիմքը<sup>1</sup>: Հասթինգսի ճակատամարտում վարձկանների հետ առնչվեցին նաև անգլիացիները, որտեղ պահանջվում էին խաչադեղի կիրառման հատուկ հմտություններ: Ժամանակակից զինված ընդհարումները նույնպես չեն անցնում առանց վարձու զինվորականների օգնության: Այսպես՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի ընթացքում ադրբեջանական կողմի կազմում մարտնչում էին աֆղանացի մոջահեդներ<sup>2</sup> և այլ ազգերի ներկայացուցիչներ: Մասնավոր ռազմական ընկերությունները համեմատաբար նոր երևույթ են պատերազմական գործողությունների ընթացքում: Առաջին կազմակերպությունները, որոնք դասվում են մասնավոր ռազմական ընկերությունների շարքը, թատերաբեմում հայտնվեցին 1960-ական թվականներին<sup>3</sup>, իսկ զանգվածա-

յին տարածումը հաջորդեց սառը պատերազմի ավարտին:

Մասնավոր ռազմական ընկերությունների տարածումը ամբողջ աշխարհում և նրանց կողմից ռազմական ընդհարումների ընթացքում իրականացվող տարատեսակ գործունեությունն առաջ բերեցին բազմաթիվ խնդիրներ, որոնցից հիմնականն այդ կազմակերպությունների անձնակազմի կարգավիճակի խնդիրն էր: Եթե մասնավոր անվտանգության ոլորտում աշխատող ընկերությունների անձնակազմը բազմիցս տարբեր հեղինակների կողմից դասվել է քաղաքացիական անձանց շարքը, ապա ռազմական ընդհարումներին մասնակցող կամ կողմերից մեկին օժանդակող կազմակերպությունների դեպքում նրանց անձնակազմի կարգավիճակի հարցը դեռևս անորոշ է մնում:

Սույն հոդվածի նպատակն է հոդվածի վերնագրում նշված երկու կատեգորիայի իրավական կարգավիճակները դիտարկել միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից, մասնավորապես՝ միջազգային բնույթի զինված ընդհարումների շրջանակներում: Այս նշումը կարևորվում է հատկապես այն պատճառով, որ վարձկան հասկացությունը, խորթ լինելով Միջազգային մարդասիրական իրավունքին, ոչ միջազգային բնույթի ընդհարումների ընթացքում, այնուամենայնիվ, դիտարկվում է նաև այդ ենթատեքստում որոշ միջազգային-իրավական փաստաթղթերում<sup>4</sup>:

<sup>1</sup> Н.Е. Бузин. Право силы против силы права: частные военные компании в современных вооруженных конфликтах, с. 66.  
<sup>2</sup> С. Минасян. Соотношение статусов комбатантов, наемников, беженцев и ВПЛ в карабахском конфликте, 21-й ВЕК, N 1(3), 2006, с. 118.  
<sup>3</sup> Ian D. Jefferies “Private Military Companies – A Positive Role to Play in Today’s International System”, p.106 [https://procon.bg/system/files/01.4.08\\_jefferies.pdf](https://procon.bg/system/files/01.4.08_jefferies.pdf)  
<sup>4</sup> Международная конвенция о борьбе с вербовкой, использованием, финансированием и обучением наемников от 4 декабря 1989г., UNGA Res. A/RES/44/34, вступила в силу 20 октября 2001г.

Միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից՝ վարձկանությունը հանցագործություն է: Հարկ է նշել, որ միջազգային բնույթի զինված ընդհարումներին վերաբերող չորս Ժնևյան կոնվենցիաներից և 1-ին լրացուցիչ արձանագրությունից ընդամենը մեկ հոդված է նվիրված վարձկաններին: 1-ին լրացուցիչ արձանագրության 47-րդ հոդվածը, ի թիվ այլոց, ներկայացնում է նաև այն կումուլատիվ նախապայմանները, որոնց բոլորին համապատասխանելու դեպքում անձը կարող է համարվել վարձկան: Այդ չափորոշիչները ներկայացված են հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշված է, որ վարձկան համարվում է ցանկացած անձ, որը՝

- տեղում կամ արտասահմանում հատուկ հավաքագրվել է, որպեսզի կռվի զինված ընդհարման ժամանակ.
  - փաստացի մասնակցում է ռազմական գործողություններին.
  - ռազմական գործողություններին մասնակցում է՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին ընդհարման մեջ գտնվող կողմից կամ այդ կողմի անունից տրվել է այնպիսի նյութական վարձատրության խոստում, որն էապես գերազանցում է այն վարձատրությունը, որը երաշխավորվում կամ վճարվում է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ ներառվող՝ այդ նույն դասի կոմբատանտներին.
  - ոչ ընդհարման մեջ գտնվող կողմի քաղաքացին չէ, ոչ էլ՝ ընդհարման մեջ գտնվող կողմից վերահսկվող տարածքում մշտապես բնակվող անձ.
  - չի ներառում ընդհարման մեջ գտնվող կողմի զինված ուժերի կազմի մեջ.
  - չի ուղարկվել ընդհարման մեջ գտնվող կողմ հանդիսացող պետության կողմից որպես նրա զինված ուժերի կազմի մեջ մտնող անձ՝ պաշտոնական պարտականություններ կատարելու համար:
- Նման սահմանումը և հոդվածի մեկնաբանությունները ցույց են տալիս, որ վարձկան համարվելու համար անձը պետք է համապատասխանի սահմանման մեջ նշված վեց կետից յուրաքանչյուրին: Եթե վարձկանների պարագայում դա առավել քան տրամաբանական է, ապա մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի պարագայում՝ հաճախ գրեթե անիրագործելի, ինչը վկայակոչում են մի շարք արևմտյան հեղինակներ<sup>5</sup>: Մեկ առ մեկ անդրադառնալով վերը նշված կետերին և փորձելով նույն տրամաբանությունը կիրառել նաև մասնավոր ռազմական ընկերության աշխատակցի նկատմամբ՝ իրավական տեսանկյունից կանգնում ենք անլուծելի խնդրի առջև:

Սահմանման առաջին կետում հստակ ընդգծվում է զինված ընդհարումներին մասնակցելու նպատակը, իսկ երկրորդ կետում վերահաստատվում է մասնակցությունը: Այս դեպքում առաջանում է խնդիր մասնավոր ռազմական ընկերությունների որոշ տեսակների հետ, քանի որ, իրավաբանական գրականության մեջ ամենահայտնի դասակարգման համաձայն՝ տվյալ ընկերությունները բաժանվում են 3 կատեգորիայի<sup>6</sup>, որոնցից միայն մեկի անձնակազմի գործառույթների մեջ է ռազմական գործողություններին ուղղակիորեն մասնակցությունը: Վերոնշյալը հիմք է տալիս վստահորեն նշելու, որ ռազմական խորհրդատվություն (Military consulting firms) և ռազմական օժանդակություն (Military support firms) տրամադրող ընկերությունների ներկայացուցիչները, ովքեր, ելնելով իրենց պայմանագրերով սահմանված ծառայությունների բնույթից, չեն մասնակցում ռազմական գործողություններին, չեն կարող համարվել վարձկան՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով գործող սահմանման համաձայն: Հաշվի առնելով կազմակերպությունների տոկոսային բաշխումը՝ կարելի է հստակորեն ասել, որ վերոգրյալ եզրակացությունը վերաբերում է մասնավոր ռազմական ընկերությունների ճնշող մեծամասնությանը, քանզի դրանց միայն փոքր հատվածն է իր աշխատակիցների միջոցով

<sup>5</sup> Françoise Hampson, “Mercenaries Diagnosis before prescription”, Netherlands Yearbook of International Law, Vol. 3 (1991), pp. 14-16.

<sup>6</sup> P. W. Singer. Corporate Warriors “The Rise of the Privatized Military Industry”, Ithaca, NY: Cornell University Press, 2003, p. 93

ուղղակիորեն ներգրավվում զինված բախումների:

Երրորդ կետը սակավ խնդրահարույց է: Գաղտնիք չէ, որ մասնավոր ռազմական ընկերությունների ներկայացուցիչներն իրենց ծառայություններն են կատարում վարձատրության դիմաց: Նույնքան պարզ է թվում նաև այն հանգամանքը, որ վճարումը և պայմանագրի կնքումը կատարվում են ռազմական գործողությունների մասնակից սուբյեկտի կողմից: Սակայն զինված հակամարտությունների պրակտիկան ցույց է տալիս, որ հստակ եզրակացություն կատարել բոլոր դեպքերի համար հնարավոր չէ: Այսպես՝ տխրահոշակ MPRI ընկերությունը, բազմաթիվ աղբյուրների համաձայն,<sup>7</sup> ռազմական օժանդակություն էր ցույց տալիս խորվաթական զինված ուժերին Հարավսլավիայում զինված ընդհարման ընթացքում, սակայն խորվաթական կողմը մինչ օրս հրաժարվում է ընդունել այդ փաստը, իսկ ընկերության որոշ ներկայացուցիչներ պնդում են, որ հրահանգներ ստացել են ԱՄՆ իշխանություններից<sup>8</sup>, որոնք էլ պատասխանատու էին Խորվաթիայում ընկերության գործունեության համար:

Քաղաքացիության հարցն էլ ավելի թուլացնում է հնարավոր վարձկան-մասնավոր ռազմական ընկերության ներկայացուցիչ կապը: Նման կազմակերպությունների տարատեսակ պայմանագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կազմակերպությանը կարող է անդամագրվել նաև ընդհարման մասնակից պետության քաղաքացի կամ պետության կողմից վերահսկվող տարածքում մշտական բնակություն ունեցող անձ:

Վարձկանների սահմանման մեջ նշված վերջին երկու կետի վերաբերյալ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ կետերում համեմատվող կատեգորիաների ներկայացուցիչները դրսևորում են գրեթե նույն մոտեցումը: Հազվադեպ են իրավիճակները, երբ մասնավոր ռազմական ընկերության անձնա-

կազմը ներգրավված է ընդհարման կողմերից մեկի բանակի կազմում: Հիմնականում՝ հետազոտությունները ցույց են տալիս հակառակ պատկերը, երբ կազմակերպությունն իրականացնում է իր գործառույթները պայմանագրային հիմունքներով, սակայն որևէ խնդրահարույց իրավիճակի առաջացման պարագայում հրաժարվում է տվյալ անձանց տրամադրել կոմբատանտի կարգավիճակ՝ ներկայացնելով նրանց որպես քաղաքացիական անձանց<sup>9</sup>: Նմանօրինակ փաստերն իրավունք չեն տալիս բացառելու կազմակերպության անդամների հնարավոր ինկորպորացիան ընդհարման մասնակցի զինված ուժերի կազմում, սակայն թույլ են տալիս հասկանալ ոլորտի ընդհանուր պատկերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ վարձկանների և մասնավոր ռազմական ընկերությունների աշխատակիցների կարգավիճակը նույնացնելը, մեր կարծիքով, կուպիտ սխալ է: Մասնավոր ռազմական ընկերության հետ պայմանագիր կնքող յուրաքանչյուր անձ՝ իր գործունեության բնույթից և ռազմական ընդհարման մեջ ներգրավվածությունից կախված, կարող է ստանալ տարբեր կարգավիճակներ, քաղաքացիական անձից սկսած, մինչև կոմբատանտ: Այսպիսի ընկալումը գրեթե անհնար է դարձնում հավասարության նշան դնելու հնարավորությունը երկու կատեգորիայում ընդգրկված անձանց միջև՝ միայն տեսականորեն թողնելով այդպիսի տարբերակ: Ավելին՝ վարձկան լինելը, ինչպես արդեն նշվել էր աշխատանքի սկզբում, միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից հանցագործություն չէ և միայն զրկում է անձին կոմբատանտի կարգավիճակ ստանալու հնարավորությունից, այնինչ մասնավոր ռազմական ընկերությունների բազմաթիվ անդամներ չեն էլ կատարում այնպիսի գործողություններ, որոնք նրանց հնարավորություն կտային ստանալու կոմբատանտի կարգավիճակ:

<sup>7</sup> James O'Brien, II, "Private Military Companies: An Assessment", Naval Postgraduate School, Monterey, California, 2008; p. 38  
<sup>8</sup> Interview with LTG (Ret.) Soyster in Paul de la Garza and David Adams, "Military Aid...from the Private Sector series: The War in Colombia," The Special Report, St. Petersburg Times, December 3, 2000.  
<sup>9</sup> Gilmore, Gerry J. 2004. "U.S. Firm Mourns Slain Employees." American Forces Press Service. (April 2, 2004). Accessed June 15, 2010 at <http://www.defense.gov/news/newsarticle.aspx?id=26932>

**ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
 Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի  
 պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ  
 ՀՀ արդարադատության նախարարության «Աշտարակ» նոտարական տարածք,  
 նոտարի օգնական

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ  
 ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Իրավունքի սկզբունքների էությունն առավել համակողմանի և ամբողջական ուսումնասիրելու անհրաժեշտությունը պայմանավորում է իրավունքի սկզբունքների դասակարգման հիմնախնդրին առավել խոր անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը: Իրավունքի ընդհանուր տեսության և ճյուղային իրավական համակարգում առկա են իրավունքի սկզբունքների դասակարգման բազմատեսակ դրսևորումներ: Առավել մանրակրկիտ ուսումնասիրելու համար իրավունքի սկզբունքները ենթարկվում են տարբեր դասակարգումների: Օրինակ, ըստ Մ.Ի. Բայտինի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են բարոյականի և կազմակերպարավականի, իսկ բարոյական-իրավական սկզբունքներն իրավունքի հոգևոր, բարոյական հիմքն են՝ ուղղակի ազդելով իրավունքի նորմատիվ բովանդակության վրա: Մ.Ի. Բայտինի կարծիքով՝ բարոյական սկզբունքների շարքն են դասվում ազատությունը, իրավահավասարությունը, կյանքի իրավունքը, սեփականության և մասնավոր այլ իրավունքներ, անհատի անվտանգության իրավունքը՝ որպես պետության պարտականություն և պատասխանատվություն:<sup>1</sup> Կազմակերպարավական սկզբունքներից Բայտինն առանձնացնում է, մասնավորապես, օրինականությունը, համոզելու և հարկադրելու համակցումը: Ըստ Մ. Ի. Բայտինի՝ իրավունքի բարոյական սկզբունքների հետ սերտորեն կապված՝ իրավունքի կազմակերպարավական սկզբունքները կազմում են իրավունքի կազ-

մակերպական ընթացակարգային հիմքը, կողմնորոշված են իրավունքի՝ հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչի դերով և կոչված են ապահովելու խիստ յուրահատուկ և որոշակի իրավաբանական գործառույթների կատարումը:<sup>2</sup>

Նման դիրքորոշումը, անկասկած, հիմք է տալիս մտածելու, որ իրավունքի սկզբունքների մի մասն ակամայից վերածվում է լոկ բարոյական կատեգորիաների, ինչից հետևում է, որ իրավունքի սկզբունքները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ բնական, հիմնական իրավունքներ (Մ.Ի. Բայտինի վկայակոչած՝ ազատությունը, հավասարությունը, կյանքի և սեփականության իրավունքը, անվտանգությունը, մարդը՝ որպես բարձրագույն արժեք, և այլն): Հենց այս՝ «բարոյական» կոչված իրավունքի ընդհանուր սկզբունքների խումբը, ըստ Բայտինի, այն հնարավորությունն է, որով կարելի է հաղթահարել այն բացը, որն ունի իրավունքի ձևական (ֆորմալ) ընկալումը, երբ իրավունքը հասկացվում է որպես բացառապես ձևական հատկանիշներով օժտված կատեգորիա:

Տեսաբան Վ.Ն. Կարտաշովի կարծիքով՝ ըստ իրավունքի համակարգի բաղադրատարրերի, իրավունքի սկզբունքները դասակարգվում են հետևյալ կերպ՝ իրավական-ինստիտուցիոնալ սկզբունքներ, միջինստիտուցիոնալ սկզբունքներ, իրավունքի ճյուղային սկզբունքներ, իրավունքի միջճյուղային սկզբունքներ, իրավունքի ենթաճյուղային սկզբունքներ, ազգային-իրավական համակարգի սկզբունքներ,

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

<sup>1</sup> Байтин М.И. Вопросы общей теории государства и права /Problems of General Theory of State and Law/, Саратов, СГАП 1-ое изд., 2006 г., с. 181.  
<sup>2</sup> Байтин М.И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков: микроформа) Саратов, СГАП1-ое изд., 2001 г., с 150.

առանձին իրավական սկզբունքներ, միջազգային իրավունքի սկզբունքներ:<sup>3</sup>

Իրավունքի սկզբունքների դասակարգման այս եղանակը, լինելով տարածվածներից մեկը, խորապես ամրագրվել է իրավաբանական գրականության մեջ՝ դառնալով իրավունքի սկզբունքների տարանջատման կարևոր և կիրառելի եղանակներից մեկը:

Դասակարգման մեկ այլ տարբերակ է առաջ քաշում Ս. Ե. Ֆրոլովը: Ըստ Ֆրոլովի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են համաիրավական, միջճյուղային, ճյուղային, ենթաճյուղային և առանձին իրավական ինստիտուտների սկզբունքների: Ի տարբերություն Վ.Ն. Կարտաշովի՝ Ֆրոլովն իրավական ինստիտուցիոնալ սկզբունքները, միջինստիտուցիոնալ սկզբունքները և միջազգային իրավունքի սկզբունքները ներառում է վերը թվարկված սկզբունքների խմբերի մեջ:<sup>4</sup>

Իրավունքի սկզբունքների դասակարգման հետաքրքիր մոտեցում է առաջարկում տեսաբան Ե. Վ. Սկուրկոն: Ըստ Սկուրկոյի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են հիմնարար և հասարակ-ընդհանուր իրավական սկզբունքների:<sup>5</sup> Հիմնարար սկզբունքները պարտադիր են օրենսդիր, դատական, գործադիր մարմինների, իսկ հասարակ-ընդհանուր իրավական սկզբունքները՝ միայն գործադիր իշխանության համար:<sup>6</sup>

Ըստ հասարակական հարաբերություն-

ների կարգավորման օբյեկտի և գործառույթային նշանակության՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են սոցիալ-իրավական և հատուկ իրավական սկզբունքների: Սոցիալ-իրավական սկզբունքները կոչված են կարգավորելու սոցիալական, մշակութային, տնտեսական, բարոյական և հոգևոր հասարակական հարաբերությունները: Հատուկ իրավական սկզբունքները, ի տարբերություն սոցիալ-իրավական սկզբունքների, օժտված են յուրահատկությամբ և ունեն իմպերատիվ բնույթ իրավահարաբերության ցանկացած կողմի համար:<sup>7</sup>

Ըստ նորմատիվ ակտերում ամրագրվածության՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են նորմ-սկզբունքների և իրավանորմներից դուրս գործող սկզբունքների: Նորմ-սկզբունքներն ուղղակիորեն ձևակերպվում են նորմում՝ սահմանելով նորմի ամբողջ էությունը:<sup>8</sup> Ի տարբերություն նորմ-սկզբունքների, որոնք իմպերատիվ բնույթ ունեն, իրավանորմներից դուրս գործող սկզբունքներն ուղղակի կերպով ամրագրում չեն ստանում նորմատիվ իրավական ակտերում, այլ ձևավորվում են արդեն իսկ ամրագրված նորմ-սկզբունքների հենքի վրա:<sup>9</sup>

Ըստ գործողության տարածքի՝ իրավունքի սկզբունքները տարանջատվում են վերպետական և ներպետական սկզբունքների: Վերպետական իրավական սկզբունքների հստակ օ-

<sup>3</sup> Фролов С. Е. Принципы права (Вопросы теории и методологии): Автореф. дисс. канд. наук.: Н. Новгород, 2011 г.  
<sup>4</sup> Ֆրոլովն ազգային-իրավական համակարգի սկզբունքների թվին էր դասում իրավական ինստիտուցիոնալ սկզբունքները, միջինստիտուցիոնալ սկզբունքները, որոնք համարում էր ազգային-իրավական համակարգի սկզբունքներից կախյալ սկզբունքներ, իսկ միջազգային իրավունքի սկզբունքները համարում էր համամարդկային (համաքաղաքակրթական) իրավական սկզբունքների մեջ ներառված սկզբունքներ: Նա համամարդկային (համաքաղաքակրթական) սկզբունքների թվին էր դասում հումանիզմի, իրավահավասարության, ազատության, ժողովրդավարության, արդարության, ներքին անվտանգության, օրինականության սկզբունքները:  
<sup>5</sup> Скурко Е.В. Принципы права в современном нормативном правопонимании, М.: Юрлитинформ, 2008 г. с. 89.  
<sup>6</sup> Ըստ Սկուրկոյի՝ հիմնական (հիմնարար) են համարվում իրավահավասարության, ժողովրդավարության, օրինականության սկզբունքները և այլն:  
<sup>7</sup> Պետության և իրավունքի տեսության գիտական գրականության մեջ առավել լայն տարածված մոտեցման համաձայն՝ հատուկ իրավական սկզբունքները բաժանվում են ընդհանուր, միջճյուղային, ճյուղային և առանձին իրավական սկզբունքների խմբերի:  
<sup>8</sup> Նորմ-սկզբունքի վառ օրինակ է անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրումը ՀՀ Սահմանադրությունում (Հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով): Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածում:  
<sup>9</sup> Նորմերից դուրս բերված սկզբունքի ակնառու օրինակ է սպանության համար նախատեսված իմպերատիվ նորմը, ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդված: Այս նորմն ուղղակիորեն կապված է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ կյանքի իրավունքի հետ (Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի):

րինակ են միջազգային իրավունքի սկզբունքները, Եվրոպական Միության իրավական ակտերը<sup>10</sup>: Ներպետական իրավական սկզբունքներն ամրագրված են Սահմանադրություններում, օրենքներում, այլ իրավական ակտերում:

Ըստ կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են համընդհանուր (միջազգային, համամարդկային) սկզբունքների, իրավական ընտանիքների կամ տարածաշրջանային-մայրցամաքային իրավական սկզբունքների, ազգային (ներպետական) իրավական սկզբունքների: Համընդհանուր (միջազգային, համամարդկային) սկզբունքները ոչ միայն իրավահարաբերությունների ռեգուլյատիվ դեր են կատարում, այլ նաև ներպետական իրավական սկզբունքների ձևավորման աղբյուր են: Այդ սկզբունքներն ուղղակի և ան-

միջական կերպով ամրագրվում են ներպետական օրենսդրական համակարգում:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել այն, որ, չնայած իրավունքի սկզբունքների դասակարգման խնդրի բավականին խոր հետազոտված լինելուն, այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրավական գործընթացներում ի հայտ են գալիս այնպիսի հարցադրումներ, որոնք պահանջում են իրավունքի սկզբունքների դասակարգման առավել հստակ մոտեցումներ: Իրավունքի սկզբունքների դասակարգման խնդիրը կարևորագույններից մեկն է թե՛ գիտական, թե՛ գործնական առումով, ուստի պահանջում է տեսական վերահիմնաստավորում և զարգացում, որով կապահովվի իրավունքի սկզբունքների հիմնական դերի արդյունավետ ապահովումն իրավական համակարգում:



<sup>10</sup> Միջազգային իրավունքի սկզբունքները պարտադիր են միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների համար, օրինակ՝ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության, ուժի սպառնալիքի, ազգերի ինքնորոշման սկզբունքները և այլն: Եվրոպական Միության կողմից ընդունված ակտերը վերաբերական են միայն ԵՄ անդամ պետությունների համար: ԵՄ իրավական սկզբունքներից են միության իրավունքի գերակայությունն ազգային իրավունքի նկատմամբ, իրավաբանական անվտանգությունը, որոշակիության սկզբունքը:



**ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի  
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՄԵՂՔԻ ԶԵՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ**

Սույն հոդվածում հեղինակը, հիմք ընդունելով տեսության մեջ և պրակտիկայում ձևավորված հիմնադրույթները, ներկայացրել է մեղքի տարբեր ձևերի սահմանազատման ելակետերը, դրանց նշանակությունը: Ուսումնասիրվել և նշվել են նաև հանցափորձի դեպքում՝ համապատասխանաբար դրա ավարտված և չավարտված տեսակների համատեքստում, սուբյեկտիվ կողմի վերհանման միջոցները: Աշխատության մեջ շեշտադրումն առավելապես կատարվել է անուղղակի դիտավորությունը հանցավոր ինքնավստահությունից սահմանազատելու վրա՝ դիտարկելով մեղքի ձևերի կամային հատկանիշի բաղադրատարրերը:

**Բանալի բառեր.** սուբյեկտիվ կողմ, մեղքի ձևեր, անուղղակի դիտավորություն, հանցավոր ինքնավստահություն, հանցափորձ:

**НЕРСЕС ЗЕЙНАЛЯН**

Студент юридического факультета  
Французского Университета в Армении

**РАЗГРАНИЧЕНИЕ ФОРМ ВИНЫ**

Настоящая статья посвящена изучению ключевых критериев разграничения форм вины и уяснению их значения. В процессе исследования были определены и проанализированы приёмы установления признаков субъективной стороны покушения на преступление. Особое внимание в статье уделяется разграничению косвенного умысла и легкомыслия на основе анализа содержания компонентов волевого момента разнавидности указанных форм вины.

**Ключевые слова:** субъективная сторона, формы вины, косвенный умысел, легкомыслие, покушение на преступление.

**NERSES ZEYNALYAN**

Student of the Faculty of Law French University in Armenia

**DISTINCTION BETWEEN FORMS OF GUILT**

The article presents the key criterions for distinguishing of forms of guilt, the meaning, based on views stated in law theory and practice. The author mentioned the methods of revealing the subjective aspect in criminal attempt, particularly, in the context of its types. Special attention is paid to the delineation of indirect intention and levity on the basis of analysis of contextual components of different forms of guilt.

**Keywords:** subjective aspect, forms of guilt, indirect intention, levity, criminal attempt.

**ՆՈՐԱՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի  
իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

**ԴՐՈՐԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն հոդվածի շրջանակներում հեղինակն ուսումնասիրել է պրոբացիոն ծառայության դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Հեղինակն անդրադարձ է կատարել նաև մի շարք իրավաբան-գիտնականների կողմից առաջարկված տեսակետներին, ինչի շնորհիվ վեր են հանվել պրոբացիա հասկացությունը, պրոբացիայի շահառու հասկացությունը, պրոբացիոն ծառայությունների ներդրման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի ընթացքում, կիրառելով իրավահամեմատական մեթոդը, կատարվել են համեմատություններ Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում գործող պրոբացիոն ծառայությունների միջև, ինչը թույլ է տվել վեր հանել պրոբացիոն ծառայության ներդրման առավել արդյունավետ մեթոդը:

Բացի այդ՝ հեղինակի կողմից բացահայտվել են պրոբացիայի կիրառման ընթացքում առաջացող տեսական և գործնական հիմնախնդիրները և առաջարկվել են դրանց հիմնավորված լուծումներ:

**Բանալի բառեր.** քրեական պատասխանատվություն, պրոբացիա, հանցագործների ուղղում և վերասոցիալականացում:

**НОРАЙР СИМОНЯН**

Студент третьего курса юридического факультета  
Французского Университета в Армении

**ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ ПРОБАЦИОННЫХ СЛУЖБ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Автор статьи исследовал роль и значение службы пробации в правовой системе Республики Армения. Автор также сделал обращение на точки зрения ряда ученых-юристов, в результате чего выявил концепцию пробации и по отношению к кому она применяется; необходимость пробационных услуг в Республике Армения.

В процессе работы, применяя компаративный метод, были сравнены пробационные службы Армении и других стран, что дает возможность выявить самый эффективный метод вложения пробационных служб.

Кроме того, автором были раскрыты теоретические и практические проблемы в процессе применения пробации и предложены обоснованные решения.

**Ключевые слова:** уголовное наказание, пробация, исправление и пересоциализация осужденных.

**NORAYR SIMONYAN**

Third year student of French University in Armenia of the  
department of law

**PROSPECTIVES OF IMPLEMENTATION OF PROBATION SERVICES IN THE REPUBLIC OF ARMENIA**

Within the framework of this article the author studied the role and the importance of probation service in the legal system of the Republic of Armenia. The author has addressed the viewpoints of numerous lawyers – scientists, which resulted in the revelation of the definition of probation, the beneficiary of probation, as well as the importance of the introduction of probation service in the Republic of Armenia.

By using the comparative method during the study, the author realized a number of comparisons between probation services in the Republic of Armenia and different other countries, which allowed to disclose the most effective method of the introduction of probation service.

Moreover, a number of theoretical and practical issues concerning the application of probation service have been revealed and the reasonable solutions of the same have been presented.

**Keywords:** criminal responsibility, probation, treatment of criminals, resocialization.

**ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածում հեղինակը քննարկել է անձի անվտանգության ապահովման հետ կապված քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի հիմնահարցը:

Հոդվածում հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի՝ անձի, հասարակության և պետության անվտանգությունը, այդ թվում՝ քրեաիրավական ապահովումը, դարձել է ժամանակի իրավագիտության տեսության ու պրակտիկայի հիմնախնդիրներից մեկը և, հետևաբար՝ պահանջում է համարժեք լուծումները, ինչը կատարել է հեղինակը:

**Բանալի բառեր.** անձ, հասարակություն, պետություն, անվտանգություն, քրեաիրավական պաշտպանություն, տեսություն, պրակտիկա:

**ВАРДГЕС САРГСЯН**

Соискатель

**ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ КАК ПРИОРИТЕТ ТЕОРИИ И ПРАКТИКИ УГОЛОВНОГО ПРАВА**

В данной статье автор рассмотрел проблемы теории и практики уголовного права, связанные с обеспечением безопасности личности.

В статье обосновывается тот подход, согласно которому безопасность личности, общества и государства, в том числе уголовно-правовое обеспечение, стала одной из проблем теории и практики современной юриспруденции и, следовательно, требует адекватных решений.

**Ключевые слова:** личность, общество, государство, безопасность, уголовно-правовая защита, теория, практика.

**Vardges Sargsyan**

Research applicant

**ENSURING SECURITY OF PERSON AS PRIORITY OF THEORY AND PRACTICE OF CRIMINAL LAW**

In this article, the author has examined the problems of theory and practice of criminal law, related to the security of person.

The article justifies the approach according to which the security of person, society and state, including the criminal-law ensuring, has become one of the problems of the theory and practice of the modern jurisprudence and, therefore, requires adequate solutions.

**Keywords:** person, society, state, security, criminal-law protection, theory, practice.

\* \* \*

**ԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Իրավագիտության մագիստրոս

**ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածը նվիրված է 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքով մարդու այն իրավունքներին, որոնք ենթարկվել են առավել արմատական փոփոխության: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են մարդու արժանապատվության, անձնական ազատության իրավունքները և անմեղության կանխավարկածի սկզբունքը:

**Բանալի բառեր.** մարդու իրավունքներ, մարդու արժանապատվություն, անձնական ազատություն, անմեղության կանխավարկած:

**АНУШ МАРКАРЯН**

Магистр юридических наук

**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО СТАТУСА ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ИЗМЕНЕННОЙ  
КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Статья посвящена тем правам человека, которые в результате конституционных изменений, внесенных в Республике Армения в 2015 году, претерпели более радикальные изменения. В частности, были рассмотрены права на человеческое достоинство, личную свободу и презумпция невиновности.

**Ключевые слова:** права человека, человеческое достоинство, свобода личности, презумпция невиновности.

**ANUSH MARGARYAN**

Master of Legal Studies

**THE MAIN PROBLEMS OF THE LEGAL STATUS OF A PERSON IN THE CONTEXT OF THE  
AMENDED CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA**

The article is devoted to the human rights, that have undergone more radical changes in the result of the constitutional amendments of the Republic of Armenia in 2015. Particularly, rights to human dignity, rights to personal liberty and the presumption of innocence have been studied.

**Keywords:** human rights, human dignity, personal liberty, presumption of innocence.

\* \* \*

**ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սահմանադրականության հիմնախնդիրը՝ իշխանության սահմանափակման և իրավունքի գերակայության հաստատման տեսանկյունից, վերջին հարյուրամյակների ընթացքում մշտապես գտնվել է գիտական հետաքրքրությունների և պետականաշինության կիզակետում: Սույն հոդվածում ներկայացվող հարցերն ուշագրավ տեղ են զբաղեցնում սահմանադրական իրավունքի գիտության ու գործնական ոլորտում: Սահմանադրական մշտադիտարկման գլխավոր խնդիրը երկրում սահմանադրական օրինականության հաստատումն ու սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարումն է, ինչը և դարձել է սույն վերլուծության հիմնական առարկան: Նշված հարցերն առավել կարևորվում են սահմանադրական բարեփոխումներից հետո:

**Բանալի բառեր.** մշտադիտարկում, սահմանադրականություն, սահմանադրական ինստիտուտ, Սահմանադրություն, արժեհամակարգ:

**АРМАН СТЕПАНЯН**

Аспирант Российско-Армянского Университета

**ПРОБЛЕМА УТВЕРЖДЕНИЯ КОНСТИТУЦИОНАЛИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Вопрос о конституционности в плане ограничения власти и верховенства права всегда был в центре внимания научных интересов и государствообразования на протяжении последних столетий. Представленные в данной статье вопросы, как правовая категория, занимают ключевое место в науке конституционного права и практике. Основная задача конституционного мониторинга – утверждение конституционности и преодоление конституционного дефицита, которое стало главным предметом этого анализа. Указанные вопросы приобретают особую значимость после конституционных поправок.

**Ключевые слова:** мониторинг, конституционализм, конституционный институт, Конституция, ценностная система.

**ARMAN STEPANYAN**

PhD student, Russian-Armenian University

**THE ISSUE OF IMPLEMENTING CONSTITUTIONALISM IN THE REPUBLIC OF ARMENIA**

The issue of constitutionality in terms of limiting power and the rule of law has always been at the center of attention of scientific interests and state-building over the past centuries. The questions presented in this article, as a legal category, occupy a key place in the science of constitutional law and practice. The main task of the constitutional monitoring is the approval of constitutionality and the overcoming of the constitutional deficit, which became the main subject of this analysis. These issues acquire special significance after the constitutional amendments.

**Keywords:** Monitoring, constitutionalism, constitutional institution, constitution, value system.

\* \* \*

**ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի  
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՍՏԻՑԻԱՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Սույն հոդվածում հեղինակը, հիմք ընդունելով տեսության և պրակտիկայում ձևավորված հիմնադրույթները, ներկայացրել է քաղաքական կոալիցիաների նշանակությունը և դերը ՀՀ նոր կառավարման համակարգի համատեքստում: Հոդվածի շրջանակներում քննարկվել են կոալիցիոն համակարգերի տեսակները: Հոդվածի մեջ շեշտադրումը հիմնականում կատարվել է կոալիցիոն համաձայնագրերի ստորագրման և վերացման հարցերին, թե ինչպիսի՞ ազդեցություն ունեն այդ գործընթացները երկրի սահմանադրաիրավական կարգի վրա, և կատարվել է համապատասխան առաջարկ:

**Բանալի բառեր.** կոալիցիա, պառլամենտական համակարգ, Ընտրական օրենսգիրք, պլյուրալիստական-մեծամասնական, Ազգային ժողով:

**АРТУР СИМОНЯН**

Студент III курса юридического факультета  
Французского Университета в Армении

**ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКИХ КОАЛИЦИЙ В СИСТЕМЕ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ РА**

В данной статье автор, основываясь на сформированные принципы теории и практики, представил значение политических коалиций и их роль в аспекте новой системы правления в РА. В рамках статьи обсуждены типы коалиционных систем. В статье, в основном, было уделено внимание вопросам подписания и аннулирования коалиционных соглашений, на то, какое влияние имеют эти процессы на конституционно-правовой строй страны, и было выдвинуто соответствующее предложение.

**Ключевые слова:** коалиция, парламентская система, избирательный закон, Национальное собрание, плюралистическо-мажорный.

**ARTUR SIMONYAN**

Student of the Faculty of Law  
French University in Armenia

**TRAITS OF POLITICAL COALITIONS IN THE PARLIAMENTARIAN GOVERNANCE SYSTEM OF RA**

In this article the author presents meaning of political coalitions and it's role in the new governance system of Republic of Armenia. In the frame of this article author presents types of political coalitions. The main accentuation of the article is signing and abolition processes of coalition pacts and it's impact on the constitutional regime. The author presents appropriate suggestion.

**Keywords:** Coalition, parliamentarian system, electoral code, pluralistic-majority, parliament.

**ԱՐՏԱՇԵՍ ԽԱԼԱԹՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿԳԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածն անդրադառնում է Հայաստանի կուսակցական համակարգի զարգացման տեսլականին՝ կատարված սահմանադրական բարեփոխումների համատեքստում՝ քննական վերլուծության ենթարկելով հայաստանյան կուսակցությունների կառուցակարգային, կազմակերպական, գաղափարախոսական և այլ խնդիրները: Ուսումնասիրության առարկայի առավել արդյունավետ և համակողմանի քննարկման նպատակով՝ հեղինակի կողմից լուսաբանվում է կուսակցաշինության արտասահմանյան փորձը, դրա հետ կապված խնդրահարույց հարցերը հատկապես խորհրդարանական կառավարման ձևով երկրներում: Առանձնապես խոսվում է ընտրական համակարգերի և կուսակցաշինության վրա դրանց ազդեցության վերաբերյալ: Կատարված վերլուծության արդյունքով հեղինակի կողմից տրվում է Հայաստանի առկա կուսակցական համակարգի իրավաքաղաքական գնահատականը, և մատնանշվում են այն ուղիները, որոնք թույլ կտան համապատասխանեցնել հայաստանյան քաղաքական ուժերի կառուցվածքն ու գործունեությունը սահմանադրական բարեփոխումների հետևանքով ձևավորված սահմանադրաիրավական իրողություններին:

**Բանալի բառեր.** սահմանադրական բարեփոխումներ, կուսակցություններ, խորհրդարանական կառավարման համակարգ, ընտրական համակարգ, նախագահ:

**АРТАШЕС ХАЛАТЯН**

Аспирант Ереванского государственного университета

**ПРОБЛЕМА СТАНОВЛЕНИЯ ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ В УСЛОВИЯХ НОВОЙ  
КОНСТИТУЦИОННОЙ РЕАЛЬНОСТИ**

В данной статье обсуждается проблема развития партийной системы Армении в контексте конституционных реформ. В частности, автором подвергнуты критическому анализу такие насущные вопросы партийной деятельности, как институциональное становление партий, их внутренняя организационная структура, наличие у них общественно значимой идеологии и т.д. С целью наиболее продуктивного и разностороннего представления предмета исследования, автором освещается иностранный опыт партийного строительства с акцентом на страны с парламентской системой правления. В статье проанализированы также избирательные системы и их влияние на партийное строительство. На основе проведенного исследования автором дана политико-правовая оценка партийной системы Армении и представлены возможные пути, с помощью которых можно обеспечить соответствие структуры и деятельности армянских политических сил новым конституционно-правовым реалиям.

**Ключевые слова:** конституционные реформы, партии, парламентская система правления, избирательная система, президент.

**ARTASHES KHALATYAN**

PhD student of the Yerevan State University

**THE ISSUE OF DEVELOPMENT OF THE PARTY SYSTEM IN THE CONTEXT OF NEW  
CONSTITUTIONAL REALITY**

The article discusses the problem of developmet of the party system of Armenia in the context of constitutional reforms. Particularly, the author critically analyzes relevant problems of party politics, such as institutional foundation of parties, their internal structure, existence of viobale ideology etc. With the aim of more effective and comprehensive presentation of the research subject international best practice of party formation is analyzed with the focus on countries with parliamentary systems of government. In the article the issue of electoral systems and their impact on party politics is also tauched upon. Based on the research performed the author makes the overall legal and politicalassessmentof the party system of Armenia and identifies the ways of approximation of structure and activity of Armenian political parties to new constitutional reality.

**Keywords:** constitutional reforms, parties, parliamentary system of government, electoral system, president.



**ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկությունների և հատկապես հարևան պետությունների հետ հարաբերությունների վերլուծությունը հուշում են, որ հայոց պետականության կազմակերպումը և գործունեությունը պետք է տարբերվի մեկ այլ միջավայրից ընդօրինակված պետության մոդելից: Այս հանգամանքը մեզ թելադրում է լրացուցիչ պահանջներ ներակայացնել մեր ազգային պետությանը, պետական շինարարության հիմքում պետական ապարատի կազմակերպման ու գործունեության հանրաճանաչ սկզբունքների հետ դնել պաշտպանունակության սկզբունքը: Պաշտպանունակության սկզբունքով կառուցված սոցիալ-իրավական պետությունը երկրի անվտանգության ապահովման ու պաշտպանության գործառույթն իրականացնում է ոչ միայն սովորական, ավանդական ձևերով, այլև դրա էության մեջ՝ որպես հատկություն դրված է պաշտպանունակությունը: Առանց այդ հատկության՝ պետականակերտության հաջողությունները մեզ համար ընդամենը խաբկանք են:

**Բանալի բառեր.** պետական տարածք, ռազմավարական ռեսուրս, աշխարհաքաղաքականություն, աշխարհաքաղաքական վարքագիծ, ազգային շահ, ազգային անվտանգություն, պաշտպանության գործառույթ, պետականակերտություն, պաշտպանունակության սկզբունք:

**ЛУСИНЕ БАРСЕГЯН**

соискатель ученой степени Академии государственного управления РА

**ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РА И ОСОБЕННЫЕ ТРЕБОВАНИЕ, ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ К КОНСТИТУЦИОННОМУ СТРОИТЕЛЬСТВУ ГОСУДАРСТВА**

Анализ геополитических особенностей РА показывает, что организация и деятельность армянского государства должны различаться от модели государства, подражаемого из другого геополитического окружения. Это обстоятельство настоятельно диктует предъявить дополнительные требования к национальному государству. В основу государственного строительства, наряду с другими общепризнанными принципами построения и деятельности государства, необходимо ставить также принцип обороноспособности. Построенное на этом принципе социально-правовое государство функцию защиты и обеспечения безопасности страны осуществляет не только обычными формами, но и в его сущности внедрена обороноспособность как свойство. Без этого свойства достижения государственного строительства для нас являются лишь самообманом.

**Ключевые слова:** территория, стратегический ресурс, геополитика, геополитическое поведение, национальный интерес, национальная безопасность, функция защиты, государственное строительство, принцип обороноспособности.

**LUSINE BARSEGHYAN**

Correspondence Degree Seeker of the Public Administration Academy of RA

**ARMENIA'S GEOPOLITICAL CHARACTERISTICS AND THE REQUIREMENTS FOR THE CONSTRUCTION OF A CONSTITUTIONAL STATE**

The analysis of the relations with Armenia's geopolitical characteristics and especially neighbouring countries, suggests that the organization and activities of the Armenian statehood should be different from the model copied from another state. This circumstance dictates us to additional requirements of our national government, the principle of defense together with the core principles of organization of the state apparatus and state-building activities. Social and legal state functions of ensuring the security and protection of defense principle carries not only the usual traditional ways, but in its essence, as the property, is the defensiveness. Without the success of state creation this quality is an illusion for us.

**Keywords:** public space, strategic asset, geopolitics, geo-political behavior, national interest, national security, defense function, state creation, protective principle.

**ՆԱՐԵԿ ՀԱՎՈՐՅԱԼ**

ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ,  
հայցորդ

**ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հոդվածում հեղինակը քննարկում է իրավունքում բացերի լրացման, հաղթահարման և վերացման հասկացության հետ կապված հարցերը:

Այս կապակցությամբ հեղինակը հատկապես շեշտադրում է «իրավունքի անալոգիայի» և «օրենքի անալոգիայի» իրավական կատեգորիաների միջոցով իրավական բացերի լրացման, հաղթահարման և վերացման խնդիրները:

**Բանալի բառեր.** իրավական բաց, բացի հաղթահարում, լրացում և վերացում, իրավունքի անալոգիա, օրենքի անալոգիա:

**НАРЕК АКОПЯН**

Институт философии, социологии и права НАН,  
соискатель

**ПОНЯТИЕ ДОПОЛНЕНИЯ, ПРЕОДОЛЕНИЯ И УСТРАНЕНИЯ ПРОБЕЛОВ В ПРАВЕ**

В настоящей статье автор рассматривает вопросы, связанные с понятием дополнения, преодоления и устранения пробелов в праве.

В связи с этим автор особенно акцентирует внимание на задачах дополнения, преодоления и устранения правовых пробелов посредством правовых категорий «аналогия права» и «аналогия закона»

**Ключевые слова:** правовой пробел, преодоление пробела, дополнение и устранение, аналогия права, аналогия закона.

**NAREK HAKOBYAN**

Nas Institute of Philosophy, Sociology and Law,  
Aspirant

**THE CONCEPT OF FILLING, OVERCOMING AND ELIMINATING OF GAPS IN LAW**

This article illustrates the issues of filling, overcoming and eliminating gaps in law. In this regard the author refers to the concepts of “analogy in statute” and “analogy in law” as means for filling, overcoming and eliminating gaps in the law.

**Keywords:** gap in the law, to overcome a gap in the law, fill in a gap in the law, eliminate a gap in the law, analogy in law, analogy in statute.

\* \* \*

**ՄՀԵՐ ՎԱՍԻԼՅԱՆ**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության  
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ,

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ**

Հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է պետությունների տիպաբանության ժամանակակից հայեցակարգերի էությունը և առանձնահատկությունները: Հոդվածում բացահայտվել են պետության ժամանակակից մոտեցումների մեթոդաբանությունը և դասակարգման չափորոշիչները: Դասակարգման չափորոշիչների հարցում հեղինակը ցուցաբերել է ուրույն մոտեցում՝ ինտեգրալ իրավահասկացության և պետականագիտության տեսանկյունից:

Հեղինակը հոդվածում անդրադարձել է գոյություն ունեցած և այսօր գոյություն ունեցող պետություն-

ների դասակարգման հիմքերին, հասարակության և պետության պատմական զարգացման և գործունեության փուլերին:

**Բանալի բառեր.** պետություն, տիպաբանություն, պատմական, ֆորմացիոն-տնտեսական, քաղաքակրթական, ինտեգրալ իրավահասկացություն, պետականագիտություն:

**МГЕР ВАСИЛЯН**

Главный специалист отдела юридической консультации  
Юридического департамента администрации  
Национального Собрания Республики Армения,  
соискатель Института философии, социологии и  
права Национальной Академии Наук Республики Армения

**СОВРЕМЕННЫЕ КОНЦЕПЦИИ ТИПОЛОГИИ ГОСУДАРСТВ**

В статье автор обстоятельно изучает сущности и особенности концепции по типологии государств на современном этапе развития. В статье раскрыты современные подходы к типологии государства и критерии классификации государств. В основе классификации государств лежит авторский подход в аспекте интегрального правопонимания и государствоведения.

**Ключевые слова:** государство, типология, исторический, формационно-экономический, цивилизационный, интегральное правопонимание, государствоведение.

**MHER VASILYAN**

Chief specialist of the Division of Legal advises of the Juridical department  
of the National Assembly of the Republic of Armenia  
Applicant of the Philosopy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

**MODERN CONCEPTS OF STATE TYPOLOGIES**

The author circumstantially examines the nature and characteristics of state typology conception at the present stage of development. The article disclosed the methodology of modernization of the state and the classification criteria. As regards to the criteria for classification the author’s approach is unique towards the integral the legal concept and state perspective.

**Keywords:** state, typology, historical, formational-economical, civilizational, legal concept.

\* \* \*

**ՆԱՐԵԿ ԱՐԳԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի և վարձկանների իրավական կարգավիճակների հարաբերակցության վերլուծությանը միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում: Հոդվածում վերլուծվում է «վարձկան» տերմինի սահմանումը, ուսումնասիրվում է մասնավոր ռազմական ընկերությունների անձնակազմի կողմից վարձկանի կարգավիճակ ստանալու հնարավորությունը:

**Բանալի բառեր.** մասնավոր ռազմական ընկերություն, վարձկան, Միջազգային մարդասիրական իրավունք, իրավական կարգավիճակ:

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 99 2017

**НАРЕК АБГАРЯН**

Аспирант Российско-Армянского (Славянского) университета

**СООТНОШЕНИЕ ПРАВОВЫХ СТАТУСОВ СОТРУДНИКОВ ЧАСТНЫХ ВОЕННЫХ КОМПАНИЙ И НАЕМНИКОВ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА**

Настоящая статья посвящена анализу соотношения правового статуса сотрудников частных военных компаний и наемников в контексте Международного гуманитарного права. В статье анализируется определение термина “наемник” и рассматривается возможность получения статуса наемника сотрудниками частных военных компаний.

**Ключевые слова:** частная военная компания, наемник, международное гуманитарное право, правовой статус

**NAREK ABGARYAN**

PhD Student at the Russian-Armenian (Slavonic) University

**THE RATIO OF LEGAL STATUSES OF PRIVATE MILITARY COMPANIES' EMPLOYEES AND MERCENARIES IN THE CONTEXT OF INTERNATIONAL HUMANITARIAN LAW**

The current article is dedicated to the analysis of the ratio of legal statuses of private military companies' employees and mercenaries in the context of International Humanitarian Law. The definition of the term “mercenary” and the possibility of getting mercenary status by the employees of the private military companies are analyzed in the article.

**Keywords:** Private Military Company, Mercenary, International Humanitarian Law, Legal Status.

\* \* \*

**ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ**

«Գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ,  
«Արդարադատության նախարարության «Աշտարակ» նոտարական տարածք,  
նոտարի օգնական»

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածը նվիրված է իրավունքի սկզբունքների դասակարգման դասական և արդիական մոտեցումների համեմատական վերլուծությանը: Հոդվածում հղում է կատարվել իրավագիտության մեջ մեծ ներդրում ունեցող այնպիսի հեղինակների մոտեցումներին, ինչպիսիք են Մ.Ի. Բայտինը, Վ.Ն. Կարտաշովը, Ս.Ե. Ֆրոլովը: Հոդվածում անդրադարձ է կատարվել իրավունքի սկզբունքների դասակարգման մի շարք մոտեցումներին: Ըստ հեղինակի՝ իրավունքի սկզբունքների հստակ տարանջատումը կարող է ապահովել իրավունքի սկզբունքների ճշգրիտ բնորոշումը՝ հնարավորություն տալով կատարելու եզրահանգումներ, որոնց շնորհիվ հստակ դասակարգում ունեցող իրավունքի սկզբունքները, ներդրվելով օրենսդրական համակարգում, կամրացնեն պետության և հասարակության, պետության և անհատի կապը:

**Բանալի բառեր.** իրավունքի սկզբունքներ, իրավունքի սկզբունքների դասակարգում, միջնյուղային սկզբունքներ, իրավունքի ճյուղային սկզբունքներ, իրավահարաբերություն:

**ЛИАНА МАЛХАСЯН**

Аспирант государственно-правового отдела Института философии, социологии и права Национальной академии наук РА, нотариальная территория “Аштарак”, министерство юстиции РА, помощник нотариуса

**СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КЛАССИЧЕСКОЙ И СОВРЕМЕННОЙ КЛАССИФИКАЦИЙ  
ПРИНЦИПОВ ПРАВА**

Эта статья посвящена сравнительному анализу классической и современной классификаций принципов права. В статье дается ссылка на подходы юристов, имеющих большой вклад в юриспруденции, таких как М.И. Байтин, В.Н. Карташов, С.Е. Фролов. В статье затрагивается ряд различных подходов к классификации принципов права. По мнению автора, четкое различие между правовыми принципами может обеспечить точную характеристику принципов права, позволяя сделать выводы, в результате чего четкое различие классификации принципов права, введенных в законодательную систему, укрепят неразрывную связь между государством и обществом, государством и личностью.

**Ключевые слова:** принципы права, классификация принципов права, межотраслевые принципы права, отраслевые принципы права, правоотношение.

**LIANA MALKHASYAN**

PhD of The Department of State and Legal Studies of the Institute of Philosophy, Sociology and Law of National Academy of Sciences RA, Ministry of Justice RA of Notary Territory “Ashtarak”, Notary Assistant

**THE COMPARATIVE ANALYSIS OF CLASSICAL AND CONTEMPORARY APPROACHES OF THE  
CLASSIFICATION OF THE PRINCIPLES OF LAW**

This article is devoted to the comparative analysis of classical and contemporary approaches of the classification of the principles of law. The approaches of authors, who have great contribution in the jurisprudence, such as M.I. Baytin, V.N. Kardashov, S.E. Frolov were also considered in the article. This article touches upon a number of approaches to classification principles of law. According to the author the clear differentiation of the principles of law can provide the precise definition of law principles, giving an opportunity to make conclusions, as a result of which the law principles, that have a precise classification, being put into the legislative system, will strengthen the indissoluble bond between the state and the society, between the state and the individual.

**Keywords:** principles of law, classification of the principles of law, cross-cutting principles of law, branch principles of law, a legal relationship.

**ՀՀ ՂԱՏԱՆԻՍՏՐԱՏՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել [orinakanutyun@prosecutor.am](mailto:orinakanutyun@prosecutor.am) հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**